



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ՊՐՈՍԵԿՅՈՒՐ ԳԵՆԵՐԱԼԻ ՊՐՈՍԵԿՅՈՒՐ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 131 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱՂԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՒԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 20.09.2022թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 6.75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| |
|---|
| Գոռ Հովհաննիսյան Խնդիր սկսնակ ուսանողի համար, քրեական իրավունք «Ծխելը կարող է մահացու լինել» 3 |
| Գուրգեն Քոթանջյան, Սաթենիկ Անդրեասյան Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելու հանցակազմին առնչվող որոշ հարցեր՝ նոր քրեական օրենսգրքի համատեքստում 12 |
| Սերգեյ Բերբերյան Խաբեությունը՝ քննչական տակտիկամ, թե՛ հակաիրավական արարք (Հասկացությունը և թույլատրելիությունը) 18 |

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| |
|---|
| Անի Խուրշուդյան Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքում առկա որոշ սահմանափակումների իրավաչափությունը 25 |
| Արմեն Շուքրոյան Սահմանադրական զարգացումը Հայաստանի պետականության պայմաններում (առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների ժամանակաշրջանում) 31 |
| Արմեն Սմբատյան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դերը քաղաքական միավորների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության հարցում 39 |
| Նորիկ Շահնազարյան Ժամանակակից սահմանադրության հասկացությունը և առանձնահատկությունները 48 |

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| |
|--|
| Անուշ Մովսիսյան Պետական ծառայությունը, դասակարգումը և փոխհարաբերությունները հանրային ծառայության մյուս տեսակների հետ 53 |
|--|

ԱՌՈՂՋԱԳԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| |
|--|
| Վիկտորյա Հակոբջանյան Պետության պատասխանատվությունը առողջության պահպանման իրավունքի իրացման գործում 59 |
|--|

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| |
|--|
| Эрна Айриян Международные договоры Армении со странами ЕС о защите иностранных инвестиций в свете решения Суда ЕС по делу Achmea 65 |
|--|

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Նահապետ Սուքիասյան Արհեստական բանականությունը և դրա իրավական կարգավորման որոշ հարցերը 72 |
|---|

ՍԵՂՄԱԳՐԵՐ

| |
|--|
| Սեղմագրեր / Абстракты / Abstracts 79 |
|--|

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| |
|---|
| ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 92 |
|---|

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ

Հագենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

ԽՆԴԻՐ ՍԿՍՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՅԱՄԱՐ - ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ «ԾԵՆԵԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՅԱՑՈՒ ԼԻՆԵԼ»

Ռ-ն ընկերների հետ պոկեր է խաղում իր սիրելի սրճարանում: Քանի որ նա լավ խաղալ չգիտի, ու այդ պատճառով նրա բոլոր բլեֆները ճանաչելի են խաղընկերների համար, նա երեք անգամ անընդմեջ պարտվում է: Հիասթափված ու ներվայնացած՝ *Ռ-ն* մոտենում է բարին և պատվիրում մի սառը գարեջուր:

Լարված ներվերը հանգստացնելու համար նա սիգարետ է ծխում, թեև շատ լավ գիտի, որ ամբողջ սրճարանում ծխելը խստիվ արգելված է: Բայց դա *Ռ-ին* չի հետաքրքրում, որովհետև նա կարծում է, թե «վերին աստիճանի լարվածության» այդ վիճակում ոչ ոք չի կարող իրեն արգելել մի անվնաս սիգարետ ծխելը: Այրվող սիգարետն անփութորեն աջ ձեռքում պահած՝ *Ռ-ն* խորասուզված մտածում է այն մասին, թե ինչպես կարող է հաջորդ խաղափուլում հետ բերել իրեն հրատապ կերպով հարկավոր տարված գումարը: Ու երբ նա մտամոլոր պարզում է աջ ձեռքը պատվիրած գարեջուրը վերցնելու համար, պատահաբար այրում է *Ն-ի* բաճկոնը, որը բարի մոտ կիպ նստած էր *Ռ-ի* կողքը: Երբ *Ն-ն* տեսնում է իր բաճկոնի վրա առաջացած ծակը, կատաղում է ու գոռում է *Ռ-ի* վրա, թե նա փչացրեց իր բաճկոնը, ու թե ինչ է նրա խելքին փչել ծխել սրճարանում. ծխախոտի ծուխը վնասակար է առողջության համար, հատկապես իր՝ ասթմա ունեցողի համար:

Ռ-ն ամենևին չի պատրաստվում ըմբռնումով մոտենալ *Ն-ի*՝ իր կարծիքով բոլորովին անամոթ արձագանքին: *Ն-ի* հետ ընդհարումը *Ռ-ի* համար շատ հարմար առիթ է իր կուտակված գայրույթը *Ն-ի* գլխին թափելու համար: Բայց նա չի ակնկալում, որ *Ն-ի* կողմից նույնպես հակազդեցություն կլինի: Այդ պատճառով նա ծխախոտի ծուխը՝ միախառնված թքի խոնավ մասնիկ-

ների հետ, հատուկ փչում է *Ն-ի* դեմքին: Ի պատասխան *Ն-ի* այն դիտողությանը, որ վերջ տա դրան, *Ռ-ն* ասում է, թե ինքը կդադարեցնի, երբ ինքը կուզի, ու նորից ծուխը փչում է նրա դեմքին: *Ն-ի* մոտ սկսվում է հագի ուժեղ նոպա, նա հագիվ է շնչում՝ կարծես օդը չի հերիքում: Երբ *Ռ-ն* սիգարետը նորից տանում է բերանը, որպեսզի նոր «հարձակում» սկսի, *Ն-ն* արագ բռնում է նրա կոկորդն ու սեղմում: Թեև *Ն-ն* գիտակցում է, որ իր այդպիսի արձագանքը գուցե «չափից դուրս է», և որ ինքը կարող է իր համեմատ զգալիորեն փոքրամարմին *Ռ-ին* ուղղակի մի կողմ հրել, բայց նա ուզում է *Ռ-ին* ցույց տալ, թե ինչ է զգում մարդը, երբ օդը չի հերիքում: *Ռ-ն* վախենում է իր կյանքի համար, մանավանդ որ ինքը մկանուտ *Ն-ի* համեմատ զգալիորեն փոքրամարմին է: *Ն-ն* գոռում է, որ բաց կթողնի *Ռ-ի* կոկորդը, եթե *Ռ-ն* նշան անի, որ կչքվի սրճարանից:

Բայց կատաղած *Ռ-ն* չի պատրաստվում հեռանալ սրճարանից, մանավանդ որ նա մտավախություն ունի, որ իր ընկերներն իրեն վախկոտի տեղ կդնեն: *Ն-ից* ազատվելու համար *Ռ-ն* *Ն-ի* համար տեսանելի կերպով բացում է իր ծալովի դանակը՝ 7,5 սմ երկարությամբ շեղքով, և փորձում այն խրել *Ն-ի* ոտքը, բայց չի կարողանում հասնել ոտքին: Դրա համար նա դանակը հետևի կողմից մխրճում է *Ն-ի* մեջքը՝ գիտակցելով, որ դա կարող է առաջացնել կյանքի համար վտանգավոր վնասվածքներ, բայց վերջին հաշվով համաձայն է դրա հետ: Դանակի հարվածից *Ն-ն* տապալվում է: Սրճարանի անձնակազմի կողմից կանչված շտապ օգնությունը տեղ հասնելուն պես կարողանում է արձանագրել միայն *Ն-ի* մահը:

Ինչ հանցանք է կատարել Ռ-ն ըստ ՀՀ ՔՐՕ-ի:՝ Պետք չէ անդրադառնալ ՀՀ ՔՐՕ 155-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

¹ Խոսքը 2021 թ. մայիսի 5-ին ընդունված նոր քրեական օրենսգրքի մասին է, որն ուժի մեջ է մտնելու 2022 թ. հուլիսի 1-ին:

րդ հոդ. 2-րդ մասին և հնարավոր հանցափորձին: Եթե քրեական հետապնդման համար անհրաժեշտ է տուժողի դիմումը, ապա ելնել նրանից, որ այդ դիմումը ներկայացված է:

Համառոտ պարզաբանում:

Որպեսզի անձը ենթարկվի քրեական պատասխանատվության, պետք է **(1)** կատարած լինի ՀՀ ՔրՕ հատուկ մասում նկարագրված **արարք**, որը **(2) հակահրավական** է (այսինքն՝ արդարացված չէ որևէ հիմքով), և **(3)** նա գործել է **մեղավորությամբ** (այսինքն՝ չկան նրա մեղքը բացառող հիմքեր):² Եվ դա **նյութական** հանցակազմ ունեցող **դիտավորյալ ավարտված** հանցագործությունների դեպքում պետք է պարզել հետևյալ սխեմայով.

I. Փաստակազմը

Անձի կատարած արարքը պետք է համապատասխանի քրեական օրենքով նկարագրված հանցավոր արարքի հատկանիշներին, այն է՝

1. Օբյեկտիվ փաստակազմը

ա) վրա է հասել օրենքով նկարագրված **հետևանքը**

բ) անձը կատարել է որոշակի **գործողություն**

գ) առաջացած հետևանքի ու նրա գործողության միջև կա **պատճառական կապ** (ըստ **համարժեքության տեսության** (*conditio sine qua non բանաձև*) = *եթե պատկերացնենք, որ անձն իր արարքը չի կատարել, ապա հետևանքն իր կոնկրետ տեսքով կոնկրետ պահին վրա չէր հասնի*)

դ) այդ հետևանքն **օբյեկտիվորեն մեղսագրելի** է նրան, այն է՝

(1) իր գործողությամբ անձն ստեղծել է **հակահրավական վտանգ**,

(2) հենց այդ վտանգն էլ **իրականացել է օրենքով արգելված հետևանքում:**

2. Սուբյեկտիվ փաստակազմը

Դիտավորություն = իրավանորմի փաստակազմն իրականացնելու գիտակցությունն ու կամքը:³

II. Հակահրավականությունը

Անձի արարքը հակահրավական է, եթե արդարացված չէ որևէ արդարացնող հիմքով, այն է՝ անհրաժեշտ պաշտպանությամբ, *արարքի հակահրավականությունը բացառող* ծայրահեղ անհրաժեշտությամբ կլն:

III. Մեղքը

Արարքը կատարված է մեղավորությամբ, եթե չկան անձի մեղքը բացառող հանգամանքներ, այն է՝ անձն անմեղսունակ չէ (մանկահասակության, հոգեկան հիվանդության, հարբածության և այլ պատճառներով), չի գործել *մեղքը բացառող* ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կլն:

Խնդրի լուծման կառուցվածքը

Ա. ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասը

1. ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի փաստակազմը

- 1. Օբյեկտիվ փաստակազմը
 - ա) Օրենքով նախատեսված հետևանքը
 - բ) Արարքը
 - գ) Պատճառականությունը
 - դ) Օբյեկտիվ մեղսագրումը

2. Սուբյեկտիվ փաստակազմը

II. Ռ-ի արարքի հակահրավականությունը

1. Անհրաժեշտ պաշտպանության վիճակը *Ռ-ի* արարքում

ա) Անհրաժեշտ պաշտպանության վիճակը *Ն-ի* արարքում

*Պրոքլեմ*⁴ ծխախոտի ծուխն ուրիշի դեմքին փչելն իբրև անկարևոր մանրուք: Ուտնձգության առկայությունը

բ) Պաշտպանական գործողությունը *Ն-ի* արարքում

2. Պաշտպանական գործողությունը *Ռ-ի* արարքում

ա) Պաշտպանական գործողության անհրաժեշտությունը

*Պրոքլեմ*⁵ անզեն մարդու դեմ դանակ կիրառելը

բ) Պաշտպանական գործողության սոցիալ-էթիկական սահմանափակումը

² Սա մենք անվանում ենք **հանցագործության եռանդամ կառուցվածք** (փաստակազմ, հակահրավականություն, մեղք): Հանցագործության քառանդամ կառուցվածքը (հանցագործության օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ և սուբյեկտ) հնացած մոտեցում է:

³ Անզգուշությամբ կատարված հանցագործություններն ստուգվում են բոլորովին ուրիշ սխեմայով:

Պրոբլեմ՝ անհրաժեշտ պաշտպանության սադրանքը

III. Ռ-ի մեղքը

IV. Արդյունքը

Բ. ՀՀ ՔրՕ 159-րդ հոդվածը

Գ. ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասի 17-րդ կետը (դանակի հարվածը)

Դ. ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետը (ծխախոտի ծուխը Ն-ի դեմքին փչելը)

I. Փաստակազմը

1. Օբյեկտիվ փաստակազմը

Պրոբլեմ՝ սոցիալական աղեկավատության շեմը: Կարճատև պասիվ ծխելը իբրև առողջությանը պատճառված վնաս

2. Սուբյեկտիվ փաստակազմը

II. Հակահրավականությունն ու մեղքը

III. Արդյունքը

Ե. ՀՀ ՔրՕ 264-րդ հոդ. 1-ին մասը

Զ. Վերջնական արդյունքն ու մրցակցությունը

ԼՈՒԾՈՒՄ

Ա. ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասը

Ռ-ն կարող է Ն-ի մեջքին դանակով հարվածելու միջոցով կատարած լինել սպանություն՝ ըստ ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի:

1. ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի փաստակազմը

1. Օբյեկտիվ փաստակազմը

ա) Օրենքով նախատեսված հետևանքը

Ն-ն՝ մեկ ուրիշ մարդ, մահացել է, այն է՝ զրկվել է կյանքից:

բ) Արարքը

Ռ-ն դանակով հարվածել է Ն-ի մեջքին:

գ) Պատճառականությունը

Ռ-ի արարքը, այն է՝ դանակով հարվածը, պետք է պատճառական եղած լինի Ն-ի մահվան համար: Ըստ էքվիվալենտության (համարժեքության) տեսության՝ **պատճառական է ցանկացած պայման, առանց որի հետևանքն իր կոնկրետ տեսքով վրա չէր հասնի**: Ըստ այդմ՝ պատճառականության ստուգման ելակետն այն հարցն է, թե արդյոք հետևանքն իր կոնկրետ տեսքով վրա կհասնի նաև այն ժամանակ, երբ հանցա-

վորը ոչինչ արած չլիներ: Միայն երբ ժխտվում է այս ենթադրությունը (այսինքն՝ հետևանքն իր կոնկրետ տեսքով վրա չէր հասնի), այդ դեպքում է արարքը հետևանքի համար պատճառական:

Եթե Ռ-ն դանակով չհարվածել է Ն-ի մեջքին, ապա Ն-ն դրանով պատճառված վնասվածքից չէր մահանա: Հետևաբար, դանակով հարվածը Ն-ի մահվան համար մի պայման էր, առանց որի Ն-ի մահը կոնկրետ պահին իր հենց այդ տեսքով (= սրճարանում դանակի հարվածից) վրա չէր հասնի: Ուստի առկա է պատճառականություն Ռ-ի կողմից դանակով հարվածելու ու Ն-ի մահվան միջև:

դ) Օբյեկտիվ մեղսագրումը

Ն-ի մահը պետք է նաև օբյեկտիվորեն մեղսագրելի լինի Ռ-ին: Օբյեկտիվորեն մեղսագրելի է հետևանքն այն դեպքում, երբ

(1) *հանցավորն իր արարքով ստեղծել է հակահրավական վրանգ,*

(2) *որն էլ իրականացել է օրենքով արգելված հետևանքում:*

Դանակի հարվածի միջոցով Ռ-ն հակահրավական վտանգ է ստեղծել մի իրավական բարիքի՝ Ն-ի կյանքի համար : Օրենքով արգելված այդ վտանգն իրականություն է դարձել Ն-ի մահվան մեջ: Հետևաբար, վրա հասած հետևանքն օբյեկտիվորեն մեղսագրելի է Ռ-ին:

2. Սուբյեկտիվ փաստակազմը

Ռ-ն պիտի գործած լինի դիտավորությամբ՝ համաձայն ՀՀ ՔրՕ 25-րդ հոդ. 1-ին մասի, այն է՝ պիտի գիտակցած լինի ու ցանկացած լինի իրականացնել ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի փաստակազմը: Այստեղ հնարավոր է սուսկ **անուղղակի դիտավորություն (dolus eventualis)**, որը պետք է սահմանազատել արարքն անգորշությամբ կատարելուց: Ինչպես ըստ «*հավանություն տալու տեսության*» (գերմ. *Billigungstheorie*⁴), այնպես էլ ըստ «*լուրջ ընդունելու տեսության*» (գերմ. *Ernstnahmetheorie*⁵) անուղղակի դիտավորությունն առկա է այն դեպքում, երբ հանցագործը լրջորեն հնարավոր է համարում նորմի փաստակազմում նկարագրված հետևանքը և դրա հետ համաձայն է այն իմաստով, որ նա համակերպվում է դրա հետ կամ, հանուն իր հետապնդած նպատակի, հաշտվում

⁴ Stu BGHSt NJW 1989, 781; NJW 2012, 1524; NJW 2018, 1621:

⁵ Stu Rengier, AT, 2021, § 14 Rn. 26; Wessels/Beulke/Satzger, AT, 2020, § 7 Rn. 337 ff.; Nicolai, JA 2019, 31 (33f.).

առաջացած հետևանքի հետ:⁶ Հակառակը, եթե հանցագործը հնարավոր է համարում նորմի փաստակազմի իրականացումը, բայց լրջորեն վստահում է հետևանքի վրա չհասնելուն, ապա նա գործում է սուկ անզգուշորեն:⁷

Ռ-ն գիտակցում էր, որ դանակի հարվածը կարող է ունենալ մահացու հետևանք, բայց վերջին հաշվով համաձայն էր դրա հետ: Այսպիսով, նա գործել է անուղղակի դիտավորությամբ (ՀՀ ՔրՕ 25-րդ հոդ. 4-րդ մաս):

II. Արարքի հակաիրավականությունը

Ռ-ի արարքը պետք է եղած լինի հակաիրավական, այսինքն՝ արդարացված չլինի ՀՀ ՔրՕ 6-րդ գլխում նախատեսված որևէ հիմքով: Այստեղ հարցական է, թե արդյոք *Ռ-ի* արարքն արդարացված է անհրաժեշտ պաշտպանությամբ՝ համաձայն ՀՀ ՔրՕ 32-րդ հոդվածի:⁸

1. Անհրաժեշտ պաշտպանության վիճակը *Ռ-ի* արարքում

Դրա համար պետք է առկա եղած լինի հակաիրավական ոտնձգություն՝ ըստ ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասի:

Ոտնձգությունը մարդկային վարքի միջոցով օրենքով պաշտպանվող շահերի վնասման սպառնալիքն է:⁹ *Ն-ն* բռնել ու սեղմում էր *Ռ-ի* կոկորդը (= մարդկային վարք), որով նա վտանգ էր ստեղծել *Ռ-ի* ֆիզիկական անձեռնմխելիության համար (= օրենքով պաշտպանվող շահ):

Ոտնձգությունը պետք է առկա եղած լինի ներկա (պաշտպանվելու) պահին: Ոտնձգությունն **առկա է**, եթե այն անիջականորեն ակնկալվում է, արդեն սկսվել է կամ դեռ շարունակվում է:¹⁰ *Ն-ին* դանակով հարվածելու պահին նա խեղդում էր *Ռ-ին*: Հետևաբար, ոտնձգությունն առկա էր:

Բացի այդ, *Ն-ի* ոտնձգությունը պետք է նաև **հակաիրավական** եղած լինի: Դա այդպես է, եթե *Ն-ի* արարքն իր հերթին արդարացված չէ որևէ հիմքով, որի պատճառով *Ռ-ն* պարտավոր

չէ հանդուրժել այն: *Ն-ի* արարքը կարող է արդարացված լինել անհրաժեշտ պաշտպանությամբ՝ ըստ ՀՀ ՔրՕ 32-րդ հոդվածի: Եթե դա այդպես լինի, ապա *Ռ-ի* արարքը (դանակով հարվածը) ինքնըստինքյան կլինի հակաիրավական, որովհետև չի թույլատրվում անհրաժեշտ պաշտպանություն ընդդեմ անհրաժեշտ պաշտպանության,¹¹ քանի որ անհրաժեշտ պաշտպանությամբ արդարացված արարքը (այստեղ՝ *Ն-ի* կողմից *Ռ-ին* խեղդելը) այլևս չի կարող դիտվել իբրև հակաիրավական ոտնձգություն:

ա) Անհրաժեշտ պաշտպանության վիճակը *Ն-ի* արարքում

Որպեսզի *Ն-ի* արարքը լինի արդարացված անհրաժեշտ պաշտպանությամբ, պետք է առկա լինի հակաիրավական ոտնձգություն նրա դեմ: Այստեղ հարցական է, թե արդյոք *Ռ-ի* կողմից ծխախոտի ծուխը *Ն-ի* դեմքին փչելը հակաիրավական ոտնձգություն է *Ն-ի* դեմ ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասի իմաստով:

Ծխախոտի ծուխը հատուկ *Ն-ի* դեմքին փչելը կարող է (մարդու դեմքին թքելու նմանությամբ¹²) ոտնձգություն լինել նրա պատվի նկատմամբ (ՀՀ ՔրՕ 194-րդ հոդ. 1-ին մաս): Գնահատման համար որոշիչ է ընդհանուր իրավիճակային համատեքստը: *Ռ-ն* ծխախոտի ծուխը դիտավորյալ փչում է *Ն-ի* դեմքին այն բանից հետո, երբ *Ն-ն* մատնացույց է անում իր բաճկոնի այրվածքը և զգուշացնում ասթմայով հիվանդ լինելու պատճառով իր առողջության համար ծխախոտի ծխի առավել վտանգավոր ռիսկերի մասին: Դրանով *Ռ-ն* ցույց է տալիս իր առանձնահատուկ անտարբերությունը *Ն-ի* համար պոտենցիալ բացասական հետևանքներ առաջանալու նկատմամբ և արտահայտում իր հատուկ քամահրանքը *Ն-ի* անձի հանդեպ և անհարգալից վերաբերմունքը նրա հեղինակության նկատմամբ:¹³ Այդ պատճառով ծխախո-

⁶ Նշված երկու տեսությունները բովանդակային իմաստով իրարից այլևս չեն տարբերվում, տես Rengier, AT, 2020, § 14 Rn. 18:

⁷ Rengier, AT, 2021, § 14 Rn. 26.

⁸ Անհրաժեշտ պաշտպանության ստուգման սխեման տես Հովհաննիսյան, Օրինականություն 128/2022, էջ 3-4:

⁹ Kühl, AT, 2017, § 7 Rn. 23.

¹⁰ Kühl, AT, 2017, § 7 Rn. 39.

¹¹ Անհրաժեշտ պաշտպանության դեմ անհրաժեշտ պաշտպանության անթույլատրելիության մասին տես BGH NStZ 2003, 599:

¹² Տես Kühl, AT, 2017, § 7 Rn. 35; Jahn, JuS 2014, 176 (177); Jäger, JA 2014, 472 (473):

¹³ Տես Jäger, JA 2014, 472 (473); Lilie-Hutz, FD-StrafR 2013, 352027; Reinhardt, ZJS 2015, 222 (223); այլ կարծիքի է թերևս Jahn, JuS 2014, 176 (177):

տի ծուխը դեմքին փչելն ունի վիրավորական բնույթ, ուստի հակաիրավական ոտնձգություն է *Ն-ի* պատվի նկատմամբ:¹⁴

Հարցական է, թե արդյոք անմիջականորեն վտանգված է նաև *Ն-ի* առողջությունը (ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մաս):

Առողջության արդեն իսկ չնչին վնասումները բավարար են անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջացնելու համար այնքանով, որքանով դրանք այլևս չի կարելի դիտել իբրև սոցիալապես ադեկվատ:¹⁵ Ծխախոտի ծուխը ներշնչելիս գրգռվում են լորձաթաղանթները, ինչն էլ *Ն-ի* մոտ առաջացրել է հազի նոպա: Թեև պետք է հաշվի առնել, որ առօրյա կյանքում անսովոր բան չէ մի պահ ծխախոտի ծուխ ներշնչելը, օրինակ՝ երբ փողոցում մի ծխող մարդ է անցնում մեր կողքով, այնպես որ հավանաբար չի կարելի խոսել սոցիալապես ոչ ադեկվատ վարքի մասին, որի դեպքում հատվում է թույլատրելիության շեմը:¹⁶ Բայց այստեղ առկա է այն առանձնահատկությունը, որ սրճարանում ծխելն արգելված էր, և *Ն-ն* հիվանդ էր ասթմայով: Այդ հիվանդության պատճառով *Ն-ն* տառապում է շնչուղիների դյուրագրգռությամբ, ուստի ծխախոտի ծուխ ներշնչելիս կարող են ուժեղանալ ասթմայի ախտանշանները, կամ կարող է մեծանալ ասթմայի նոպաների ռիսկը: *Ն-ն* արդեն ունեցել էր հազի նոպա ու շնչահեղձ էր լինում: Հիվանդության պատճառով պետք է ելնել նրանից, որ ծխախոտի ծխի նկատմամբ օրգանիզմի ռեակցիայի ուժգնությունը նման հիվանդություն չունեցող մարդու համեմատությամբ մի քանի անգամ ավելի ուժեղ է: Այդ պատճառով հազի հաջորդ նոպան լորձաթաղանթների ներկա գրգռվածության պայմաններում ասթմայով հիվանդի համար պարունակում է այնպիսի մի ռեակցիայի վտանգ, որը զգալիորեն գերազանցում է ծխախոտի ծուխ ներշնչող առողջ մարդու մոտ ակնկալվող հազի «սովորական» նոպան: Դրա հա-

մար պետք է ելնել ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող զգալի վնասումից:¹⁷

Բացի դրանից, թքի մասնիկները կարող են պարունակել վիրուսներ ու բակտերիաներ, որոնք ունակ են վնասելու առողջությունն ու մարդու լավագուցությունը:¹⁸ Այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ որոշ չափով ընդհանուր կենսական ռիսկ է թքի մասնիկներ պարունակող օդի խառնուրդի հետ շփումը:¹⁹ Ջուտ պոտենցիալ վարակիչ հեղուկի հետ կոնտակտի միջոցով առողջության պոտենցիալ վնասումը նույնպես բացառվում է, որովհետև վայրկենապես հիվանդագին վիճակ չի առաջացել:²⁰

Այսպիսով, առկա է ոտնձգություն ինչպես *Ն-ի* պատվի, այնպես էլ ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ: *Ռ-ի* վարքը սոցիալապես ոչ ադեկվատ է և անցնում է զուտ մանրուքի սահմանները, այնպես որ իրավապահպանության սկզբունքի (*Rechtsbewährungsprinzip*) կամ անհատական պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայության ընդունումը լեգիտիմ է:

Ոտնձգությունը պետք է նաև առկա լինի **ներկա պահին**: Խնդրահարույց է, որ ծուխը փչելն սկզբունքորեն ավարտվել էր արտաշնչված օդի ամբողջական դատարկումից հետո: Հակառակը հնարավոր կլիներ հիմնավորել այն տեսանկյունից, որ օդում դեռ առկա էր ծխախոտի ծուխը, ուստի հնարավոր կլիներ ելնել ոտնձգության շարունակումից:²¹ Սակայն պետք է հաշվի առնել, որ *Ռ-ն արդեն երկու անգամ* ծխախոտի ծուխը փչել էր *Ն-ի* դեմքին և սիգարետը տանում էր բերանը, այնպես որ անմիջականորեն ակնկալվում էր մի նոր ոտնձգություն: Նման ոտնձգությունն օբյեկտիվորեն հակասում է իրավակարգին, ուստի այն նաև հակաիրավական է:

բ) Պաշտպանական գործողությունը *Ն-ի* արարքում

Պաշտպանական գործողությունը պիտի

¹⁴ Նույն կարծիքի են AG Erfurt, NSTz 2014, 160; LG Bonn, BeckRS 2012, 3545:

¹⁵ MüKoStGB/Erb, 2020, § 32 Rn. 87.

¹⁶ Jahn, JuS 2014, 176 (177).

¹⁷ Jahn, JuS 2014, 176 (177).

¹⁸ AG Erfurt, NSTz 2014, 160; LG Bonn, BeckRS 2012, 3545. Մանրամասն Covid-19-ի կամ SARS-CoV-2-ի անչությունը առաջացող իրավական հարցերի վերաբերյալ, մասնավորապես, թե արդյոք վարակը՝ որպես այդպիսին, արդեն բավարար է, տես Koenen/Lehnart, BB 2020, 1525 (1528); Makepeace, ZJS 2020, 189 (190f.); Hotz, NSTz 2020, 320 (321f.):

¹⁹ Jäger, JA 2014, 472 (473).

²⁰ Stu Jahn, JuS 2014, 176 (177):

²¹ Stu Jäger, JA 2014, 472 (473).

ուղղված լինի ոտնձգողի դեմ և լինի անհրաժեշտ ու կոնկրետ դեպքում ենթակա չլինի սոցիալ-էթիկական սահմանափակումների:²² Պաշտպանական գործողությունը բոլոր դեպքերում անհրաժեշտ է, եթե այն **պիտանի է** անմիջապես ու վերջնականապես դադարեցնելու ոտնձգությունը կամ գոնե թուլացնելու կամ դժվարացնելու այն և (ոտնձգության ենթարկվողի դերում մի ողջամիտ երրորդ անձի *ex-ante* տեսանկյունից) **ամենամեղմ**, այսինքն՝ բոլոր պիտանի միջոցներից ամենախնայող միջոցն է²³ (տես ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 4-րդ մասը): Ոտնձգության ենթարկվողը պարտավոր չէ կրել անորոշ ելքի ռիսկը անբավարար պաշտպանական գործողության միջոցով:²⁴ Բացի այդ, նահանջելը («ամոթալի փախուստը») սկզբունքորեն այլընտրանք չէ անհրաժեշտության շրջանակում²⁵ (տես ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 2-րդ մասը): *Ն-ն* խեղդում էր ոտնձգող *Ռ-ին*: *Ն-ի* կողմից *Ռ-ի* կոկորդը սեղմելու և դրանով շնչելու օդի մուտքը փակելու միջոցով թեև չվերացվեց օդում գտնվող ծուխը,²⁶ բայց *Ռ-ն* չէր կարող նորից *Ն-ի* դեմքին ծխախոտի ծուխ փչել, ուստի պիտանիությունն առկա է:

Սակայն հարցական է, թե արդյոք *Ն-ի* տրամադրության տակ չկար ավելի մեղմ, բայց նույնքան արդյունավետ միջոց: Թեև չի կարելի *Ն-ից* պահանջել, որ նա նահանջեր («իրավունքը չպետք է նահանջի ապօրինության առաջ»),²⁷ բայց նա կարող էր իր ֆիզիկական առավելության շնորհիվ նաև մի կողմ հրել *Ռ-ին*, ձեռքից վերցնել սիգարետը կամ ձեռքով փակել նրա բերանը²⁸ առանց *Ռ-ի* ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ այդքան ուժգին միջամտություն ցուցաբերելու: Այսպիսով, *Ն-ի* պաշտպանական գործողությունն **անհրաժեշտ չէր**:

Հետևաբար, *Ն-ի* ոտնձգությունը հակահրավական էր, քանի որ իր հերթին արդարացված չէր անհրաժեշտ պաշտպանությամբ: Այսպիսով, առկա էր հակահրավական ոտնձգություն *Ռ-ի* նկատմամբ:

2. Պաշտպանական գործողությունը *Ռ-ի* արարքում

Ռ-ի դանակի հարվածը պիտի ուղղված լինի ոտնձգող *Ն-ի* դեմ, ինչպես նաև լինի անհրաժեշտ ու ենթակա չլինի սոցիալ-էթիկական սահմանափակումների:

ա) Պաշտպանական գործողության անհրաժեշտությունը

Ռ-ն դանակով հարածել է *Ն-ի* մեջքին: Այդ արարքը պիտանի էր դադարեցնելու *Ն-ի* ոտնձգությունը: Բայց այստեղ նույնպես հարցական է, թե արդյոք *Ռ-ի* տրամադրության տակ չկար ավելի մեղմ ու նույնքան արդյունավետ միջոց, օրինակ՝ *Ն-ին* մի կողմ հրելը կամ բռունցքով հարվածելը: Ինչպես վերևում նշվեց, պաշտպանական գործողության անհրաժեշտության շրջանակում փախուստն ավելի մեղմ միջոց չի դիտվում: Պետք է նաև հաշվի առնել, որ *Ռ-ն* թթվածնի պակասի պատճառով վախենում էր իր կյանքի համար և ֆիզիկապես զգալիորեն փոքրամարմին էր *Ն-ի* համեմատ: Այդքանով *Ռ-ի* համար պայքարի ելքն անորոշ էր: Հակահրավական եղանակով ոտնձգության ենթարկվողն սկզբունքորեն իրավունք ունի ընտրելու պաշտպանության այն միջոցը, որի կիրառումը թույլ է տալիս վստահաբար ակնկալել ոտնձգության վերջնական դադարեցում: Պաշտպանվողից կարելի է պահանջել, որ նա կիրառի ավելի նվազ վտանգավոր միջոց, եթե նա ունի բավարար ժամանակ իրավիճակը գնահատելու համար, և այդ միջոցի օգնությամբ ոտնձգությունը հետ մղելու արդյունավետության հարցում կասկածներ չկան:²⁹ Կյանքի համար վտանգավոր պաշտպանական միջոցներ կիրառելն այդ պատճառով սկզբունքորեն թույլատրելի է (ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 4-րդ մասը), բայց պաշտպանվողը, որը դանակ է կիրառում անզեն մարդու դեմ,³⁰ պարտավոր է նախ զգուշացնել դրա կիրառման մասին, որքանով դա թույլ է տալիս կռվի կոնկրետ իրավիճակը, և վնասել մարմնի նվազ վտանգավոր հատված-

²² HK-GS/Gunnar Duttge, 2022, StGB § 32 Rn. 18.

²³ BGH NStZ 2015, 151 (152); NStZ 2019, 136; HK-GS/Gunnar Duttge, 2022, StGB § 32 Rn. 19.

²⁴ BGH NStZ-RR 2007, 199 (200); NStZ 2009, 626 (627).

²⁵ Rengier, AT, 2021, § 18 Rn. 33, 36, 38.

²⁶ Jäger, JA 2014, 472 (473).

²⁷ Frister, AT, 2020, Kap. 16 Rn. 26; Kühl/Hinderer, JuS 2009, 919 (923).

²⁸ Տե՛ս, սակայն, LG Bonn, BeckRS 2012, 3545: Այդ մասին տես նաև Reinhardt, ZJS 2015, 222 (223f.).

²⁹ BGH, NStZ 2019, 598 Rn. 10.

³⁰ Rengier, AT, 2021, § 18 Rn. 41f.; BGH, NStZ 2019, 598 Rn. 10.

ները, նախքան վնաս կատարողի մարմնի այն հատվածներին, որոնց վնասումը պոտենցիալ մահացու է:³¹ Ռ-ն դանակ կիրառելու մասին չի զգուշացրել, բայց դա ամենևին հնարավոր չէր բանավոր անել, քան որ Ն-ն նրան խեղդում էր: Բայց բավարար է նաև կոնկլուդենտ զգուշացումը պաշտպանության միջոցը ցուցադրելու եղանակով: Ն-ն կարողացել է դանակը տեսնել: Ն-ի ոտքը վնասելու փորձը՝ իբրև ավելի մեղմ միջոց, անհաջող էր: Հետևաբար, դանակով մեջքին հարվածելն անհրաժեշտ էր:

բ) Պաշտպանական գործողության սոցիալ-էթիկական սահմանափակումը³²

Անհրաժեշտ պաշտպանության շրջանակում տեղի չի ունենում շահերի գնահատում (ի տարբերություն ծայրահեղ անհրաժեշտության): Այնուամենայնիվ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը պետք է սահմանափակել սոցիալ-էթիկական տեսանկյունից:³³ Այստեղ կարող է ծագել Ռ-ի անհրաժեշտ պաշտպանությունը սահմանափակելու հարցը ոտնձգությունը մեղավոր կերպով սաղորելու պատճառով:³⁴

Այսպես կոչված *դիտավորյալ սաղորանքի* դեպքում անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ամբողջությամբ բացառված է³⁵ (տես ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մաս): Բայց Ռ-ն Ն-ի ոտնձգությունը դիտավորյալ չէր հրահրել, որ իբր հետո անհրաժեշտ պաշտպանության քրդի տակ կարողանա վնասել նրան:³⁶

Մեղավոր պրովոկացիայի մյուս դեպքերում,³⁷ հակառակը, անհրաժեշտ պաշտպանության իրավունքը պետք է *աստիճանավորել*: Նման դեպք առկա է, երբ անձի նախորդող հակաիրավական արարքը դառնում է կանխատեսելի ու ա-

ղեկվատ ոտնձգության պատճառ:³⁸ Ծխախոտի ծուխը նպատակադրված կերպով Ն-ի դեմքին փչելը Ն-ի ֆիզիկական լավագագացության վատթարացման և Ռ-ի արարքի վիրավորական բնույթի պատճառով առնվազն օբյեկտիվորեն հակասում է ընդհանուր հոգածության պարտականությանը³⁹ և այդ պատճառով հակաիրավական է: Բացի այդ, Ռ-ն կարող էր ակնկալել անմիջական ֆիզիկական հակազդում Ն-ի կողմից: Ընդհանուր իրավիճակի լույսի ներքո (բաճկոնի այրվածքը, ներողություն չխնդրելը, այլ մի քանի անգամ ծխախոտի ծուխը դեմքին փչելը) Ն-ի այդպիսի կտրուկ արձագանքը տարօրինակ չէր:

Ըստ գերիշխող կարծիքի՝ անհրաժեշտ պաշտպանության սաղորանքի այսպիսի ձևը հանգեցնում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքի սահմանափակման այսպես կոչված «**երեք աստիճանի տեսության**» իմաստով:⁴⁰ Ըստ այդ տեսության՝ սկզբում ոտնձգության ենթարկվողը պարտավոր է օգտվել *ոտնձգությունից խուսափելու* համար պիտանի բոլոր հնարավորություններից (1-ին աստիճան), նախքան իրավունք կունենա դիմելու *պասիվ պաշտպանության* (2-րդ աստիճան), ու միայն որքանով դրանք հաջողություն չեն խոստանում, իրավունք ունի դիմելու *ակտիվ պաշտպանության* (3-րդ աստիճան):⁴¹ Ռ-ն կարող էր համաձայնել Ն-ի պայմանին ու հեռանալ սրճարանից: Ն-ն միանգամայն հասկանալի կերպով Ռ-ին ասաց, որ այդ դեպքում միանգամից կղադարեցնի նրան խեղդելը: Բացառության կարգով այստեղ Ռ-ից կարելի է պահանջել, որ նա փախչեր: Այդ պատճառով Ն-ին դանակով հարվածելու եղանակով նրա պաշտպանությունն անթույլատրելի էր:

³¹ MüKoStGB/Erb, § 32 Rn. 167; BGH, NJW 2001, 3200; NStZ-RR 2013, 105 (106); NStZ 2016, 526 (527).
³² Անհրաժեշտ պաշտպանության սոցիալ-էթիկական սահմանափակումների մասին մանրամասն տես Rönnau, JuS 2012, S. 404 ff.:
³³ Frister, AT, 2020, Kap. 16 Rn. 27.
³⁴ Այս հարցի մասին տես Degener/Brabant/Pampuch/Faridy, JuS 2018, 141 (145 f.).
³⁵ Wessels/Beulke/Satzger, § 8 Rn. 346.
³⁶ Դիտավորյալ սաղորանքի նախապայմանների մասին տես Kühl, AT, 2017, § 7 Rn. 228 ff.; Norouzi, JuS 2004, 494 (495):
³⁷ Հայ օրենսդիրը ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մասում չի տարբերակում դիտավորյալ սաղորանքը սաղորանքի մյուս ձևերից: Սաղորանքի տարբեր ձևերը միևնույն վերաբերմունքի արժանացնելն արդարացված չէ:
³⁸ Berster/Yenimazman, JuS 2014, 329 (331); Rengier, AT, 2021, § 18 Rn. 72 f. Ըստ գերմանական դատական պրակտիկայի՝ անհրաժեշտ պաշտպանության պրովոկացիայի համար բավարար է նույնիսկ սոցիալ-էթիկական տեսանկյունից անընդունելի վարքը, տես BGHSt 42, 97 (99 ff; BGH, NStZ-RR 2018, 170):
³⁹ Գնահատման այս տեսանկյան մասին տես Rengier, AT, 2021, § 18 Rn. 75:
⁴⁰ Lackner/Kühl/Kühl StGB § 32 Rn. 18; Duttge NStZ 2006, 266, 270; Satzger Jura 2006, 513, 520.
⁴¹ Kudlich, JuS 2003, 32 (34). Արդարության նկատառումներով ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մասը պետք է մեկնաբանել «երեք աստիճանի տեսության» իմաստով:

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության արդարացնող հիմքն այստեղ առկա չէ: Հետևաբար, *Ռ-ի* արարքը հակաիրավական է:

III. Ռ-ի մեղքը

Մեղքը բացառող հիմքեր չկան: *Ռ-ն* գործել է մեղավորությամբ:

IV. Արդյունքը

Ռ-ն կատարել է սպանություն՝ համաձայն ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի:

Բ. ՀՀ ՔրՕ 159-րդ հոդվածը

Ն-ի սպանությունը *Ռ-ն չի* կատարել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ՝ ըստ ՀՀ ՔրՕ 159-րդ հոդվածի: Համաձայն ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 3-րդ մասի՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում է համարվում դիտավորությամբ ոտնձգողին այնպիսի վնաս պատճառելը, որը համաչափ չէ հակաիրավական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը և չի բխում պաշտպանվելու անհրաժեշտությունից: *Ռ-ի* գործողություններն ըստ էության համապատասխանում էին *Ն-ի* ոտնձգության բնույթին ու վտանգավորությանը, որովհետև *Ն-ն* լրջորեն խեղդում էր նրան, և իսկապես վտանգված էր *Ռ-ի* կյանքը: Դանակով հարվածը նաև անհրաժեշտ էր *Ն-ի* ոտնձգությունից պաշտպանվելու համար (տես վերևում՝ Ա.Ո.2.ա): Պարզապես *Ռ-ի* պաշտպանվելու իրավունքը կոնկրետ դեպքում սահմանափակված էր «երեք աստիճանի տեսության» իմաստով, քանի որ *Ն-ի* ոտնձգության պատճառը *Ռ-ի* սաղորանքն էր: Քանի որ *Ռ-ի* արարքում չկա անհրաժեշտ պաշտպանություն, ուստի չի կարող լինել նաև անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Գ. ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասի 17-րդ կետը (դանակով հարվածը)

Ն-ի մեջքին դանակով հարվածելու միջոցով *Ռ-ն* նաև դիտավորությամբ *Ն-ին* պատճառել է մարմնական վնասվածք, որը վտանգավոր է եղել նրա կյանքի համար՝ ըստ ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի: Այս հանցանքն իրավանորմերի մրցակցության մակարդակում հետ է մղվում սպանության հանցակազմի կողմից դրա հատուկ բնույթի պատճառով:⁴²

Ռ-ի արարքում առկա չէ ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 3-րդ մասի 17-րդ կետի հատուկ հատկանիշը, քանի որ նա դիտավորություն ուներ նաև *Ն-ի* մահվան առնչությամբ. *Ռ-ն Ն-ի* մահն առաջացրել է անուղղակի դիտավորությամբ, այլ ոչ թե անզգուշությամբ (տես վերևում՝ Ա.Ո.2.):

Դ. ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետը (ծխախոտի ծուխը Ն-ի դեմքին փչելը)

I. Փաստակազմը

1. Օբյեկտիվ փաստակազմը

Ռ-ն պետք է դիտավորությամբ *Ն-ին* պատճառած լինի մարմնական վնասվածք կամ առողջության այլ վնաս, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում:

Մարմնական վնասվածք պատճառելը ցանկացած վատ, ոչ պատշաճ վերաբերմունքն է, որի միջոցով ոչ աննշան չափով վատանում է մարդու ֆիզիկական լավագագացությունը:⁴³ Ծխախոտի ծուխը միախառնված էր թքի խոնավ մասնիկներին, ուստի սկզբունքորեն պիտանի էր առաջացնելու սրտխառնոց: Բայց այդ զգացումը պետք է ազդի նաև **ֆիզիկապես**, քանի որ զուտ հոգեկան վնասումները մարմնական վնասվածքի համար բավարար չեն:⁴⁴ Բայց խնդրից ամենևին չի երևում, թե *Ն-ն* ընդհանրապես սրտխառնոց է զգացել, որն իր հերթին կարող էր առաջացնել համապատասխան ֆիզիկական ռեակցիա: Սակայն *Ռ-ի* կողմից ծխախոտի ծուխը *Ն-ի* դեմքին փչելու պատճառով գրգռվել են *Ն-ի* լորձաթաղանթները, և նրա մոտ սկսվել է հազի ուժեղ նոպա: Դրանով պիտի որ ոչ աննշան չափով վատացած լինի նրա ֆիզիկական լավագագացությունը: Դա որոշվում է առավելապես միջամտության տևողությամբ ու ուժգնությամբ, ընդ որում այստեղ պետք է հաշվի առնել նաև *Ն-ի*՝ իբրև ասթմայով հիվանդի բարձր դյուրագագացությունը:⁴⁵ Սկսված հազի նոպան զգալի ուժգնություն ուներ, *Ն-ին* օդը չէր հերիքում, և այն տևել է նաև երկար (երկու անգամ փչելը): Դեպքի հանգամանքներից ելնելով՝ *Ռ-ի* արարքում այլևս չի կարելի տեսնել հանրորեն ընդունելի վարք: Լորձաթաղանթների գրգռման ու հազի նոպայի պատճառով առնվազն կարճ ժամանակով քայքայվել է

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

⁴² MüKoStGB/Hardtung, 4. Aufl. 2021, § 224 Rn. 59.
⁴³ BeckOK-StGB/Eschelbach, 2021, § 223 Rn. 18.
⁴⁴ BGH, NStZ 2016, 27; NStZ-RR 2012, 340; Sternberg-Lieben in Schönke/Schröder, StGB, 2019, § 223 Rn. 1, 4.
⁴⁵ LK-StGB/Grünwald, 2019, § 223 Rn. 25.

նակ *Ն-ի* առողջությունը ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի իմաստով: Ռ-ի արարքը նաև պատճառական էր, իսկ նրա արարքի հետևանքը՝ նրան օբյեկտիվորեն մեղսագրելի:

Առողջությանը վնաս պատճառելը մարդու մոտ հիվանդագին վիճակ ստեղծելն է կամ արդեն եղած հիվանդագին վիճակի սաստկացումը:⁴⁶ Այստեղ դա կարող է տեղի ունեցած լինել ինչպես ծխախոտի ծխի մեջ առկա քաղցկեղահարույց մասնիկներից, այնպես էլ ծխի ու թքի խառնուրդի մեջ առկա հնարավոր բակտերիաներից ու վիրուսներից:⁴⁷ Սակայն ո՛չ ծխախոտի ծխի կարճատև ներշնչումը (պասիվ ծխելը), հաշվի առնելով նաև ասթմայով հիվանդ լինելը, ո՛չ բակտերիաների ու վիրուսների հետ շփումը չեն կարող անմիջականորեն առաջացնել առողջության վնասում:⁴⁸ Մի հիվանդությանը վարակվելու զուտ վտանգը, որպես կանոն, բավարար չէ: Բացի այդ, *Ն-ի* մոտ չի առաջացել սրտխառնոց, որը, ըստ գերիշխող կարծիքի, «հիվանդագին, սոմատիկ վիճակի»⁴⁹ (օրինակ՝ որձկալու տևական զգացողության)⁵⁰ առաջացման դեպքում կարող էր հաշվի առնվել:⁵¹

2. Սուբյեկտիվ փաստակազմը

Ռ-ն գիտեր այն հանգամանքի մասին, որ *Ն-ն*՝ իբրև ասթմայով հիվանդ, հավանաբար ավելի զգայուն ձևով կարճազանքի դեմքին ծխախոտի ծուխ փչելուն: Բայց դա *Ռ-ին* չէր հետաքրքրում: Հետևաբար, նա գործել է անուղղակի դիտավորությամբ:

II. Հակահրավականությունն ու մեղքը

Ռ-ի արարքն արդարացնող կամ նրա մեղքը բացառող հիմքեր չկան: *Ռ-ն* գործել է հակահրավական եղանակով ու մեղավորությամբ:

III. Արդյունքը

Ռ-ն կատարել է հանցանք՝ ըստ ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի:

Ե. ՀՀ ՔրՕ 264-րդ հոդվածը

Ռ-ն կարող է նաև կատարած լինել ՀՀ

ՔրՕ 264-րդ հոդ. 1-ին մասով նախատեսված արարքը՝ վնասելով *Ն-ի* բաճկոնը: Նա աջ ձեռքում պահած այրվող սիգարետով այրում է *Ն-ի* բաճկոնը: Բաճկոնը *Ռ-ի* համար ուրիշի գույք է, քանի որ բացառապես իր սեփականությունը չէ:⁵² Բաճկոնն այրելով՝ *Ռ-ն* նաև վնասել է այն: Դա տեղի է ունեցել, ըստ խնդրի տեքստի, պատահաբար, ինչը խոսում է անզգուշության, մասնավորապես՝ անփութության մասին (ՀՀ ՔրՕ 26-րդ հոդ. 3-րդ մաս): Բայց ըստ ՀՀ ՔրՕ 24-րդ հոդ. 2-րդ մասի՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե ՔրՕ հատուկ մասով դա նախատեսված է: Նոր քրեական օրենսգիրքը 264-րդ հոդվածում պատասխանատվություն է նախատեսում ուրիշի գույքը միայն դիտավորությամբ վնասելու համար: Անզգուշությամբ ուրիշի գույքը վնասելն արդարացիորեն այլևս հանցանք չէ: Հետևաբար, բացառվում է *Ռ-ի* քրեական պատասխանատվությունը *Ն-ի* բաճկոնն անզգուշությամբ վնասելու համար:⁵³ *Ռ-ն* չի կատարել հանցանք՝ ըստ ՀՀ ՔրՕ 264-րդ հոդվածի:

2. Ընդհանուր արդյունքն ու մրցակցությունը

Ռ-ն կատարել է սպանություն՝ ըստ ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասի (դանակով *Ն-ի* մեջքին հարվածելու միջոցով)՝ առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելու հետ համակցությամբ՝ ըստ ՀՀ ՔրՕ 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի (դեմքին ծխախոտի ծուխ փչելու միջոցով): Առկա է հանցագործությունների համակցություն ՀՀ ՔրՕ 53-րդ հոդ. 1-ին մասի **2-րդ տարբերակի** (երկու հանցանքների կատարումը երկու տարբեր արարքներով): *Ռ-ն* ենթակա է քրեական պատասխանատվության յուրաքանչյուր հանցագործության համար՝ ՀՀ ՔրՕ 155-րդ հոդ. 1-ին մասով և 171-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետով (ՀՀ ՔրՕ 53-րդ հոդ. 4-րդ մաս):

⁴⁶ BeckOK-StGB/Eschelbach, 2021, § 223 Rn. 24.

⁴⁷ Stu AG Erfurt, NStZ 2014, 160; LG Bonn, BeckRS 2012, 3545:

⁴⁸ Նույն կերպ տես Jahn, JuS 2014, 176 (177); Jäger, JA 2014, 472 (473):

⁴⁹ BGHSt NJW 2003, 150; BGH, NJW 2013, 3383.

⁵⁰ Stu BGH, NStZ 2016, 27 թբելու դեպքի վերաբերյալ:

⁵¹ Թբելու մասին նույն կարծիքը տես OLG Zweibrücken, NJW 1991, 240 (241); Sternberg-Lieben in Schönke/Schröder, StGB, 2019, § 223 Rn. 4; տես նաև LK-StGB/Grünwald, 2019, § 223 Rn. 25:

⁵² HK-GS/Edgar Weiler, 2022, StGB § 303 Rn. 2.

⁵³ Իրեն պատճառված գույքային վնասը *Ն-ն* կարող է *Ռ-ի*ց պահանջել ՀՀ ՔաղՕ 1058-րդ հոդ. 1-ին մասի հիման վրա:

ԹՄՐԱՍԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԿԱՍ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔ ՆՅՈՒԹԵՐԻ (ԱՆԱԼՈԳԻ) ԱՊՕՐԻՆԻ ՀՐՋԱՆԱԴՈՒԹՅՈՒՆՆ ՏՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՍ ԴՐԱՆՑ ԱՊՕՐԻՆԻ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ՝ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Քննարկող արարքը այն հանցակազմերից է, որն զգալի փոփոխությունների է ենթարկվել նոր քրեական օրենսգրքում: Նոր (05.05.2021-ին ընդունված) քրեական օրենսգրքի հոդված 393-ը պատասխանատվություն է սահմանում իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի արտադրելու, պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, տարածելու, գովազդելու կամ դրանք ապօրինի իրացնելու կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելու համար:

Մինչդեռ, 2003-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի հոդված 266-ը պատժելի է համարում իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը, իսկ Նոր օրենսգրքի 394-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար: Հիշատակված հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նոր օրենսգրքի հոդված 393-ը նախկին օրենսգրքի հոդված 266-ի համեմատությամբ կրել է զգալի կառուցվածքային փոփոխություններ: Մաս-

նավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 266-ը պատասխանատվություն է սահմանում ինչպես թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և դրանց խառնուրդների, այնպես էլ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար: Այնինչ, նոր քրեական օրենսգրքի պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար նախատեսել է առանձին հոդված: Մասնավորապես, հոդված 394-ը որպես ինքնուրույն հանցակազմ դիտարկում է թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) պատրաստելու նպատակով պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը: Մեր կարծիքով, նոր օրենսգրքի սույն արարքները առանձին հոդվածներով նախատեսելով, առավել արդյունավետ մոտեցում է ցուցաբերել՝ հատկապես օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից: Ըստ էության, նախկին քրեական օրենսգրքի հոդված 266-ը ներառում էր երկու ինքնուրույն դիսպոզիցիա՝ իրենց սանկցիաներով և ծանրացնող հանգամանքներով: Ինչ խոսք, քրեական օրենսգրքի հոդվածի նման կառուցվածքը օրենքների մշակման տեսանկյունից դժվար է արդարացված համարել:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ և 394-րդ հոդվածների համեմատման արդյունքում նկատելի է, որ նշված ձևակերպումների միջև առկա է ոչ միայն խմբագրական (ոչ նորմատիվային), այլև նորմատիվային տարբերություն. օրենսդիրը 393-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

րդ հողվածում սահմանել է թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելը մեկ ուրիշի դրդմամբ, իսկ 394-րդ հողվածում, որտեղ հանցագործության առարկա թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութի (անալոգ) փոխարեն հանդիսանում են դրանց պատրաստելու նպատակով պրեկուրսորներ, նախատեսված չէ քրեական պատասխանատվություն մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար պրեկուրսորներ ապօրինի ձեռք բերելը: Այս համեմատման արդյունքում ողջամիտ ենթադրություն է առաջանում այն մասին, որ օրենսդիրը հնարավոր չի համարել մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) պատրաստելու համար պրեկուրսորների ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը: Մինչդեռ, տվյալ իրավիճակը օբեկտիվ իրականության մեջ հնարավոր է: Օրինակ, անձը թմրամիջոց պատրաստելու նպատակով դրդում է մեկ այլ անձի իր համար ձեռք բերել պրեկուրսոր: Ելնելով վերորոգրյալից՝ գտնում ենք, որ նման տարբերակված մոտեցման փոխարեն ավելի նպատակահարմար կլիներ երկու հողվածներում դրդչության համար քրեական պատասխանատվություն նախատեսելը, կամ այդ մասին նշում չկատարելը:

Երկու օրենսգրքերի ուսումնասիրվող հողվածների վերնագրերում օգտագործված է շրջանառություն բառը: Մեր համոզմամբ, շրջանառություն բառը չի համապատասխանում հողվածի դիսպոզիցիայում գործածվող իրացնել բառի իմաստին: Նախ, հարկ է պարզել, թե արդյոք հողված 393-ում օգտագործված շրջանառություն և իրացնել բառերը նույնական են, թե՛ ոչ: Մեր կարծիքով, տվյալ եզրույթները որևէ կերպ չի կարելի համարել նույնական, քանի որ նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի հողված 15-ի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն

միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իսկ, հայերենում շրջանառություն բառը բացատրվում է որպես՝ շրջապտույտ, գործածություն, օգտագործում¹: Այսպիսով, շրջանառություն բառի ներկայացված մեկնաբանության բովանդակությունից դուրս են մնում օրենսգրքում օգտագործված՝ արարքի կատարման այնպիսի եղանակներ, ինչպիսիք են՝ թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը: Հարցն այն է, որ ձեռք բերելու և պահելու գործողությունները նույնիսկ լայն մեկնաբանման պարագայում, շրջանառության հասկացության մեջ չեն տեղավորվում: Բացի այդ, նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի հողված 12-ի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը: Այդ իսկ պատճառով, առաջարկում ենք հողված 393-ի վերնագրում շրջանառություն բառը փոխարինել իրացնել բառով, որի պարագայում կվերանա հողվածի վերնագրի և բովանդակության անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն նշեցինք, հողված 393-ում որպես արարքի կատարման եղանակ նշված է նաև մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելը:

Նախկին օրենսգրքի 266-րդ հողվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով թիվ **ԵԷԴ/0125/01/09** քրեական գործի շրջանակներում, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

- ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,
- բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,
- գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,

¹ Տե՛ս Էդուարդ Աղայան: արդի հայերեն բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1123:

դ) միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ որ դերակատարի՝ իրացնողի թե ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն:

Նոր իրավակարգավորումն, ըստ էության, սահմանում է մի իրավիճակ, երբ անձը կարող է ուրիշի ազդեցության տակ ընկնելով (չունենալով բարձր իրավագիտակցություն, մտքի ճկունություն, կամ մտածելով, որ դրդիչը գտնվում է ծանր հոգեկան և ֆիզիկական տառապանքների ներքո), չունենալով թմրամիջոցի ապօրինի իրացման ուղղակի դիտավորություն, օգնում է վերջինիս դուրս գալ զարթուների համախտանիշից, օգնում է ձեռք բերել թմրամիջոց, դառնում է իրացման սուբեկտ, այլ ոչ թե ձեռք բերման օժանդակող, ուստի գտնում ենք, որ հիշյալ ձևակերպումն անարդարացիորեն ծանրացնում է անձի կարգավիճակը, ինչպես նաև տալիս է տարակարծիք մեկնաբանման լայն հնավորություն, ինչը չի բխում օրենքի տառացի մեկնաբանման օրենսդրական պահանջից:

Բացի վերոգրյալը, նոր իրավակարգավորումը մտածելու փեղիք է տալիս՝ կապված դրդողի մոտ իրացման նպատակի պարտադիրության տարրի հետ: Արդյոք իրավաչափ կլինի նպատակի պարտադիրության սահմանումը դրդիչին քրեական պատասխանատվության ենթարկելիս, երբ հոդվածի բովանդակությունից ընդհանուր առմամբ բխում է իրացման նպատակը կամ իրացումը, մինչդեռ դիսպոզիցիայի տառացի մեկնաբանմամբ պարզվում է, որ օրենսդիրը չի սահմանել դրա պարտադիր բնույթը: Մասնավորապես, ինչպես հայտնի է, կամ շաղկապով բաժանված պայմանների մասով մյուս պայմանների առկայությունը պարտադիր բնույթ չեն կրում:

Դիտարկվող հանցակազմում նախկին օրենսգրքի համեմատ բովանդակային տարբերությունը կապված է դիսպոզիցիայի օբյեկտիվ կողմի շարադրանքին: Իսկ ինչպես հայտնի է

մասնագիտական գրականությունից, ընդհանուր կանոնի համաձայն՝ հանցագործության որակումը սկսվում է նրա օբյեկտը և օբյեկտիվ կողմը բացահայտելուց²: Մասնավորապես, նոր քրեական օրենսգրքի հոդված 393-ի դիսպոզիցիան զգալիորեն ընդլայնված է նախկին օրենսգրքի համանման հոդվածի համեմատ: Խոսքը վերաբերում է ինչպես հանցագործության կատարման եղանակներին, այնպես էլ հանցագործության առարկային: Անդրադառնալով հանցակազմի առարկային՝ հարկ է նկատել, որ հոդված 393-ը պատասխանատվություն է սահմանում նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգ) իրացման համար: Հանցակազմի առարկայի նման ձևակերպումը կհեշտացնի ապացուցման գործընթացը, միևնույն ժամանակ կսահմանափակի հանցանք կատարած անձանց՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը: Կարծում ենք՝ նույն նպատակին է միտված նաև օրենսդրի կողմից հանցանքի կատարման եղանակների շրջանակի ընդարձակումը: Մասնավորապես, նոր քրեական օրենսգրքով, ի տարբերություն նախորդի, պատժելի են հանցագործության կատարման այնպիսի եղանակներ, ինչպիսիք են՝ արտադրելը, տարածելը, գովազդելը, ինչպես նաև մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելը: Կարծում ենք՝ այս հարցում օրենսդիրը փոքր-ինչ չափազանցված մոտեցում է դրսևորել, քանի որ արտադրել և պատրաստել բառերը այս համատեքստում, ըստ էության, նույնական են, իսկ *տարածելը* նույն հոդվածում կիրառված տեղափոխել և առաքել հասկացությունների ամբողջությունն է: Այսինքն, այս հասկացությունների կիրառումը ավելորդ ծանրաբեռնել է խնդրո առարկա հոդվածի դիսպոզիցիան: Ինչ վերաբերում է *գովազդելը* որպես հանցագործության կատարման եղանակ նախատեսելուն, ապա այն լիովին արդարացված է, հատկապես տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլում: Հարկ է նկատել, որ վերջին շրջանում սոցիալական տարբեր ցան-

² Сѣн Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М.,1999, էջ 59:

ցերում գոյություն ունեն բազմաթիվ էջեր և օգտահաշիվներ, որոնց միջոցով իրականացվում է թմրամիջոցների գովազդ՝ և նույնիսկ առցանց վաճառք:

Ուսումնասիրվող հանցակազմի խնդրահարույց հարցերից է այս արարքի ավարտման պահը ճշգրիտ սահմանելը, ինչից էլ կախած է, թե այս արարքները պետք է որակվեն որպես հանցագործության նախապատրաստություն, հանցափորձ, թե՛ ավարտված հանցագործություն: Տվյալ խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ է հստակ սահմանել, թե ինչպիսին է հանցակազմի (օբյեկտիվ կողմի) նկարագրման եղանակը: Դիտարկվող արարքի օբյեկտիվ կողմը նկարագրված է ձևական հանցակազմով: Ինչպես հայտնի է քրեական իրավունքի տեսությունից՝ ձևական հանցակազմերում հետևանքները կամ ենթադրվում են, կամ առաջանում են ոչ բոլոր դեպքերում, կամ չունեն նյութական բնույթ, այդ պատճառով էլ չեն կարող հաստատվել դատավարական միջոցներով³: Այստեղից հետևում է, որ այս հանցակազմի պարագայում հանցափորձը որպես կանոն հնարավոր չէ: Այդուհանդերձ, սա ընդհանուր կանոն է, որը բացարձակ չէ և ունի իր բացառությունները: Պետք է նշել նաև, որ ձևական հանցակազմի պարագայում հանցափորձը նույնպես հնարավոր է: Գրականության մեջ էլ արտահայտվել է այդ տեսակետը, որի համաձայն՝ ձևական հանցակազմով հանցագործության փորձը տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը (գործողությունը) չի կատարվում մինչև վերջ և հանցավորի կամքից անկախ պատճառներով ընդհատվում է⁴: Մեր համոզմամբ, տվյալ հարցի պատասխանը գտնելու համար բերված ընդհանուր կանոնը հաշվի առնելով՝ հարկավոր է մանրակրկիտ վերլուծել հանցակազմի դիցալոգիայում նախատեսված գործողությունները և դրանք համադրել հնարավոր իրավիճակների հետ: Այսպես, նախապատրաստություն պետք է համարել բոլոր այն գործողությունները, որոնք թեև անմիջականորեն չեն մտնում հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ, սակայն պայմաններ են ստեղծում այդպիսի գործողություն-

ների կատարման համար: Այդպիսի արարքներ կարելի է համարել օրինակ՝ թմրամիջոցներ պատրաստելու համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերելը կամ ստեղծելը, թմրամիջոցների իրացման համար պոտենցիալ սպառողներ փնտրելը և այլն: Ինչ վերաբերում է հանցափորձին, ապա հաշվի առնելով այս հանցակազմի կառուցվածքը՝ նման դեպքերի շրջանակը խիստ սահմանափակ է: Այդպիսի իրավիճակ հնարավոր է միայն այն պարագայում, երբ հանցավորը փորձում է թմրամիջոցը ապօրինի փոխանցել ստացողին, սակայն իրենից անկախ հանգամանքներում, դա չի ստացվում: Մասնավորապես, պրակտիկայում շատ է տարածված այն իրավիճակը, երբ թմրամիջոցը դատապարտյալին փոխանցելու նպատակով, այն նետում են քրեակատարողական հիմնարկի պարիսպի վրայից: Այս դեպքում, եթե թմրամիջոցը վերցնեն ուղղիչ հիմնարկի աշխատակիցները, փոխանցումը փաստորեն կխափանվի, իսկ փոխանցողի արարքը կորակվի որպես հոդված 393-ի փորձ:

Այս հանցակազմի որակմանն առնչվող հաջորդ խնդրահարույց հարցը վերաբերում է դրա՝ որոշ հանցագործությունների հետ համակցությամբ որակմանը: Խոսքը վերաբերում է մի քանի կոնկրետ հանցակազմերին: Այսպես, հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակել օրինակ՝ արդեն իսկ հիշատակված, ուղղիչ հիմնարկի աշխատակցի արարքը, ում միջոցով իրականացվում է թմրամիջոցի փոխանցումը դատապարտյալին: Մեր կարծիքով, նման արարքը հարկավոր է որակել հոդվածներ 393-ի և 441-ի (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) համակցությամբ՝ կախված գործի հանգամանքներից: Այսպիսի մոտեցումը բխում է մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն կարծիքից, ըստ որի՝ պաշտոնատար անձանց կողմից այնպիսի արարքների կատարումը, որոնք նախատեսված չեն պաշտոնեական բնույթի հանցագործությունների համար պատասխանատվություն սահմա-

³ Տե՛ս Кудрявцев В. Н., Келина С. Г. Состав преступления/ Под ред. В. Н. Кудрявцева и А. В. Наумова. М., 2001, էջ 160:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևան, 2003, էջ 253;

նող հողվածներում, կատարվածը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ⁵:

Հետաքրքրական է նաև հողված 393-ի 2-րդ մասի 7-րդ կետի սույն հողվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է ուսումնադաստիա-րակչական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում, և նոր քրեական օրենսգրքի հողված 238-ի (անչափահասին հանցանքի հակելը կամ դրան մասնակից դարձնել) հարաբերակցության հարցը: Այս դեպքում ևս տվյալ հանցանքների կատարումը առաջացնում է համակցություն: Նախ, տարբեր են դրանց օբյեկտները, և երկրորդ՝ ուսումնադաստիարակչական հաստատությունում կամ դրա հարևանությամբ հողված 393-ով սահմանված արաքների կատարումը չի ենթադրում դրանցում անչափահասների պարտադիր ներգրավման հանգամանքը:

Նոր քրեական օրենսգրքի հողված 393-ը նախկին օրենսգրքի հողված 266-ի համեմատ փոփոխություններ է կրել նաև ծանրացնող հանգամանքների մասով: Որպես ծանրացնող հանգամանք հողված 393-ի 2-րդ մասի 6-րդ կետում սահմանված է՝ սույն հողվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում: Այս ծանրացնող հանգամանքի նպատակահարմարությունը ամբողջությամբ հասկանալի է, քանի որ տվյալ դեպքում հանցագործության հիմնական անմիջական օբյեկտից բացի վնաս է պատճառվում նաև զինվորական կարգին: Այսինքն, այս դեպքում գործ ունենք երկօբյեկտ հանցագործության հետ: Հողված 393-ում առանձին կետով՝ որպես ծանրացնող հանգամանք, նշված է՝ սույն հողվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զվարճանքի կամ հանդիսադիր վայրում կամ հաստատությունում: Մինչդեռ, նման ծանրացնող հանգամանքի նախատեսումը դժվար է ընդունելի համարել, քանի որ այն որևէ կերպ չի ազդում արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Մասնավորապես, ինչով է արտահայտվում զվարճանքի վայրերում թմրամիջոցների իրացման ավելի բարձր

հանրային վտանգավորությունը շենքերի բակերում կամ առևտրի կենտրոններում թմրամիջոցների իրացման համեմատ, հասկանալի չէ: Ըստ ամենայնի, օրենսդիրը նկատի է ունեցել այն իրողությունը, որ զվարճանքի վայրերում այլ տեղերի համեմատ ավելի հաճախ են թմրամիջոցների իրացման դեպքերը: Սակայն, այս փաստը չի կարող հիմք հանդիսանալ քննարկող հանգամաքը որպես ծանրացնող համարելու համար:

Եվ նոր օրենսգրքի հողված 393-ը, և նախկին օրենսգրքի հողված 266-ը խրախուսական նորմեր են պարունակում, սակայն դրանցում կան որոշակի տարբերություններ: Այսպես, հողված 266-ի 5-րդ մասի համաձայն՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պրեկուրսորներ, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութեր կամովին հանձնող անձնազատվում է հանձնված թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, դրանց պրեկուրսորները կամ խիստ ներգործող կամ թունավոր նյութերն ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար սույն գլխի 266-րդ, 268-րդ և 275-րդ հողվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Իսկ ահա նոր օրենսգրքի հողված 393-ում համանման նորմը շարադրված է հետևյալ բովանդակությամբ՝ սույն հողվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձնազատվում է կամովին հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար: Ներկայացված կարգավորումների վերլուծությունից ակնհայտ է, որ նոր օրենսգրքը անձին ազատում է պատասխանատվությունից թմրամիջոցները հանձնելու և դրա հետ մեկտեղ թմրամիջոցների շրջանառության հետ կապված հանցագործու-

⁵ См Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный) / под ред. А.И. Чучаева. М.: КОНТРАКТ; ИНФРА-М, 2010, էջ 62:

թյանը բացահայտելուն աջակցելու դեպքում: Փաստորեն, անհրաժեշտ է թվարկված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը: Ըստ մեզ՝ նման մոտեցումը միանգամայն արդարացված է: Հարցն այն է, որ թմրամիջոցների շրջանառությունը, որպես կանոն, ներառում է անձանց լայն շրջանակ և կարելի է ասել, որ այս հանցատեսակը ունի ցանցային բնույթ: Ուստի, հողվածում նշված առարկաների հանձնումը ամենևին բավարար չէ սույն հանցատեսակի դեմ պայքարի և կանխարգելման տեսանկյունից: Իրավապահ համակարգի խնդիրն է թմրամիջոցների շրջանառության ողջ շղթայի

բացահայտումը և դրանում ներգրավված անձանց պատասխանատվության ենթարկելը: Այս հարցում նոր օրենսգրքում ներկայացված լուծումը կարող է զգալի օգուտներ բերել: Ողջունելի է նաև այն, որ ներկայիս խրախուսական նորմը ընդլայնել է դրա կիրառման շրջանակը: Նախկին տարբերակում իրացնելը չէր մտնում խրախուսական նորմի կիրառման տիրույթի մեջ՝ դրանով սահմանափակելով իրավապահների հետ համագործակցության և տվյալ հանցագործության բացահայտմանն աջակցող անձանց հնարավոր շրջանակը:



ՍԵՐԳԵՅ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ

**ԽԱՔԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆՆՉԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱ՞,
ԹԵ՞ ԶԱԿԱԻՐԱԿԱԿԱՆ ԱՐԱՐՔ
(ՉԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ)**

Ընդհանուր դրույթներ

Հայտնի է, որ նախաքննության ընթացքում քննիչն օգտագործում է հատուկ մշակված հնարքներ, որոնք նպատակաուղղված են քննչական գործողությունների արդյունավետ կատարումն ապահովելու համար: Այդպիսի հնարքներն անվանում են տակտիկական (մարտավարական): Այդպիսի հնարքները հայտնի են վաղ ժամանակներից: Հին հույների մոտ «տակտիկա» հասկացությունը նշանակում էր «գործ կառուցելու արվեստ»:¹ Ներկայումս, այն օգտագործվում է որպես նախատեսված նպատակին հասնելու մեթոդների և հնարքների ամբողջություն:² Կարելի է եզրակացնել, որ տակտիկական հնարքը քննչական գործողություններ կատարելու առավել ուժեղ և արդյունավետ միջոց է, և որն օրենքի շրջանակներում ընտրում է քննիչը՝ կախված կոնկրետ իրավիճակից: Խաբեությունը հասկացվում է որպես ինչոր մի բանի մասին ապակողմնորոշիչ, մոլորեցնող, կեղծ պատկերացում:³ Ստացվում է, որ որպես տակտիկական հնարք՝ խաբեությունը քննիչի կողմից կիրառվող միջոց է քննչական գործողությունների ժամանակ, որն ուղղված է առավել պրոդուկտիվ կերպով հանցագործությունների բացահայտմանը: Գրականության մեջ քննիչի կողմից քննչական գործողությունների ժամանակ օգտագործվող այդպիսի մեթոդները հաճախ կոչվում են «հոգեբանական թակարդներ» և «Քննչական հնարքներ», որը կարելի է մեկնաբանել որպես խաբեություն: Լ.Լ. Կանսակին նշում է, որ եթե տակտիկական (մարտավարական) հնարքը հիմնված

է քննիչի օրինական և բարոյական տեսանկյունից թույլատրելի գործողությունների վրա, ապա դրանք պետք է անվանել «հոգեբանական հնարքներ»⁴:

Որպես տակտիկական հնարք՝ խաբեությունը կարող է դրսևորվել ակտիվ և պասիվ ձևով:

Ակտիվ խաբեություն. Խաբեությունը դրսևորվում է ակտիվ ձևով, երբ խոսքը ճշմարտության գիտակցված խեղաթյուրման մասին է⁵: Մինչդատական վարույթի ընթացքում կատարվում են մի շարք քննչական և դատավարական գործողություններ, որոնցից է, օրինակ՝ հարցաքննությունը: Մինչդատական վարույթում հարցաքննություն կատարելու լիազորություն ունի քննիչը, ով տվյալ քննչական գործողությունը կատարելիս կարող է օգտագործել տարաբնույթ տակտիկական հնարքներ՝ նպատակ ունենալով հարցաքննության միջոցով առավել արդյունավետ կերպով բացահայտել գործի լուծման համար նշանակություն ունեցող տեղեկությունները, այն է՝ ենթադրյալ կատարված հանցանքի, դրա կատարմանը մասնակցած անձի կամ անձանց վերաբերյալ տվյալներ ստանալը: Նմանատիպ տակտիկական հնարքներից մեկը հարցաքննվողին, մասնավորապես կասկածյալին կամ մեղադրյալին, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության տրամադրումն է: Օրինակ՝ երբ երկու անձինք կասկածվում են նույն հանցավոր արարքի ենթադրյալ կատարման մեջ, և քննիչը Ա-ին հարցաքննության ընթացքում առաջարկում է հանդես գալ ինքնախոստովանական ցուցմուն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

¹ Большая иллюстрированная энциклопедия / В 32 т. Т. 27. М.: АСТ Астрель, 2010. С. 88.
² Большой словарь иностранных слов: сост. А.Ю. Москвин. М., 2008. С. 544.
³ Է.Աղայան. Արդի Հայերենի բացատրական բառարան, էջ 553
⁴ Латко Д.К. О допустимости обмана в следственной практике, стр. 116
⁵ С. В. Купрейченко. Введение в заблуждение и обман в уголовном процессе: соотношение понятий, последствия и процессуальное реагирование, стр. 146

քով, քանի որ հարակից սենյակում հարցաքննվող Բ-ն արդեն իսկ տրամադրել է ամբողջական տեղեկատվություն Ա-ի կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի մասին: Սակայն տվյալ պնդումն անելիս քննիչը փաստացիորեն չի տիրապետում Ա-ին հայտնած տեղեկատվությանը, դեռ ավելին՝ Բ-ն հրաժարվել է վարույթ իրականացնող մարմնի հետ համագործակցելուց ու նրան որևէ տեղեկատվություն տրամադրելուց: Տվյալ պարագայում Ա-ն միզուցե ընդունի իր մեղքը և (կամ) տեղեկատվություն տրամադրի Բ-ի կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի վերաբերյալ՝ հիմնվելով և (կամ) դրդված լինելով քննիչի՝ իրեն հայտնած տեղեկություններից:

Պասիվ խաբեություն. Խաբեությունը դրսևորվում է պասիվ ձևով, երբ սուբյեկտը միտումնավոր լռում է ճշմարտության մասին⁶: Այսինքն՝ պասիվ խաբեությունը քննիչի կողմից լռությունն է, որը դրսևորվում է դիտավորությանը ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականությունը թաքցնելով: Պետք է պարզել, թե արդյոք լռությունը կարելի է համարել իրականությունը խեղաթյուրելու միջոց, թե՛ այն ինչ-որ բան գաղտնի պահելու եղանակ է: Կ.Մելիտան դեռևս 1903թ. «Ստի հոգեբանությունը» վերտառությամբ աշխատանքում ստի դասակարգման մեջ առանձնացնում էր լռությամբ ստի տեսակը:⁷ Ամերիկացի հոգեբան, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Պոլ Էքմանը լռությունը դիտարկում է ստի հոգեբանական համատեքստում: Իր՝ «Ստի հոգեբանությունը» վերտառությամբ աշխատությունում ընդգծում է ստի հիմնական ձևերը՝ մատնանշելով, որ սուտը կարող է ունենալ լռության և իրականության խեղաթյուրման ձև: Լռությամբ ստախոսը թաքցնում է ճշմարիտ տեղեկատվությունը, բայց, միևնույն ժամանակ, չի հայտնում նաև կեղծը, իսկ խեղաթյուրումն իրենից ենթադրում է ոչ միայն ճշմարտությունը թաքցնելը, այլև կեղծ տեղեկատվություն տրամադրելը:⁸ Սակայն, նա նախատեսում է նաև բացառություն-

ներ: Նա նշում է. «Այն դեպքերում, երբ բժիշկը պացիենտին չի հայտնում, որ նրա հիվանդությունը մահացու է կամ ոստիկանը կասկածյալին չի տեղեկացնում, որ փաստաբանի հետ նրա խոսակցությունը լսվում է, ապա որևէ սուտ տեղեկատվություն նա չի փոխանցում, սակայն այս բոլոր դեպքերն ընկնում են ստի բնորոշման ներքո: Այստեղ «խաբվողները» չեն խնդրել, որ իրենց մոլորեցնեն, իսկ «լռողները» գործել են դիտավորությամբ, առանց նախապես տեղեկացնելու առանձին փաստեր թաքցնելու իրենց մտադրության մասին: Տեղեկատվությունը թաքցվում է դիտավորությամբ և ոչ թե պատահականորեն: Հանդիպում են նաև բացառություններ: Լռությունը չի համարվի սուտ, եթե այդ մասին առկա է որոշակի նախնական պայմանավորվածություն: Օրինակ՝ եթե պացիենտը նախապես խնդրում է բժշկին իր առողջության մասին վատ տեղեկություններ չհայտնել, ապա լռությունը չի համարվի սուտ: Սակայն օրենքով կասկածյալը իր փաստաբանի հետ ունի կոնֆիդենցիալ հանդիպման իրավունք, ուստի այս իրավունքի խախտման մասին լռելը բոլոր դեպքերում կհամարվի ստել»⁹:

3. *Խաբեության՝ որպես տրակտիկական միջոցի թույլատրելիության սահմանները*

Առաջին հայացքից կարող է թվալ, թե սաբավականին լավ միջոց է հանցավորության դեմ պայքարի գործում, սակայն տվյալ մեթոդի կիրառումը կարող է առաջ քաշել մի շարք հարցեր, մասնավորապես՝ արդյոք որոշակի տեղեկատվություն թաքցնելու կամ իրականությանը մասնակի կամ ամբողջությամբ հակասող տեղեկատվություն հայտնելը ընդունելի արարք է, թե ոչ, և, եթե ընդունելի է, ապա պետք է սահմանափակվի ինչ-որ պայմաններով, թե՛ ոչ: Տվյալ հարցի շուրջ դեռևս միասնական մոտեցում առկա չէ: Առաջին տեսակետի կողմնակիցները նշում են, որ քննչական պրակտիկան պետք է հիմնվի օրենքի նկատմամբ հարգանքով, հետևաբար՝ համապատասխանի բարոյականության սկզբունքներին, ինչը նշանակում

⁶ Филип Меленчук .Тактико-Криминалистические средства досудебного производства по делам о мошенничестве с использованием сети интернет, стр. 21

⁷ Արթուր Ղամբարյան .Քննիչի լռությունը. տակտիկա, թե՛ խաբեություն, էջ 1

⁸ The Concept of Lie and Its Identification in Criminal Proceedings/Ekman, P. (2018). Psychology of Lies. Lie to me if you can. - SPb.: Peter, - 304 p.

⁹ Արթուր Ղամբարյան. Քննիչի լռությունը. տակտիկա, թե՛ խաբեություն, էջ 1

է, որ այս դեպքում անհնար է խոսել խարդախ միջոցներով լավ նպատակին հասնելու մասին: Այս տեսակետի կողմնակիցն էր Մ.Ս. Ստրոգովիչը, ով նշում է. «Խաբեությունը կարող է լինել և՛ ակնհայտ սուտ, և՛ ունենալ թաքնված բարդ ձև: Այսինքն, բառերը կարող են ճշմարիտ լինել, բայց խոսքն ինքնին կարող է հնչել այնպիսի ձևով, այնպիսի հուզականությամբ ու համապատասխան դեմքի արտահայտություններով, որ դատավարության մասնակիցը կարող է սուտը ընդունել որպես ճշմարտություն և հակառակը: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ խաբեությունը մատուցվում է խորամանկ ձևով, այն թույլատրելի չի դարձնում: Ընդհակառակը այն ձեռք է բերում անհանդուրժողական, անօրինական և անբարոյական բնույթ»¹⁰

Երկրորդ տեսակետի կողմնակիցները հանդես են գալիս հակափաստարկով, ըստ որի՝ առաջին տեսությունը իդեալական է ու դեկլարատիվ և չի կարող համապատասխանել ժամանակակից աշխարհի իրողություններին: Իհարկե, պետք է հիշել, որ քննչական գործողությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով, սակայն գործնականում մեծ ծավալի աշխատանքը, ժամանակի սղությունը, հանցագործության հետ աշխատանքը միշտ չէ, որ թույլ է տալիս կիրառել օրինակելի հնարքներ¹¹: Առաջիններից մեկը, ով բարձրացրել է խաբեության թույլատրելիության հարցը, եղել է Ռ.Ս.Բելկինը, ով նշում էր, որ այն պայմանները, որոնցում այսօր աշխատում են վարույթ իրականացնող մարմինները, իրապես էքստրեմալ (արտակարգ) են: Բացի գերծանրաբեռնվածությունից և ժամանակի մշտապես առկա սղությունից՝ գնում է մոլի պայքար հանցագործությունների բացահայտման դեմ հանցավոր աշխարհի կողմից: Այդ իսկ պատճառով անթույլատրելի է քննիչին զրկել ցանկացած տակտիկական միջոցից (հնարքից), որն ուղղված է հանցավորության դեմ պայքարին, միայն այն պատճառով, որ այն (տակտիկական միջոցը) կարող է կասկած առաջացնել «բարոյական մաքրության» վերացական պատկերացումների մասին:¹²

Բելկինը, ով առաջինն է խոսել խաբելության թույլատրելիության մասին, մատնանշել է նաև դրա բացարձակ անթույլատրելիության դեպքերը, երբ դա ոչնչով չի կարող արդարացվել: Այսպես, խաբեությունը կհամարվի անօրինական հետևյալ դեպքերում.

1. Քննչական գործողությունների ենթարկվող անձի իրավական անտեղյակության դեպքում (իր իրավունքների և պարտականությունների անտեղյակության, իր գործողությունների հետևանքների մասին սխալ պատկերացումների դեպքում)
2. Գիտակցաբար անձին տրված խոստումների դեպքում
3. Կեղծված ապացույցների դեպքում
4. Քննչական գործողությունների ենթարկվող անձի մոտ հոգեկան և այլ արատների առկայության դեպքում
5. Անձի առեղծվածային և կրոնական նախապաշարմունքները հաշվի առնելու դեպքում:¹³

Գիտնականների մի խումբ էլ հակված է այն կարծիքին, որ իրավապահ գործունեությունը պետք է ունենա բարոյական սկիզբ: Այն չի կարող և չպետք է հակասությունների մեջ մտնի բարոյականության պահանջների հետ, և եթե խորամանկության տակ նկատի է առնվում նպատակի հետապնդումը խաբեության ճանապարհով, ապա բնական է, որ չի կարող խոսք գնալ «խորամանկ» մեթոդների կիրառման մասին նախնական քննության ընթացքում ու դատարանում, նույնիսկ այն դեպքում, երբ նմանատիպ մեթոդները օգնեն իրականության բացահայտմանը: Դրանք պետք է ճանաչել անթույլատրելի միջանձնային հարաբերությունների բարոյական սկզբունքների տեսանկյունից, քանի որ դրանք վկայում են անձի նկատմամբ նվազագույն հարգանքի բացակայության մասին:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Քննչական գործողություններ կատարելիս անթույլատրելի է բռնու-

¹⁰ А. Р. Белкин. Теория доказывания. Цит. Строгович М. С. Проблемы судебной этики // Колл. монография. М., 1974. С. 20.

¹¹ Латко Д. К. О допустимости обмана в следственной практике, стр. 117

¹² Д. В. Зотов, В. А. Панюшкин. Обман в уголовном судопроизводстве: Сущность, Допустимость, формы, стр. 80

¹³ Белкин Р. С. Нравственные начала деятельности следователя органов внутренних дел. Лекция. - М., 1999 стр. 22-23

թյան, սպառնալիքների և այլ անօրինական միջոցների կիրառումը, որոնք կարող են անձանց կյանքի և առողջության համար վտանգ ստեղծել»:¹⁴ «Այլ անօրինական միջոցներ» հասկացությունը չի մեկնաբանվում ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով: Այդպես կարելի է ենթադրել, որ ՌԴ Քր.Դատ օրենսգրքը այդպիսի անթույլատրելի, անօրինական միջոցներից է համարում խաբեությունը, քանզի այն, ըստ էության, չի համապատասխանում դատավարության սկզբունքներին, նպատակներին ու խնդիրներին: Սակայն, մյուս կողմից, ՌԴ Քր.Դատ օրենսգրքում անօրինական միջոցների դասակարգման մեջ «խաբեություն» հասկացությունը չի հանդիպում, և հաշվի առնելով այդ փաստը՝ քննիչը իրավասու է կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ և օրենքներով:

Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է. «...արգելվում է բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ և իրավունքները ոտնահարող այլ անօրինական միջոցների կիրառմամբ ցուցմունք վերցնել տուժողից, կասկածյալից կամ մեղադրյալից, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից»:¹⁵ Այստեղ խոսքը գնում է միայն ցուցմունք վերցնելիս խաբեության կիրառման անթույլատրելիության մասին և կարելի է ենթադրել, որ մյուս քննչական գործողությունների դեպքում որպես տակտիկական միջոց խաբեությունը կիրառելը արգելված չէ: Բացի այդ, տվյալ օրենքի նորմը չի մանրամասնում, թե, որ տեսակի խաբեությունն է արգելվում՝ ակտիվ, թե՞ պասիվ:

Նիդերլանդների թագավորության Վերաքննիչ դատարանը Guida Quint and Van den Brink & Co 1990 գործով արգելել է քննիչներին քննչական գործողությունների ժամանակ իրականությունը խեղաթյուրող կեղծ հայտարարություններ անել և կեղծ խոստումներ տալ անձից հանցանքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:¹⁶

ԱՄՆ Իլինոյս և Օրեգոն նահանգներում արգելվել է խաբեությամբ տակտիկական հնարքների կիրառումը անչափահասների նկատմամբ, սակայն դրա կիրառումը այնուամենայնիվ օրենսդրորեն արգելված չէ 50 նահանգներում:¹⁷ Դրան գումարած, ԱՄՆ մի շարք նահանգների Գերագույն դատարանները իրենց նախադեպային որոշումներում թույլատրել են քննիչների կողմից խաբեության կիրառումը: Այսպես, Oregon v. Mathiason ԱՄՆ Գերագույն դատարանը թույլատրել է քննիչներին խաբեությամբ պնդել, որ կասկածյալի մատնահետքերը հայտնաբերվել են հանցանքի վայրում այն դեպքում, երբ նման բան իրականում տեղի չի ունեցել:¹⁸

Commonwealth v Gallet-ի գործով Մասաչուսեթսի Գերագույն դատարանը հաստատել է ամբաստանյալի խոստովանության օրինականությունը: Սակայն, ամբաստանյալը պնդում էր, որ իրեն հարցաքննողները ճիշտ չեն ներկայացրել գործի հետ կապված ապացույցների բովանդակությունը և կեղծ երաշխիքներ են տվել, որի արդյունքում ամբաստանյալը ինքնախոստովանական ցուցմունք է տվել:¹⁹

1969 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը Frazier v.Cupp գործով հաստատել է քննիչի կողմից տակտիկական հնարքի՝ խաբեության միջոցով ձեռքբերված ապացույցների թույլատրելիության փաստը: Այս գործով Գերագույն դատարանը հաստատել է ամբաստանյալի խոստովանական ցուցմունքի օրինականությունը, որը քննիչի կեղծ հայտարարության արդյունքն էր այն մասին, թե իր հանցակիցը խոստովանական ցուցմունք է տվել: Սույն գործով Գերագույն դատարանը արձանագրել է, որ քննիչի կողմից խաբեությամբ արված տակտիկական հնարքը, այնուամենայնիվ, կապ ունի գործի բնույթի հետ, սակայն այն չի կարող «այլ կերպ» ազդել ամբաստանյալի կամավոր ձևով խոստովանության վրա և չի կարող այդ փաստը դարձնել անընդունելի ու անօրինական:

¹⁴ Уголовно процессуальный кодекс России, ч.4,ст.164

¹⁵ К.Нахапетян. Критерии допустимости тактических приемов (на примере тактического обмана, ст. 2

¹⁶ New journal of European Criminal Law .A pragmatic attitude: The right to silence in the Netherlands

¹⁷ Nigel Quiroz.Five Facts About Police Deception and Youth You Should Know,

¹⁸ Cynthia, J. Najdowski. Deception in the interrogation room

¹⁹ Should Investigators Be Allowed To Lie About Evidence To A Subject During Interrogation?, page 2

Կարևոր է ընդգծել Գերագույն դատարանի հետևյալ սահմանումը՝ «այլ կերպ ազդել կամավոր ձևով խոստովանության վրա», ինչը նշանակում է, որ եթե սուբյեկտի իրավունքները հարգվել են, այսինքն՝

1) եթե քննիչի կողմից չի եղել ուժի կիրառման կամ անխուսափելի վնասակար հետևանքների առաջացման սպառնալիք

2) եթե չի եղել պատիժը մեղմացնելու խոստում

3) եթե քննիչը քննչական գործողություններն իրականացնելիս ղեկավարվել է դատարանների կողմից սահմանված կարգով, ապա խաբեությունը որպես տակտիկական միջոց չի կարող վտանգի տակ դնել ինքնախոստովանության օրինականության հարցը:²⁰

People v. Thomas գործով Նյու Յորքի Վերաքննիչ դատարանը հանգել է այն որոշման, որ քննիչների կողմից կիրառված տակտիկական հնարքի արդյունքում իր մանկահասակ երեխայի սպանության մեջ կասկածվող հոր ինքնախոստովանական ցուցմունքը կամավոր չէ, քանզի նրանք սուտ տեղեկություններ են տրամադրել կասկածյալին այն մասին, որ իր երեխան ողջ է և, որ նրա կնոջը սույն գործով պետք է մեղադրանք առաջադրվի : Արդյունքում հայրը ինքնասպանության փորձ էր կատարել: Վերաքննիչ դատարանը վճռեց, որ խաբեությամբ զուգորդվող տակտիկական հնարքներն անթույլատրելի են, քանզի ուղղված են անձի կամքին հակառակ:²¹ ԱՄՆ Նյու Յորք նահանգում այժմ քննարկվում է օրենքի մի նախագիծ, համաձայն որի՝ քննիչներին արգելվելու է օգտագործել խաբեությունը որպես տակտիկական միջոց քննչական գործողությունների ժամանակ: Դա ելնում է այն դիրքորոշումից, որ տվյալ տակտիկական միջոցի կիրառումը քննչական գործողությունների ժամանակ կարող է հանգեցնել ոչ կամավոր խոստովանության: Տվյալ հանգամանքն անընդունելի է, քանզի պատշաճ կերպով քննչական գործողությունների ընթացքն ապահովելու և անձի ինքնա-

խոստովանական ցուցմունքն ապահովելու համար քննիչները պարտավոր են՝

1) Ապահովել, որպեսզի սուբյեկտի իրավունքները չխախտվեն

2) Խուսափել ուժի կիրառումից, դրա կիրառման սպառնալիքից և անխուսափելի վնասակար հետևանքներ առաջացնելու սպառնալիքից

3) Խուսափել պատիժը մեղմացնելու խոստումներից

4) Անցկացնել քննչական գործողությունները դատարանների կողմից սահմանված կարգով:²²

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ խաբեությունը՝ որպես տակտիկական միջոց հանցագործությունների բացահայտման արդյունավետ միջոցներից մեկն է, սակայն դրա կիրառումը չպետք է լինի անսահմանափակ: Հարկ է ընդգծել Բախինի հետևյալ խոսքերը. «Իրական խաբեությունը օգտագործվել և օգտագործվելու է քննիչների կողմից որպես տակտիկական հնարք, և պետք է առանձնացնել ու արգելել այն խաբեությունը, որը հակասում է քրեադատավարական իրավունքի սկզբունքներին ու նպատակներին:²³ Այսինքն՝ խաբեությունը չպետք է հակասի անձի կամքին, չպետք է հիմնված լինի անձի՝ իր իրավունքների և պարտականությունների անտեղյակության, կեղծ ապացույցների, ուժի, դրա կիրառման սպառնալիքի, սուտ խոստումների, անձի մտավոր և հոգեկան արատներ ունենալու դեպքում:

4. Քննիչի լռության սահմանները. ՀՀ քրեական դատավարությունում խաբեությամբ ապացույցներ ձեռք բերելն արգելվում է (ՀՀ քր. դատ. նոր օր-ի 97-րդ հոդվածի 2-րդ մաս), սակայն խաբեությունը պետք է տարբերակել փաստերի մասին լռությունից: Քր. դատ. օր-ով սահմանված չէ որևէ դրույթ ըստ որի՝ քննիչը պարտավոր է մեղադրյալին իրազեկելու քրեական գործով ձեռք բերված բոլոր փաստական տվյալների մասին:²⁴ Քննիչի լռության թույլատրելիության հարցի վերաբերյալ իրավաբանա-

²⁰ Law School Case Brief. Frazier v. Cupp - 394 U.S. 731, 89 S. Ct. 1420 (1969)

²¹ Law School Case Brief. People v. Thomas - 729 P.2d 972

²² Should Investigators Be Allowed To Lie About Evidence To A Subject During Interrogation?

²³ Б. В. Якимчук. Обман как тактическое средство при производстве следственных (розыскных) действиях с участием иностранцев, ст. 12

²⁴ Արթուր Ղամբարյան. Քննիչի լռությունը.տակտիկա, թե՛ խաբեություն, էջ 2:

կան գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանը նշում է. «Քննիչի լռության հանգամանքին համալիր գնահատական տալու համար առնվազն մի քանի ասպեկտներ պետք է առաջադրվեն:

Նախ, հայրենական դատավարական համակարգը համարվում է «ինկվիզիցիոն», ուստի մինչդարական վարույթի լիարժեք մրցակցային լինելու մասին խոսելը հիմնավորված չէ: Օրինակ՝ Իսպանիայի դատավարական օրենսդրությունը լիարժեք երաշխավորում է մրցակցային սկզբունք, ընդ որում՝ լռելու իրավունքը վերապահվում է միայն պաշտպանին. վերջինս կարող է իր հերքող ապացույցները միջնորդել ներկայացնել անմիջապես դատաքննության փուլում, եթե ողջամտորեն գտնում է, որ դրանք խոցելի կլինեն մինչդարական վարույթի փուլում և այլն:

Հաջորդ հարցը վերաբերում է նրան, թե խոսքը որ տվյալը թաքցնելու մասին է: Մասնավորապես, իր դեմ ցուցմունք տված վկայի մասին չի կարելի լռել, քանի որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկային: Մեր օրենսդրությամբ սխալմամբ դա նույնացրել ենք առերեսման հետ (ՀՀ Քր. դատ. նոր օր. 224-րդ հոդված), ինչի արդյունքում հարցեր տալու իրավունք ենք վերապահել նաև վկային, ինչն անհեթեթություն է:

Այլ բնույթի տեղեկատվությունը, այնուամենայնիվ, պետք է ողջամտորեն ժամկետում հասանելի լինի մեղադրյալին մինչև նյութերը ծանոթացման համար ներկայացնելը, որպեսզի վերջինս զրկված չլինի համապատասխան պաշտպանական տակտիկա կիրառելուց»:

Քննիչի լռությունը կարող է որակվել որպես պասիվ խաբեություն և ձևավորել լռության էստոպել (Estoppel by silence), եթե՝ քննիչը օրենքով պարտավոր է տեղեկությունները տրամադրել մեղադրյալին, քննիչը տիրապետում է այդ տեղեկություններին, այսինքն՝ դրանք առկա են քրեական գործում, քննիչն այդ տեղեկությունները մեղադրյալին չտրամադրելով, նպատակ է հետապնդում մեղադրյալի վիճակի

վատթարացման հաշվին ստանալ անբարեխիղճ առավելություն:²⁵ Այսինքն, եթե քննիչը օրենքով սահմանված կարգով պարտավոր էր և կարող էր մեղադրյալին գործի փաստական հանգամանքների վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն, սակայն մյուս կողմի նկատմամբ անբարեխիղճ առավելություն ձեռքբերելու նպատակով լռել է, ապա զրկվում է այդ առավելությունը օգտագործելու իրավունքից: Օրինակ՝ եթե քննիչը պարտավոր է մեղադրյալին տրամադրել գործի վերաբերյալ արտավարության փաստաթղթերը կամ փորձագետի կարծիքը, սակայն լռում է, և այդ լռության արդյունքում մեղադրյալը ինքնախոստովանական ցուցմունք է տալիս, ապա այդ ցուցմունքը չի կարող դրվել մեղադրական եզրակացության հիմքում, քանզի, եթե քննիչը ձեռնամուխ լիներ օրենքով սահմանված իր պարտականությունների կատարմանը և տրամադրել վերոնշյալ փաստական տվյալները, ապա մեղադրյալն ըստ էության չէր տա ինքնախոստովանական ցուցմունք:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ քրեական դատավարությունը մրցակցության ոլորտ է և անթույլատրելի է մինչդարական վարույթում քննիչից պահանջել մեղադրյալին իրազեկելու իրեն հայտնի բոլոր փաստական տվյալների մասին: Սակայն, այն դեպքերում, երբ քննիչը պարտավոր է մեղադրյալին տրամադրել որևէ տեղեկատվություն, սակայն դա չի անում՝ նպատակ ունենալով մեղադրյալի վիճակի վատթարացման հաշվին ստանալ անբարեխիղճ առավելություն, ապա քննիչի լռությունը կարող է ձևավորել լռության էստոպել և զրկել այդ առավելությունն օգտագործելու հնարավորությունից:

ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի 21-րդ հոդվածն ամրագրում է կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը: Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, պահպանելով անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է բոլոր ապացույցները ներկայացնելու և համակողմանի հետազոտելու համար անհրաժեշտ պայմաններ: Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգր-

²⁵ Տես նույն աշխատությունը, էջ 2

քով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ ապացույցներ:²⁶ Այսինքն՝ քննիչի լռության անթույլատրելիությունը հիմնավորվում է մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի պահպանմամբ: «Օջալանն ընդդեմ Թուրքիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այն դիրքորոշումն է հայտնել, որ զենքերի հավասարության սկզբունքն արդարացի դատաքննության լայն հասկացության հատկանիշներից մեկն է, որն ընդգրկում է նաև այն հիմնարար իրավունքը, որ քրեական վարույթը պետք է մրցակցային լինի: Քրեական գործով մրցակցային դատավարության իրավունքը նշանակում է, որ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի տեղեկանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին, ինչպես նաև մեկնաբանելու դրանք: Հնարավոր են տարբեր եղանակներ, որոնցով ներպետական իրավունքը կարող է երաշխավորել այս պահանջի բավարարումը: Սակայն, անկախ նրանից, թե ինչպիսի միջոց է ընտրվել, պետք է ապահովվի փաստարկների ներկայացման վերաբերյալ մյուս կողմի իրազեկումը, ինչպես նաև վերջինիս պետք է իրական հնարավորություն տրվի մեկնաբանելու դրանք:²⁷ Բացի այդ, ՀՀ Վճռաբեկ դատարանը ԿԴ/0008/06/11 գործով արձանագրել է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է: Այս սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Կողմերի հավասարությունը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ մի կողմը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն ար-

դար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ առանց կողմերի հավասար տեղեկացվածության՝ դատական քննարկումը նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների անհամաչափ ձևականացում և առարկայագրկում:²⁸ Ստացվում է, որ դատաքննությունը դիտվում է որպես մրցակցային տիրույթ մեղադրողի և պաշտպանության միջև, իսկ դատավորը չեզոք կողմն է, ով պետք է հնարավորություն ստեղծի, որպեսզի մրցող կողմերն իրենց պնդումները պաշտպանելիս հանդես գան հավասար դիրքերից և իրենց գործողություններով չխախտեն «զենքերի հավասարության» սկզբունքը: Սույն համատեքստում դատաքննության ժամանակ քննիչի լռությունը չի կարող համապատասխանել «զենքերի հավասարության» սկզբունքին, քանզի լռելով քննիչը դիտավորությամբ նպատակ ունի ձեռքբերելու անբարեխիղճ առավելություն, ինչը խախտում է հավասարակշռությունը կողմերի միջև և ստեղծում անհավասար պայմաններ մրցակցելու համար:

Եզրահանգում: Քրեական դատավարությունը մրցակցության ոլորտ է և անթույլատրելի է մինչդատական վարույթում քննիչից պահանջել մեղադրյալին իրազեկելու իրեն հայտնի բոլոր փաստական տվյալների մասին: Սակայն, այն դեպքերում, երբ քննիչը պարտավոր է մեղադրյալին տրամադրել որևէ տեղեկատվություն, սակայն դա չի անում՝ նպատակ ունենալով մեղադրյալի վիճակի վատթարացման հաշվին ստանալ անբարեխիղճ առավելություն, ապա քննիչի լռությունը կարող է ձևավորել լռության էստոպել և զրկել այդ առավելությունն օգտագործելու հնարավորությունից: Բացի այդ, եթե այնպիսի փաստական տվյալի մասին է խոսքը գնում, որն իր բնույթով որոշիչ նշանակություն ունի այս կամ այն իրավունքի սահմանափակման վիճարկման տեսանկյունից, ապա այդ դեպքում քննիչի լռությունը իրավաչափ չի կարող դիտվել:

²⁶ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք
²⁷ *Ocalan v Turkey*, 2003 թվականի մարտի 12, գանգատ թիվ 46221/99, կետ 166
²⁸ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը գործ թիվ ԿԴ/0008/06/11-ի մասին

ԱՆԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության
ֆինանսական վերահսկողության իրավական սպասարկման
բաժնի իրավախորհրդատու

**«ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՈՐՈՇ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության պետական սահմանն այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի շրջանակները: Պետական սահմանն է ՀՀ տարածքային ամբողջականության պահպանման երաշխիքը, ուստի խիստ կարևոր է այն կարգավորող պատշաճ օրենսդրական կարգավորումներ ունենալը:

Պետական սահմանի անվտանգության կարևորությունը հաշվի առնելով՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց նկատմամբ որոշակի սահմանափակումներ են նախատեսվել: Այդ սահմանափակումների խորքային ուսումնասիրությունն ու վերլուծությունն առաջ է բերում սահմանադրական նորմերին դրանց համապատասխանության կասկած:

Այսպես, Օրենքի 22¹-րդ հոդվածի համաձայն՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է օգտագործել ռազմիկ խմիչքներ, շփվել սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ, զրուցել սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների ու բնակիչների հետ և այլն: Մինչև անդրադառնալը թվարկված սահմանափակումների բովանդակությանը՝ նախ բացահայտենք «սահմանային շերտ» հասկացության էությունը: Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *սահմանային շերտը* սահմանային գոտու մի մասն է, որը հարում է պետական սահմանին կամ պետական սահմանը ջրային տարածքով անցնելիս սահմանային ջրերի ափերին՝ մինչև մեկ կիլոմետր լայնությամբ: Սահմանային շերտ մուտք գործած անձանց նկատմամբ Օրենքով սահմանված սահմանափակումները թերևս

խնդրահարույց չլինեին, եթե տեղի ունեցած չլինեին պատերազմական վերջին իրադարձությունները: Խոսքը 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի մասին է, որի արդյունքում բազմաթիվ բնակավայրեր և ճանապարհներ, մարդկանց պատկանող հողատարածքներ ու բնակելի տներ հայտնվել են սահմանային շերտի տարածքում²: Իրերի նման դրությունն էապես փոխել է Օրենքով նախատեսված սահմանափակումների բովանդակությունը՝ դրանք դարձնելով ոչ իրավաչափ:

Օրենսդրական մակարդակում նման անորոշ և լայն մեկնաբանման տեղիք տվող ձևակերպումներով լի սահմանափակումներ նախատեսելը հակասում է առնվազն իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին, որոնց բովանդակությունը հետևյալն է.

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. *անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխարեսել իր տվյալ գործողության հետևանքները*³:

¹ Այսուհետ՝ Օրենք

² Օրինակ՝ Մ2 ճանապարհով է անցնում Գորիս-Կապան հատվածը, մեջտեղում են տեղակայված Կարմրաքար, Շոտնուխ, Որոտան, Նոր Առաջածոր, Դավիթ Բեկ և այլ գյուղեր:

Սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան ևս բացահայտել է իրավական որոշակիության սկզբունքի իրավական բովանդակությունը: Այսպես, ըստ Բարձր դատարանի իրավական դիրքորոշումների՝

- Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ *իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում*⁴:

- Իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները *ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները* և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում⁵:

- Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ⁶:

- Որքան ավելի ինտենսիվ է հիմնական իրավունքի սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում⁷:

Անդրադառնալով համաչափության էությանը՝ պետք է նշել, որ Սահմանադրության 78-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 և 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումներում նշվել է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպետք է խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև: Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը պիտանի է այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակի իրագործմանը: *Հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը*: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին⁸:

Վճռաբեկ դատարանը 2018 թվականի հուն-

³ Տե՛ս Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: Օլսսոնն ընդդեմ Շվեդիայի (Olsson v. Sweden (No. 1)) գործով 1988 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10465/83, կետ 61: Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 թվականի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49 և այլն:

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշումը:

⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1289 որոշումները և այլն:

⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումը:

⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1488 որոշումը:

⁸ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ: Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 82:

վարի 12-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 քրեական գործով կայացված որոշմամբ նշել է, որ համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է պիտանի ու անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար⁹ և հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ¹⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ *սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, լինեն համաչափ հետապնդվող նպատակին և կրեն ժամանակավոր բնույթ*¹¹: Կիրառվող ցանկացած «ձևականություն», «սահմանափակում» կամ «տուգանք» պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինական նպատակին¹²: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ¹³:

Այսպիսով, սահմանադրական այս սկզբունքների լույսի ներքո դիտարկենք մեջբերված սահմանափակումներն առանձին-առանձին.

- *Սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է օգտագործել ոգելից խմիչքներ*.

Օրենսդրական նման ձևակերպումն ինքնին շատ լայն է, ընդհանրական և կատեգորիկ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե օ-

րենսդիրը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանային շերտի տարածքում հասարակական կարգի ու անվտանգության ապահովման տեսանկյունից: Սակայն վերջին շրջանում տեղի ունեցած տարածքային փոփոխություններով պայմանավորված, երբ բազմաթիվ բնակավայրեր հայտնվել են սահմանային շերտի տարածքում, ոգելից խմիչք օգտագործելու բացարձակ արգելքը դառնում է ոչ իրավաչափ: Ինդիրն այն է, որ սահմանային շերտի տարածքում հայտնված բնակավայրի բնակիչն իր տանը ոգելից խմիչք օգտագործելու դեպքում խախտելու է Օրենքով սահմանված արգելքը: Միանշանակ է, որ որևէ կերպ չի կարող հիմնավորվել սեփական տանը ոգելից խմիչք օգտագործելու արգելքը, իսկ նորմատիվ իրավական ակտի տառացի մեկնաբանումը և նորմից որևէ բացառություն չնախատեսելը դրան է հանգեցնում:

Ակնհայտ է, որ սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչներին սեփական տանը ոգելից խմիչք օգտագործելն արգելելը չի կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ սահմանային ռեժիմի և սահմանում տիրող իրավիճակի վրա, որպիսի նպատակ որ ենթադրաբար պետք է հետապնդի օրենսդրական նման արգելքը: Մյուս կողմից, «ոգելից խմիչքներ օգտագործել» ձևակերպումից որոշակի չէ, թե, օրինակ՝ սահմանային շերտում հայտնված բնակավայրի բնակիչն իր տան խոհանոցում ոգելից խմիչք օգտագործելու դեպքում կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, թե՛ տան պատերից դուրս՝ սահմանային շերտի այլ հատվածում: Ընդ որում, վերջին դեպքում ևս

⁹ «Պիտանիության» չափանիշի համաձայն՝ միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ, «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

¹⁰ Նույն որոշմամբ անդրադառնալով կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ միջամտության սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեքանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

¹¹ Տե՛ս Կուիմովն ընդդեմ Ռուսաստանի (Kuimov v. Russia) գործով 2009 թվականի հունվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 32147/04, կետ 92, 96:

¹² Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5493/72, կետ 49:

¹³ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 65:

Օրենքով արգելված գործողության իրականացման վայրը լրացուցիչ հստակեցման և որոշակիացման կարիք ունի:

- *Սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է շփվել սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ, գրուցել սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ:*

Այս արտահայտությունների առումով ևս առկա չեն չափանիշներ, որոնք իրավակիրառողին հնարավորություն կտան որոշելու, թե անձանց ո՞ր գործողությունները կարող են դիտարկվել Օրենքի իմաստով արգելք ենթադրող շփում կամ գրուց, կամ արդյոք սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ յուրաքանչյուր շփում կամ սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ տեղի ունեցած յուրաքանչյուր գրուց է, որ պետք է դիտարկվի որպես Օրենքի իմաստով արգելված արարք: Փաստորեն, կրկին գործ ունենք կատեգորիկ և խիստ ընդհանրական ձևակերպումների հետ, որոնց իրավաչափությունը ևս այսօրվա իրողության պայմաններում կասկածի տակ է դրվում: Իրավական որոշակիությունից զուրկ այս ձևակերպումները հանգեցնում են այդ նորմերի հատվածական կիրառման: Քննարկված սահմանափակումները, փաստորեն, գործնական կիրառման տեսանկյունից անկանխատեսելի են, դրանք կարող են ցանկացած ժամանակ և ցանկացած մեկնաբանությամբ կիրառվել՝ ձևավորելով իրարամերժ և հակասական պրակտիկա, ինչը բացառելը պետության գերխնդիրներից մեկը պետք է լինի:

Պետք է հաշվի նստել այն իրողության հետ, որ ներկայում սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչների անմիջական շփումը սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ գրեթե անխուսափելի է, երբեմն՝ պարզապես անհրաժեշտ: Նման եզրահանգման հիմք են Մարդու իրավունքների պաշտպանի մի շարք հրապարակումներ՝ կապված մեր բնակիչների և ադրբեջանական զինծառայողների միջև տեղի ունեցած բախումների հետ¹⁴: Այդ հրապարակումներում նկարագր-

ված դեպքերը բազմաթիվ են, և քանի դեռ սահմանային խնդիրներն իրենց հանգուցալուծումը չեն ստացել, դրանք շարունակվելու են: Ուստի, այս պայմաններում հարց է առաջանում՝ արդյոք նման բոլոր դեպքերում պետք է պատասխանատվության ենթարկվեն մարդիկ: Չէ որ ներկայացված բոլոր դեպքերում մարդը հայտնվում է պատասխանատվության, ներգործության միջոցների սպառնալիքի առաջ, իսկ բացառություններ նախատեսված չեն:

Դիտարկվող սահմանափակումների՝ որոշակիության և համաչափության տեսանկյունից խնդրահարույց լինելու մասին է վկայում նաև այն, որ դրանք ի սկզբանե չեն ունեցել որևէ ողջամիտ բացատրություն և հիմնավորում, ինչն անընդունելի մոտեցում է իրավաստեղծման գործընթացում: Օրենքի ընդունման պատմության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներ բովանդակող 22¹-րդ հոդվածով լրացվող ՀՕ-138-Ն օրենքի ընդունման հիմնավորումներում անձանց իրավունքների սահմանափակումներ նախատեսելու կապակցությամբ պարզապես հղում է կատարվել այդ պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի այն դրույթին, որն ընդամենը պարտավորեցնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների սահմանափակումները սահմանել բացառապես ՀՀ օրենքներով¹⁵:

Հատուկ ուշադրության է արժանի Օրենքի վիճարկվող նորմում 2021 թվականի օգոստոսի 16-ից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-320-Ն օրենքով կատարված լրացումը, որով Օրենքի 22¹-րդ հոդվածով ամրագրված՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումները լրացվել են նորերով: Մասնավորապես, օրենսդրական լրացման արդյունքում սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվել է առանց համապատասխան թույլտվության տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական կառույցները և արգելափակոցները, սահմանա-

¹⁴ Հասանելի են, օրինակ՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1682>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1810>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1724>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1795> և այլ հղումներով:

¹⁵ Հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1713&Reading=0> հղումով:

պահ զորքերի կողմից օգտագործվող շենքերը, շինությունները, դիտաշտարակները, տրանսպորտային միջոցները¹⁶:

Բացահայտելով այս նոր սահմանափակման էությունը՝ կրկին հայտնվում ենք նույն խնդրի առջև, երբ սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչներն Օրենքով ամրագրված սահմանափակում ենթադրող գործողություններն իրականացվում են իրենց ամենօրյա բնականոն կյանքի ընթացքում: Անհերքելի է, որ Օրենքում ՀՕ-320-Ն օրենքով կատարված լրացման ժամանակ հաշվի չի առնվել պատերազմից հետո ստեղծված իրավիճակը: Այս առումով, եթե հաշվի առնենք, որ ՀՕ-138-Ն օրենքով սահմանված մյուս արգելքներն օրենսդրական ամրագրում են ստացել 2007 թվականին, այսինքն՝ երբ առկա չէր բնակավայրերի՝ սահմանային շերտերում հայտնվելու գործող իրավիճակը, ապա ՀՕ-320-Ն օրենքի ընդունման ժամանակ պատերազմի հետևանքով տեղի ունեցած տարածքային փոփոխությունները պետք է աներկբայորեն հաշվի առնվեին օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից:

Սահմանակից պետության տարածքը սուկ տեսալուսանկարահանելը (այսինքն՝ արված տեսագրությունը կամ նկարը տեսալուսանկարահանող սարքում (բջջային հեռախոս, ֆոտոխցիկ և այլն) պահպանելը՝ առանց այն որևէ կերպ 3-րդ անձանց փոխանցելու կամ հրապարակելու) որևէ կերպ չի կարող խիստ բացասական անդրադառնալ ՀՀ պետական սահմանի պահպանմանը: Մինչդեռ, նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ սահմանակից պետության տարածքը պարզապես լուսանկարահանելը դիտարկվում է արգելք Օրենքի իմաստով: Այս իրավիճակում միջամտության անհամաչափությունը դրսևորվում է նրա-

նում, որ տեսալուսանկարահանելու արգելքը չի պայմանավորվում արարքի հանգեցրած հետևանքներով: Օրենսդրական նման սահմանափակումն էլ ավելի խնդրահարույց է դառնում մինչ օրս դելիմիտացիա և դեմարկացիա եղած չլինելու պայմաններում: Այսինքն՝ սահմանային շերտում հայտնված անձի համար որոշակի էլ չէ, թե, օրինակ՝ որտեղից է սկսվում սահմանակից պետության տարածքը, որ հասկանա, թե կարող է արդյոք կոնկրետ տարածքը տեսալուսանկարահանել, թե ոչ:

Քննարկված սահմանափակումները անհամաչափության սահմանադրական սկզբունքի ապահովման տեսանկյունից դիտարկելիս հարկ է նշել, որ բացահայտված չէ, թե ինչ իրավաչափ նպատակի է ծառայում սահմանային շերտ մուտք գործած անձանց ոգելից խմիչքներ օգտագործել, սահմանապահ վերակարգերի անձնակազմերի հետ շփվել, սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ զրուցել և առանց համապատասխան թույլտվության սահմանակից պետության տարածքը տեսալուսանկարահանել արգելելը: Նման սահմանափակումներ նախատեսող օրենքների ընդունման հիմնավորումներում պետք է առնվազն պատշաճ հիմնավորումներ ներկայացվեին առ այն, որ սույն հոդվածում քննարկվող արգելքները պիտանի և անհրաժեշտ են օրենքով հետապնդած նպատակին, նման արգելքներ սահմանելն ամբողջությամբ հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին և այդ նպատակի հետ գտնվում է համարժեք հարաբերակցության մեջ, և որ օրենքի նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի ու ավելի մեղմ միջոցով, քան քննարկվող սահմանափակումները նախատեսելն է:

¹⁶ Էլ ավելի հետաքրքրական է, որ ՀՕ-320-Ն օրենքի դեռևս նախագծային փուլում որպես օրենսդրական նման կարգավորման հիմնավորում նշվել է, թե սահմանամերձ բնակավայրի բնակիչների կամ զբոսաշրջիկների կողմից կատարվող նկարահանումները տեսալուսանկարահանող սարքերի և անօդաչու թռչող սարքերի միջոցով չեն վրիպում սահմանակից պետության սահմանապահ ծառայության ներկայացուցիչների ուշադրությունից, ինչն իր հերթին վերջիններիս կողմից նշված գործողությունների վերաբերյալ բողոքի արտահայտման տեղիք է տալիս: Այն, որ սահմանակից պետության սահմանապահ ծառայության ներկայացուցիչները կարող են բողոքի ալիք բարձրացնել տեսալուսանկարահանող սարքերով սահմանամերձ բնակավայրի բնակիչների իրականացրած լուսանկարահանումներից՝ տրամաբանական է, քանի որ նման կերպ բացահայտվում և ապացույցների տեսքով արձանագրվում են նրանց իսկ կատարած խախտումները: Մինչդեռ, առնվազն անտրամաբանական և անպատվաբեր է այն, որ Ադրբեյջանի դրսևորած կամքն ու ցանկությունն է դրվում ներպետական օրենսդրական կարգավորումների հիմքում: Ավելին, նախագծային լուծումների հիմքում նման տրամաբանությամբ առաջ քաշվող հիմնավորումներն առավել խոցելի են դարձնում դրանցով հետապնդվող նպատակի իրավաչափությունն ու այդ կարգավորումների լեգիտիմությունն առհասարակ:

Վերոգրյալի հետ մեկտեղ մտահոգիչ է նաև այս սահմանափակումները խախտելու համար վրա հասնող հետևանքը. Օրենքի 22¹-րդ հոդվածով ամրագրված արգելքները խախտելու դեպքում անձը ենթակա է վարչական պատասխանատվության ՎԻՎ օրենսգրքի 200-րդ հոդվածով ամրագրված իրավախախտումը¹⁷ կատարելու համար (սանկցիան՝ նախազգուշացում կամ տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով):

ՀՕ-138-Ն օրենքով սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներ նախատեսելիս սահմանային շերտի տարածքում բնակավայրեր տեղակայված չլինելու փաստն օրենսդրին չի ազատում օրենսդրական կարգավորումները հասարակության և պետության կարիքների զարգացմանը համահունչ փոփոխելու և երկրում տիրող իրավիճակին համապատասխանեցնելու պարտականությունից: Ուստի, Օրենքի կատարելագործման ընթացքում Օրենքի 22¹-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները լրացնելուց բացի պետք է քննարկման առարկա դառնար նաև մինչ այդ գործող սահմանափակումները պահպանելու նպատակահարմարության կամ դրանք առկա իրավիճակային փոփոխություններին հարմարեցնելու հարցը: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ *օրենքը պետք է կարողանա համընթաց քայլել փոփոխվող հանգամանքներին*¹⁸:

Այն, որ տարիների ընթացքում Օրենքի 22¹-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների գործնական կիրառման անհրաժեշտություն չի առաջացել, դեռևս չի վկայում այդ սահմանափակումների՝ Սահմանադրությանը համահունչ լինելու մասին, և դրանով նորմը չի կորցնում իր հակասահմանադրական բնույթը: Սույն գիտական հոդվածում բարձրացված խնդրի արդիականության և կարևորության մա-

սին է վկայում այն, որ խնդիրը գտնվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջի հրապարակումներից տեղեկանում ենք, որ Օմբուդսմանը բարձրացրել է Օրենքի 22¹-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին դիմելով Սահմանադրական դատարան¹⁹: Հետևելով այդ դիմումի ընթացքին՝ բախվում ենք Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունիսի 7-ի թիվ ՍԴԱՈ-103 որոշմանը, որով սույն գիտական հոդվածում բարձրացված խնդիրը չի կարգավորվել²⁰:

Ամփոփելով վերը քննարկված խնդիրները՝ հարկ ենք համարում նշել հետևյալը. Միանշանակ է, որ օրենսդրական կարգավորումները չպետք է ուղեկցվեն անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակմամբ: Անհրաժեշտ է գտնել բոլոր անձանց իրավունքները ողջամտորեն հավասարակշռող լուծում: Բացի այդ, պետք է պարզ գիտակցել, որ առկա իրավական անորոշության պայմաններում Օրենքի լիարժեք ու ամբողջական կիրառումը գործնականում պարզապես անհնար է լինելու: Ուստի, իրավական որոշակիության սկզբունքի պատշաճ պահպանումը պահանջում է առավել որոշակի և առարկայական դարձնել Օրենքի 22¹-րդ հոդվածով ամրագրված սահմանափակումները, հակառակ պարագայում դրանց ամենալայն մեկնաբանության դեպքում միաժամանակ առաջանում են խնդիրներ համաչափության սկզբունքի պատշաճ ապահովման և երաշխավորման հարցում: Որպես խնդրի լուծում կարող է ծառայել նաև սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչների նկատմամբ Օրենքի 22¹-րդ հոդվածով ամրագրված արգելքները չտարածելը²¹:

¹⁷ Սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաև բնակվելու կանոնները խախտելը.

¹⁸ Տեն Ռիկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvényi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: «Միխայիլ Բորիսենկոն և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» գործով 2009 թվականի ապրիլի 14-ի որոշումը, գանգատ թիվ 18297/08:

¹⁹ Հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1911> հղումով:

²⁰ Հասանելի է https://www.concourt.am/decision/decisions/62a0a35592c3a_sdav-103.pdf հղումով:

²¹ Խնդրին նման լուծում է տրված, օրինակ՝ «Պետական սահմանի մասին» Վրաստանի օրենքով, որի 25-րդ հոդվածի 6-րդ մասում հատուկ շեշտված է, որ սահմանային շերտի ռեժիմը չի տարածվում բնակեցված բնակավայրերի նկատմամբ: Հասանելի է <https://www.matsne.gov.ge/en/document/view/31966?publication=32> հղումով:

ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՎ
ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ)**

Հայաստանի առաջին Հանրապետությունը, որը գոյատևեց ընդամենը երկուսուկես տարի, չհասցրեց ունենալ իր սահմանադրությունը, չնայած որ որոշում էր կայացվել Սահմանադիր ժողովի գումարման մասին¹:

1920 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատված խորհրդային իշխանությունը, երկու տարի անց՝ 1922թ. փետրվարի 3-ին ընդունեց Հայկական ԽՍՀ առաջին Սահմանադրությունը²:

Սոցիալիստական Հայաստանի առաջին սահմանադրությունը խորհուրդների ձևով կազմակերպեց հանրային քաղաքական իշխանությունը:

Անկախ ռասայական և ազգային պատկանելիությունից, ճանաչվում էին բոլոր քաղաքացիների հավասար իրավունքները: Միաժամանակ սահմանափակվում էին բնակչության ոչ պրոլետարական խավերի շահագործող դասակարգի ներկայացուցիչների, հոգևորականության, ոստիկանության, ժանդարմերիայի հատուկ կորպուսի և պահնորդական բաժանմունքի նախկին ծառայողների իրավունքները: Բոլոր մակարդակների խորհուրդները ձևավորելիս, գյուղացիների համեմատ, առավելությունը տրվում էր բանվորներին: Մերժելով իշխանությունների տարանջատման սկզբունքը սահմանվում էր պետական իշխանության կենտրոնական և տեղական մարմինների միասնական համակարգ: Օրենսդիր իշխանությունն իրականացվում էին միաժամանակ խորհուրդների համագումարի, ԿԳԿ ի /Կենտրոնական գործադիր կոմիտե/, ԿԳԿ ի նախագահության և

Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից:

Հետագա սահմանադրական զարգացման ընթացքում նկատվում է որոշակի միտում, որը բնորոշվում է հայտնի ծիսակատարությամբ և սահմանադրական նորմերի անգործությամբ, որոնք ձեռնտու էին և իշխանությանը, և հենց հասարակությանը: Իշխանության մարմինների գործողությունները և իրական սոցիալական կյանքը չէին համապատասխանում սահմանադրական նորմերին, չնայած դրանցից ոչ բոլորն էին անիմաստ ու կեղծ:

Հայկական ԽՍՀ երկրորդ Սահմանադրությունն ընդունվեց 1937թ. մարտի 23-ին, ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրության ընդունումից անմիջապես հետո: Այն հռչակում էր «սոցիալիզմի հիմքերի կառուցման ավարտը»: Այդ Սահմանադրության մեջ առաջին անգամ բավականին լիարժեքորեն կարգավորված էին հասարակական և պետական կառուցվածքի հարցերը սահմանված էր պետական իշխանության և կառավարման բարձրագույն և տեղական մարմինների, դատարանի և դատախազության համակարգն ու իրավասությունը: Հատուկ գլուխներ էին նվիրված քաղաքացիների հիմնական իրավունքներին և պարտականություններին, ընտրական համակարգին: Սահմանադրությունը արձանագրում էր Հայկական ԽՍՀ կամավոր միավորումը իրավահավասար միութենական հանրապետությունների հետ՝ ԽՍՀ Միության կազմի մեջ:

Եվ չնայած Հայկական ԽՍՀ 1937թ. Սահմանադրությունը ներծծված էր սոցիալիստա-

¹ Տե՛ս «Կառավարության լրաբեր». 08.11.1919թ., N7:

² Մանրամասն տե՛ս. Սեբրոբյան Հ.Մ. «ՀՍՍՀ, 1922թ. սահմանադրությունը» թեկնածուական դիսերտացիա. Երևան, 1946: Պետրոսյան Շ.Ն. հայկական ՍՍՀ սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը. Երևան, 1982: Նաև Портнов В.П., Славин М.М. Этапы развития Советской Конституции /историко – правовое исследование/. М., “Наука”, 1982.

կան գաղափարախոսությամբ, այնուամենայնիվ, նրա տեքստում արդեն չկային ողջ հողագնդում սոցիալիզմի հաղթանակի բացահայտ կոչերը: Միևնույն ժամանակ այդ Սահմանադրության շատ նորմեր դեկլարատիվ բնույթ ունեին: հռչակելով ժողովրդավարության, օրինականության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության սկզբունքները՝ Սահմանադրությունն ի զորու չեղավ կանխել հարյուր հազարավոր մարդկանց հանդեպ իրականացվող արտադատական հաշվեհարդարներն ու բռնարարքները:

1978թ. ապրիլի 14-ին ընդունված Խորհրդային Հայաստանի երրորդ Սահմանադրությունը /Հիմնական օրենքը/, որը մշակվեց ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրությանը համապատասխան, մարմնավորում էր ներկայումս հիմնագուրկ համարվող զարգացած սոցիալիզմի հանցակետը:

Այն հռչակում էր հասարակության սոցիալական խմբերի և շերտերի բարոյաքաղաքական միասնության ամրապնդումը, մարդկանց պատմական նոր հանրության խորհրդային ժողովրդի ձևավորումը, ամրապնդում էր արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սոցիալիստական սեփականությունը: Մասնավոր սեփականությունը բացառված էր: Ամրապնդվում էր խիստ կենտրոնացման հիմքի վրա պլանային տնտեսության վարումը: Պետական իշխանության կազմակերպումը հիմնվում է խորհուրդների գերիշխանության սկզբունքի վրա:

Հայկական ԽՍՀ, 1978թ. Սահմանադրությունը նախորդներից տարբերվում էր ոչ միայն բովանդակությամբ, այլ նաև առավել կատարյալ ձևով: Նրանում, նախկինում գործող սահմանադրությունների համեմատ, էականորեն փոխված էր գլուխների համակարգումը, Սահմանադրությունը սկսվում էր ներածությամբ՝ պրամբուլայով: Միաժամանակ այն նախկինի պես գաղափարականացված էր: Դա արտահայտվում էր նրանով, որ գիտական կոմունիզմի գաղափարները ճանաչվում էին որպես տիրապետող գաղափարախոսություն: Կոմունիստական իդեալը հիշատակվում էր որպես հասարակական զարգացման և անհատի դաստիարակության նպատակ: Հասարակական զարգացման վերջնական նպատակ էր հռչակվում անդասակարգ կոմունիստական հասարակարգը: Պետությունը հանդես էր գալիս որպես սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման հիմնական գործիք: Աշխատավորական կոլեկտիվները պարտավորեցվում էին իրենց անդամներին դաստիարակել կոմունիստական բարոյականության ոգով:

Այնուամենայնիվ, Հայկական ԽՍՀ, 1978թ. Սահմանադրությունը պարունակում էր ժողովրդավարական նորմեր, այստեղ տեղին է հիշատակել հայերենի, որպես պետական լեզվի, ամրագրումը այդ Սահմանադրության թիվ 72 հոդվածում: Սակայն իրական կուրսը և գործերը կտրուկ հեռանում էին այդ նորմերից, ինչը քաղաքացիների և պաշտոնատար անձանց մոտ դաստիարակում էր այնպիսի վերաբերմունք, երբ սահմանադրական, դրույթներն ընկալվում էին սոսկ որպես դեկլարատիվ հայտարարություններ³:

Ինչպես իրավաօրենս նշում են Վ. Պողոսյանը և Կ. Միրումյանը, «սովետական շրջանի սահմանադրություններն ամբողջությամբ կառուցված են եղել Մարքս-Լենինյան տեսության վրա և, հետևաբար, էապես տարբերվում են արևմտյան աշխարհում ընդունված չափորոշիչներից: Ավելին, շուրջ յոթանասունամյա ամբողջատիրական կարգերի տիրապետության հետևանքով մոռացության տրվեցին նախորդ շրջանում ձեռք բերված սահմանադրական գիտելիքները և անջրպետ առաջացավ անցյալի մեր ժառանգության և նորօրյա պատկերացումների միջև: Այդ պատճառով էլ ներկայումս հայտնվել ենք արևմտյան արժեքները սոսկ ընդօրինակողի դերում⁴:

Սակայն, մեր կարծիքով, չի կարելի մեկ ծայրահեղությունից ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ: Խորհրդային սահմանադրություններն իրենց գաղափարախոսական և դեկլարատիվ բնույթով հանդերձ, էական դեր են խաղացել անձի սոցիալ-տնտեսական իրավունքների պահպանման և իրագործման խնդրում:

Սակայն, մեր կարծիքով, չի կարելի մեկ ծայրահեղությունից ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ: Խորհրդային սահմանադրություններն իրենց գաղափարախոսական և դեկլարատիվ բնույթով հանդերձ, էական դեր են խաղացել անձի սոցիալ-տնտեսական իրավունքների պահպանման և իրագործման խնդրում:

³ Տե՛ս Խաչատրյան Հ. Մ. Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը. Երևան, 1997, էջ 15:

⁴ Տե՛ս Վալերի Պողոսյան, Կառլեն Միրումյան. Սահմանադրականության գաղափարը հայ իրավաքաղաքական մաքի պատմության մեջ. - «Սահմանադրական դատարան». Տեղեկագիր, N1 /18/, 2001,

Այս առումով, խորհրդային սահմանադրությունների սոցիալական ուղղվածությունը շոշափելի ազդեցություն է ունեցել նաև մարդու սոցիալատնտեսական և մշակութային իրավունքների մի շարք միջազգային փաստաթղթերի ձևավորման և դրանց բովանդակության վրա:

Ինչպես վկայում է սահմանադրական զարգացման պատմական փորձը ցանկացած երկրի Սահմանադրության նախապատրաստումը խիստ բարդ գործ է: Սկզբում մշակվում է Հիմնական օրենքի հայեցակարգը, այսինքն՝ նրա հիմնական ռազմավարական դրույթները և որոնց հենքի վրա ձևավորվում է սահմանադրության բովանդակությունը: Հայեցակարգը ծնվում է գիտական քննարկումներից, բանավեճերից, իրականության սոցիոլոգիական վերլուծություններից, հայրենական և արտասահմանյան օրենսդրության համեմատական իրավական հետազոտությունների արդյունքում: Այնուհետև, ստեղծվում է նախագիծը, որը հրապարակվում և դառնում է բուռն քննարկությունների և բանավեճերի առարկա: Այնուհետև, արդեն խորհրդարանի աշխատանքային խմբերում, հանձնաժողովներում և կոմիտեներում, համաձայնեցված Սահմանադրության նախագծի վերջնական տարբերակը ներկայացվում է խորհրդարանին կամ սահմանադիր ժողովին կամ ընդունվում է հանրաքվեի միջոցով:

Նոր Սահմանադրության ընդունման հարցը դրվեց Հայաստանի անկախության հռչակագրի անմիջապես ընդունումից /1990 թվականի օգոստոսի 23-ին/ հետո⁵: Հռչակագրի 12-րդ կետում ամրագրված է հետևյալ կարևոր դրույթը. «Սույն հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»:

Այստեղ տեղին է նշել, որ Հռչակագրի հիմնարար դրույթներն ու նպատակները որոշակիորեն արտացոլված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ: Մասնավորապես վերջինիս ներածությունում /պրեամբուլայում/ ուղղակի նշված է. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

«Հետևաբար,- գրում է Վլ. Նազարյանը, - Հայաստանի անկախության մասին հռչակագիրը իրավաբանական առումով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բովանդակության օրգանական մասն է⁶»:

Վերլուծելով անցած տարիների սահմանադրական զարգացման փորձը, պետք է եզրակացնել, որ Հռչակագիրն իրականացրել է իր մեծ առաքելությունը և կայուն հիմք է ծառայել ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ընթացիկ օրենսդրության, մշակման համար: Հռչակագրի հիմանդիր դրույթները որոշակի դեր են խաղացել նաև 2005 և 2015 թվականների սահմանադրական փոփոխությունների մշակման ժամանակ:

Հռչակագրի դրույթներին համապատասխան, Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1990թ. նոյեմբերի 5-ին նոր Սահմանադրության տեքստի մշակման համար ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին պետական և քաղաքական գործիչներ, պատգամավորներ և իրավունքի մասնագետներ: Ընդամենը 20 մարդ: Սահմանադրական հանձնաժողովը գլխավորեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահը:

1990թ. Օգոստոսի 23-ին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի ընդունումից հետո Հայաստանի հասարակական քաղաքական կյանքում կատարված արմատական փոփոխությունները չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ 1978թ. սահմանադրության բովանդակության վրա: Նրա տեքստը 1990-1991թթ. ընթացքում բազմիցս և էականորեն փոփոխվել էր:

⁵ Տե՛ս Վահե Ստեփանյան, Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում: - «Օրենք և իրականություն», 16 օգոստոս 2003թ., էջ 1-2:

⁶ Տե՛ս Վլ. Նազարյան Հայաստանի անկախության հռչակագրի տասնամյակը. - «Սահմանադրական դատարան». Տեղեկագիր, N3 /16/, 2000, էջ 5:

Հանրապետության պաշտոնական անվանումից հանվեցին «Խորհրդային» և «Սոցիալիստական» բնորոշումները: 1990թ. օգոստոսի 24-ին ընդունվեց Հայկական ԽՍՀ-ի վերանվանման մասին օրենքը: Մեր երկիրը անվանվեց Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Ընդ որում երկու անվանումներն էլ հավասարազոր են:

Փոփոխություններ կրեցին նաև պետական խորհրդանիշները ընդունվեցին նոր պետական դրոշը, օրհներգը և զինանշանը:

Այդ առնչությամբ ընդունվեցին համապատասխան օրենսդրական ակտեր, որոնցով, փաստորեն, վերականգնվեցին Հայաստանի առաջին հանրապետության խորհրդանիշները:

1991–1992թթ. ընթացքում, իշխանությունների տարանջատման սկզբունքին համապատասխան, վերակազմավորվեցին իշխանության և կառավարման ինստիտուտները: Հիմնվեց Հանրապետության Նախագահի ինստիտուտը, նորացվեց ընտրական համակարգը:

Մեզանում սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացներում մեծ նշանակություն ունեցան ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած սահմանադրական օրենքները: 1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց սահմանադրական օրենք՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին: Ինչպես նշում է պրոֆեսոր Վահե Ստեփանյանը. «Սահմանադրական օրենքը չդադարեց խորհրդային սահմանադրության գործողությունը և, դրանով իսկ, չստեղծեց բացեր սահմանադրական կարգավորման ոլորտում: Այդ օրենքը պարզապես գրվեց գործող սահմանադրությանը, բարձրագույն իրավաբանական ուժից, ավելի ճիշտ սահմանադրությունը վերափոխեց այլընտրանքային իրավաբան/ական ուժ ունեցող նորմատիվ - իրավական ակտի: Այն պահպանեց իր բարձրագույն իրավաբանական ուժը բոլոր նորմատիվ-իրավական ակտերի, այդ թվում օրենքների նկատմամբ, բացառությամբ Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքների»⁷:

1991թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը: Այն մեզանում սահմանադրական գործընթացների կարևոր հանգրվան է, քանզի վերոհիշյալ իրավական ակտը բազմապատակ և համալիր բնույթ է կրում՝ ընդգրկելով ոչ միայն պետական, այլ նաև հասարակական կյանքի բազմաթիվ շերտերն ու կողմերը: Եվ դա միանգամայն օրինաչափ է, քանի որ հիշյալ սահմանադրական օրենքի էությունը մեր նորացված հասարակության նորմատիվ մոդելի ստեղծումն էր: Այդ օրենքում /հոդ. 16/ վավերացվեց նաև գործող Սահմանադրության մեջ հետագա փոփոխություններ չմտցնելու մասին դիրքորոշումը: «Մինչև Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը, - ասված է սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածում, գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»:

Շուտով 1990թ. վերջում, Սահմանադրական հանձնաժողովը հասկացավ, որ պատրաստ չէր անմիջապես ձեռնամուխ լինել Սահմանադրության նախագծի ստեղծմանը, չնայած սկզբնական տարբերակի նախապատրաստման համար հանձնարարական տրվել էր: Սահմանադրական հանձնաժողովի անդամներից մեկի՝ Էդուարդ Եգորյանի կարծիքով, «պատրաստ չէինք և՛ տեսականորեն, և՛ գործնականում, չունեինք այլ երկրների սահմանադրական պատմության ուսումնասիրությունները, չունեինք ինքիշխան երկրի կառավարման բավարար փորձ՝ կանխելու համար ապագա զարգացումը»⁸: Հավանաբար դա էր հիմնական պատճառներից մեկը, որ որոշվեց Սահմանադրական հանձնաժողովը կմասնակցի որոշ հիմնարար նշանակություն ունեցող օրինագծերի մշակմանը, որոնք հետագայում բազա կծառայեն Սահմանադրության նախագծի հա-

⁷ Տե՛ս Վահե Ստեփանյան. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ -ում: - «Օրենք և իրականություն», 16 օգոստոս 2003թ., էջ 2:

⁸ Տե՛ս Էդուարդ Եգորյան. Ճանապարհը ...II «Հայաստանի հանրապետություն» օրաթերթ, 5 հուլիս 1996թ., թիվ 131 /1570/:

մար: Այդպիսի օրինագծեր էին՝ «ՀՀ Գերագույն խորհրդի մասին», «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» և այլն:

Սահմանադրական հանձնաժողովի առաջին նիստը գումարվեց միայն 1992թ. հոկտեմբերի 15-ին: Սակայն արդեն 1992թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն, սահմանադրական հանձնաժողով և նախագահի աշխատակազմ ներկայացվեց Հայաստանի նոր Սահմանադրության այլընտրանքային նախագծերից մեկը/ որը նախապատրաստել էր ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի ղեկավար Հենրիկ Խաչատրյանը/:

Փորձագետներից շատերի կարծիքով այդ նախագիծը ուշադրության արժանի մի շարք արժանիքներ ուներ: Ահա թե ինչու այդ նախագծի որոշ դրույթներ հաշվի առնվեցին սահմանադրական հանձնաժողովի կողմից⁹:

Հետագայում ՀՀ սահմանադրական հանձնաժողովը, նրա աշխատանքային խումբը սկսեցին առավել ինտենսիվ գործել: Բավական է ասել, որ 1992թ. հոկտեմբերի 15-ից մինչև 1995թ. մայիսի 11-ը սահմանադրական հանձնաժողովն անց է կացրել 109 նիստ: 1993թ. հունիսի 24-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի պաշտոնական տարբերակին և այն ներկայացրեց համաժողովրդական քննարկման, որը տևեց ինն ամիս:

Ժողովրդական քննարկման ընթացքում արված բազմաթիվ առաջարկությունների, լրացումների և դիտողությունների գիտական մշակման ու հաշվառման ուղղությամբ մեծածավալ աշխատանք կատարեց սահմանադրական հանձնաժողովի աշխատանքային խումբը:

Աշխատանքային խումբն իր աշխատանքները վերսկսեց Գերագույն խորհրդի նախագահության կողմից ստեղծված բազմակուսակ-

ցական հանձնաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո 1993 թվականի նոյեմբերի 18-ից:

Գերագույն խորհրդի նախագահությունը աշխատանքային խմբին տրամադրել էր համաժողովրդական քննարկումների արդյունքում ստացված, բազմակուսակցական սահմանադրական հանձնաժողովի կողմից համակարգված 700-ից ավելի առաջարկություններ պարունակող փաթեթը¹⁰: Առաջարկություններով հանդես էին եկել 300-ից ավելի կազմակերպություններ, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը¹¹, այլ ինստիտուտները, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ինչպես նաև բազմաթիվ քաղաքացիներ: Դրանք բոլորը համակարգվեցին և մասամբ հաշվի առնվեցին Սահմանադրության նախագծի հետագա լրամշակման ժամանակ:

Հատկանշական է, որ «վեցյակի» /վեց կուսակցությունների/ ներկայացրած սահմանադրության նախագծի վերաբերյալ ստացվել էր ընդամենը 72 առաջարկություն և դիտողություն՝ այդ թվում 17-ը՝ ընդհանուր բնույթի, իսկ 55-ը՝ կոնկրետ հոդվածների առնչությամբ: Դրանք ներկայացվել էին յոթ կազմակերպություններից և երեք անհատներից:

Պաշտոնական նախագծի վերաբերյալ ստացվել էին նաև արտասահմանյան, հեղինակավոր գիտական հաստատությունների և առանձին գիտնականների կարծիքները, որպիսիք էին՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Պետության իրավունքի ինստիտուտը¹², Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտը, Ֆրանսիայի նշանավոր իրավաբան-գիտնական Միշել Լևաստը¹³ ամերիկացի Էլիզաբեթ Էֆ. Դիֆայսը¹⁴ ռուս հայտնի գիտնական Կ.Ֆ. Շերևետևը¹⁵ և այլն: Վերոհիշյալ կազմակերպու-

⁹ Տե՛ս Սահմանադրության ոչ պաշտոնական տարբերակի շուրջ», «Ազգ», Էովհիսի 10, 1993թ., թիվ 108 /359/: Օ6 альтернативном проекте новой Конституции Республики Армения, см. Республика Армения. 14.01.1993г.
¹⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30 մարտ, 1994թ.:
¹¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 ապրիլ 1994թ.:
¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 ապրիլ, 1994թ., թիվ 66/930/:
¹³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 ապրիլ, 1994թ.
¹⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 7 ապրիլ, 1994թ.
¹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հունիսի 1995թ.

թյունների և գիտնականների փորձագիտական եզրակացություններում պարունակվող առաջարկություններն ու դիտողությունները նույնպես օգնեցին բարելավելու Սահմանադրության նախագծի առանձին դրույթները:

Վերոնշյալ փորձագիտական եզրակացությունները, ընդհանուր առմամբ դրական գնահատեցին Սահմանադրական հանձնաժողովի մշակած նախագիծը և գրանցում մասնավորապես նշվում էր, որ ՀՀ Սահմանադրության նախագիծը, ամբողջությամբ վերցրած, համապատասխանում է միջազգային ստանդարտներին և բավարարում է ժամանակակից սահմանադրականության պահանջները:

1993թ. նոյեմբերի 12-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի ժողովրդական քննարկման ընթացքում ստացված դիտողություններն ու առաջարկություններն ամփոփող բազմակուսակցական հանձնաժողովի նախագահի հաղորդումը, որոշեց ի գիտություն ընդունել բազմակուսակցական հանձնաժողովի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի ժողովրդական քննարկման ընթացքում ստացված դիտողությունների ու առաջարկությունների ամփոփման մասին: Որոշվեց ամփոփիչ տեղեկանքը հանձնել ՀՀ Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովներին, սահմանադրական հանձնաժողովին և հնարավորություն ընձեռել պատգամավորներին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին տեղեկանքին ծանոթանալու:

1994թ. ապրիլի 20-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց նախագծի լրամշակված տարբերակին և այն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ: Ներկայացվեցին նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այլընտրանքային նախագծեր

1994թ. հունիսի 1-ին Գերագույն խորհուրդն իր արտահերթ նիստում ընդունեց որոշում «Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին»¹⁶, ընդգրկելով Գերագույն

խորհրդում ներկայացված և սահմանադրական հանձնաժողովում ներկայացուցիչ չունեցող հասարակական-քաղաքական կազմակերպությունների և օրենսդրական նախաձեռնությունների հեղինակների մեկական ներկայացուցիչ: Նույն օրը Գերագույն խորհուրդը որոշեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահին ընտրել Հայաստանի Հանրապետության սահմանադրական հանձնաժողովի համանախագահ:

Սահմանադրական հանձնաժողովի մշակած և հավանության արժանացած նախագիծը վերադարձվեց հանձնաժողովին լրամշակելու՝ հաշվի առնելով նաև այլընտրանքային նախագծերը:

Ընդլայնված կազմով /32 մարդ/ սահմանադրական հանձնաժողովն աշխատեց 1994թ. հունիսի 30-ից մինչև 1995 թ. ապրիլի 13-ը: Այդ ընթացքում հրավիրվեց հանձնաժողովի 66 նիստ: Ծավալուն աշխատանք կատարեցին աշխատանքային խմբերը:

Աշխատանքներն արդյունավետ կազմակերպման նկատառումներով, սահմանադրական հանձնաժողովն իր կազմած նախագծի տարբերակն առաջին նիստերից մեկում ընդունեց որպես հիմք կուսակցությունների նախագծերի դրական կողմերի, Գերագույն խորհրդի նստաշրջանում արված առաջարկների, ինչպես նաև փորձագիտական եզրակացությունների, զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների հաշվառման հիման վրա, ձեռնամուխ եղավ հիմք ընդունած սահմանադրական նախագծի լրամշակմանը:

Մեր կարծիքով, Սահմանադրական հանձնաժողովի հաջողության գրավականը հանդիսացան նրա գործունեության, ըստ էության, ժողովրդավարական հետևյալ սկզբունքները.

1. Սահմանադրական հանձնաժողովի տրամադրության տակ եղած բոլոր նախագծերը, առանց որևէ բացառության, ճանաչվեց որպես լրամշակվող նախագծի համար առաջարկներ և դրանք, առանց որևէ վերապահման, դարձան քննարկման առարկա.

2. հաշվի էր առնվում և հանգամանորեն քննարկվում էր հանձնաժողովի անդամների, ինչպես նաև նրա նիստերին մասնակցող Գե-

¹⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 12/1064/, հոդ.232-235:

րագույն խորհրդի պատգամավորների և մասնագետների յուրաքանչյուր առաջարկ, դիտողություն, լրացում, փոփոխություն.

3. յուրաքանչյուր առաջարկ հանձնաժողովում քննարկվում էր միայն հանձնաժողովի հինգ իրավաբան անդամներից կազմված աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա: Ընդ որում, աշխատանքային խումբը, պարտավոր էր իր հիմնավորված եզրակացությունը ներկայացնել առանց բացառության յուրաքանչյուր առաջարկի վերաբերյալ.

4. մասնագիտական զուտ իրավաբանական խնդիրներում վճռորոշ նշանակության ունեւեր հանձնաժողովի իրավաբան անդամների մշակած մոտեցումները.

5. առանց շտապողականության քննարկվում էր վիճահարույց հարցերը, մասնավորապես, Հայ դատի արտացոլման անհրաժեշտությունը և ձևը, հայրենիք-սփյուռք առնչությունները, պետական կառավարման ձևը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատվածությունը և հակակշիռները, հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակը, Սահմանադրական դատարանի իրավասությունը, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի սահմանադրական հիմունքները.

6. միայն բացառիկ դեպքերում, երբ արդեն իսկ սպառվում էր միասնական տեսակետ մշակելու բոլոր հնարավորությունները, լրամշակվող նախագծում թողնվում էր որպես հիմք ընդունված տարբերակի համապատասխան դրույթը¹⁷:

Շավալված սահմանադրական ռեֆորմն ավարտվեց Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1995թ. մարտի 27-ին «Սահմանադրական օրենքի» և 1995 թվականի ապրիլի 4-ին «Հայաստանի հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի ընդունումով: Դրանով իսկ կայուն նորմատիվ իրավական բազա ստեղծվեց Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքի ընդունման համար¹⁸:

Սահմանադրական հանձնաժողովը որպես հիմք ընդունեց պաշտոնական նախագիծը /հասարակական շրջաններում նախագիծն այդպիսի անվանում էր ստացել/, որը լրամշակվեց և ներկայացվեց ՀՀ Գերագույն խորհրդի քննարկմանը: 1995թ. մայիսին նախագիծը մանրակրկիտ քննարկվեց Գերագույն խորհրդի նստաշրջանում: Անցկացվեցին երկարատև խորհրդարանական քննարկումներ, Սահմանադրության նախագծում մտցվեցին զգալի թվով փոփոխություններ ու լրացումներ: Դրանք բոլորը հանգամանորեն քննարկվեցին սահմանադրական հանձնաժողովի լրացուցիչ նիստերում /1995թ. մայիսի 10-ին և 11-ին/: համաձայնեցված տեքստը մեկ անգամ ևս քննարկեց Հայաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը: Եվ, վերջապես, 1995թ. Մայիսի 12-ին Գերագույն խորհուրդը ընդունեց պատմական որոշում «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մասին»: Հենվելով Հայաստանի հանրապետության 1995թ. Մարտի 27-ի Սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի վրա և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածով, Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովին ներկայացրած Հայաստանի հանրապետության Սահմանադրության նախագծին:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման նպատակով 1995թ. հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե՝ քվեարկության ղնելով հետևյալ հարցը. «Համաձայն եք, արդյոք, ընտրել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը¹⁹:

Հայաստանի Հանրապետության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ 1995թ. հուլիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե:

¹⁷ Տե՛ս ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի զեկուցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ: Զեկուցումը քննարկվել է ՀՀ ԳԽ մայիսի 2-ի արտահերթ նիստում: «Հայաստանի Հանրապետություն», 4 մայիս, 1995թ., Թիվ 104/1224:

¹⁸ Տե՛ս Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը. Երևան, 1997, էջ 17:

¹⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն Գերաֆգույն խորհրդի տեղեակագիր». Հոդ.9/1085/, 15 մայիսի 1995թ.:

Հայաստանի քաղաքացիները պետք է գնատահատական տային սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած և Հայաստանի Հանրապետության

Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած ՀՀ Սահմանադրության նախագծին: Հայաստանի Հանրապետության ակտիվ ընտրական իրավունք ունեցող 2189804 քաղաքացիներից հանրաքվեին մասնակցեց 1217531 մարդ: Ընդ որում 828370-ը պատասխանեցին «այո» և միայն 349721 - ը «ոչ»: Անվավեր ճանաչվեց 39.440 քվեաթերթիկ: Այսպիսով, հանրաքվեին մասնակցեց 1.217531 քաղաքացի, այսինքն քվեարկության իրավունք ունեցողների 55,66 տոկոսը: Հայաստանի Հանրապետության նոր հիմնական օրենքի օգտին կողմ արտահայտվեց ընտրողների ճնշող-մեծամասնությունը 68,04 տոկոսը²⁰:

Այս Սահմանադրությունն հիմնականում արտացոլում էր մեր հասարակության և պետության զարգացման միանգամայն նոր փուլ,

սոցիալական կառավարման ողջ համակարգի կատարելագործումը, ընդգծում Հայաստանի կարգավիճակը՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում էր սահմանադրական կարգերի սկզբունքորեն նոր հիմքերը, կողմնորոշիչ դեր խաղում պետության օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության համար: Հավաստում է Հայաստանի ձգտումը՝ հետևել միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած նորմերին և սկզբունքներին, պահպանել միջազգային իրավակարգի կայունությունը:

Հետագայում՝ 2005 և 2015 թվականներին հանրքվեի միջոցով էական փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության տեքստում:

Ներկայումս ընթանում է ՀՀ Սահմանադրության նոր տեքստի նախագծային մշակումները:



²⁰ Նույն տեղում, հոդ., 13,14:

ԱՐՄԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար,
 ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
 իրավագիտության ամբիոնի հայցորդ

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԵՐԸ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՑՈՒՄ**

Ժողովրդավարական երկրներում քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության կամ այլ կերպ ասած նրանց կողմից ծախսված ռեսուրսների և դրանց ձեռքբերման աղբյուրների մասին հանրությանը իրազեկելու արդարացի և կարևոր պահանջմունք կա: Այս պահանջմունքը բավարարելու համար տարբեր պետություններ ունեն տարբեր մոտեցումներ և ըստ այդ մոտեցումների՝ տարբեր օրենսդրական կարգավորումներ:

Կան այնպիսի երկրներ, որոնք ընդհանրապես չունեն նախնական վերահսկողություն քաղաքական դերակատարների կողմից ընտրություններում կամ հանրաքվեներում ծախսված գումարների նկատմամբ: Որքան էլ որ զարմանալի է, այդպիսի վառ օրինակ է ժողովրդավարական երկար և կայացած ավանդույթներ ունեցող Շվեյցարիան: Այս օրինակը հատկապես քննարկման առարկա ենք դարձնում այն տեսնակյունն առաջ բերելու նպատակով, որ քաղաքական դերակատարներն իրենք՝ առանց որևէ պետական միջամտության, պետք է հաշվետվողական լինեն հասարակության առջև իրենց ֆինանսական աղբյուրների և ծախսերի մասին տեղեկությունները կամովին հրապարակելու միջոցով: Ավելին՝ այդպիսի ավանդույթներով օժտված քաղաքական համակարգը կբերի հասարակության կողմից սպասում, և այն քաղաքական դերակատարները, որոնք հանդես չեն գա այդպիսի տեղեկության հրապարակումով կամ թերի կներկայացնեն իրենց ֆինանսական շարժի մասին տեղեկությունը,

դա հենց առաջինը կվնասի իրենց, քանզի դրա պատճառով հասարակությունը կարող է ձևավորել կարծիք և դրանից բխող ոչ բարեացակամ վերաբերմունք տվյալ քաղաքական ուժի կամ թեկնածուի նկատմամբ:

Մյուս կողմից, սակայն, պետք է ասել, որ ժողովրդավարության զարգացմանը զուգընթաց քաղաքականության համար ծախսվող ֆինանսների նկատմամբ վերահսկողությունը, իր հերթին, աճելու և ավելի խորանալու, քան դաշտը լիբերալացնելու միտում ունի: Հատկապես, վերջին երկու տասնամյակում զարգացման միտումը ցույց է տալիս, որ երկրները գնում են այս ոլորտում չափորոշիչների խստացման, վերահսկողության գործիքների ներդրման, պետական վերահսկողության մարմինների ստեղծման, նրանց լիազորությունների ընդլայնման և պետական միջամտության ընդարձակման ճանապարհով: Այս նպատակով ստեղծված պետական մարմինները տարբեր են: Մի շարք երկրներում այս լիազորություններն իրականացնում են ընտրական մարմինները (Ալբանիա, Ավստրալիա, Մեծ Բրիտանիա, Միացյալ Նահանգներ, Կանադա, Չիլի, Հայաստան և այլն)¹:

Կան երկրներ, որտեղ այս գործառույթն իրականացնում են հակակոռուպցիոն մարմինները (Էստոնիա, Լատվիա, Սերբիա, Վրաստան և այլն):

Կան երկրներ, որտեղ այս գործառույթն իրականացնում է այնպիսի մարմին, որը հատուկ է միայն տվյալ երկրին կամ ինքնատիպ է

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

¹ Առավել մանրամասն տես՝ Political Finance Oversight Handbook // Training in Detection and Enforcement (TIDE)//, Edited by Magnus Ohman, 2013, pp. 41,48, 114-116 etc. // Էլեկտրոնային աղբյուրը՝ https://www.ifes.org/sites/default/files/tide_political_finance_oversight_handbook_0.pdf (դիմելու անսաթիվ՝ 25.03.2022թ.)

իր լուծումով (օրինակ, Ֆրանսիա՝ Քարոզչության և քաղաքական ֆինանսավորման ազգային հանձնաժողով, Բուլղարիա՝ Ազգային աուդիտի գրասենյակ, Գերմանիա՝ Խորհրդարանի նախագահ (կից աշխատակազմ), Իսրայել՝ պետական վերահսկիչ, Իսպանիա՝ Աուդիտի դատարան և այլն):

Բացի այն, որ մարմիններն են տարբեր, տարբեր են նաև նրանց կառուցվածքը, մարդկային ռեսուրսները, ինչպես նաև լիազորությունները: Այսպես՝ դիտարկենք մի քանի առանձնահատկություններ. Ֆրանսիայի Քարոզչության և քաղաքական ֆինանսավորման ազգային հանձնաժողովն ունի շուրջ 30 մշտական աշխատակից, կարող է ներգրավել մինչև 200 ստուգողներ, չունի լիազորություն պահանջելու այլ փաստաթղթեր, քան սկզբնական հաշվետվությամբ ներկայացվում է, սակայն ունի իրավունք դիմելու ոստիկանությանը իրականացնելու հետաքննություն:

Գերմանիայի Խորհրդարանի նախագահի վերահսկողությամբ գործում է 8 հոգանոց աուդիտորների թիմ, որը հանդիսանում է նաև վարչակազմի մաս:

Միացյալ Նահանգների ֆեդերալ ընտրական հանձնաժողովը չնայած ունի «ընտրական հանձնաժողով» անվանումը, սակայն ընտրությունների կազմակերպման հետ առնչություն չունի և ստեղծվել է միայն ֆինանսական վերահսկողություն իրականացնելու համար²:

Բերված առանձին օրինակների և հատկապես իրարից շատ տարբեր լինելու ընտրությունը ներկայացված է հայտնելու կարծիք, պնդում, որ թերևս չկա համընդհանուր ընդունված որևէ մոդել, ավելին՝ առկա չէ նաև լիազորությունների թույլատրելի կամ փորձով ապացուցված ճիշտ կամ ընդունելի շրջանակ: Եթե մեր ուսումնասիրությամբ ավելի առաջ գնանք, կտեսնենք, որ անգամ առաջին հայացքից նույնատիպ լուծում կիրառող երկրների դեպքում, օրինակ՝ ընտրական մարմինների դեպքում, միմյանցից շատ տարբեր են լիազորությունները, գործիքները, պարբերականությունը, պետական միջամտության չափը և այլն: Լուծումները, իհարկե, տարբեր են ըստ երկրների, բայց, այնուամենայնիվ, կան նաև ընդհանրու-

թյուններ, որոնք պայմանավորված են նպատակի նույնությամբ, ինչպես նաև այս ոլորտում առկա միջազգային փաստաթղթերով ամրագրված միասնական սկզբունքներով: Դիտարկենք առավել հայտնի և Հայաստանի համար կիրառելի այդպիսի փաստաթղթերը:

Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված.

- «Եվրոպայի Խորհրդի նորմերի հետ ժողովրդավարական ճանապարհով ընտրված կուսակցությունների արգելքի անհամատեղելիության մասին զեկույց» 1999 թվականի 8467 զեկույց (Doc. 8467 (1999)),
 - «Քաղաքական կուսակցությունների վարքագծի կանոններ» 2000 թվականի 1438 հանձնարարականը.
 - «Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման մասին» 2001 թվականի 1516 հանձնարարականը.
 - «Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման մասին զեկույց» 2001 թվականի 9077 զեկույց (Doc. 9077 (2001)).
 - «Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանափակումների մասին զեկույց» 2002 թվականի 9526 զեկույց (Doc. 9526 (2002)).
 - «Քաղաքական կուսակցությունների և ընտրական քարոզչության ոլորտում ֆինանսավորման ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական կանոններ» հանձնարարականը (Rec(2003)4)՝ ընդունված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2003 թվականին.
 - «Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանափակումների մասին» 2002 թվականի 1308 հանձնարարականը.
 - «Քաղաքական կուսակցությունների ոլորտում լավագույն կանոնները» 2010 թվականի 1736 հանձնարարականը:
- Եվրոպական հանձնաժողովի «Հանուն ժո-

² Նույն տեղում:

ղովրդավարության՝ օրենքի միջոցով» (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված փաստաթղթերի ցանկում կարող ենք նշել.

- «Քաղաքական կուսակցությունների արգելման կամ արձակման և նմանատիպ միջոցների մասին կանոնակարգ» CDL-INF(2000)001՝ ընդունված 41-րդ պլենար նիստին (Վենետիկ, 1999 թվականի դեկտեմբերի 10-11),
- «Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման մասին կանոնակարգ և զեկույց»՝ ընդունված 46-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2001 թվականի մարտի 9-10),
- «Զեկույց քաղաքական կուսակցությունների հիմնադրման, կազմակերպման և գործունեության մասին», կազմված է թեմատիկ հարցաշարին տրված պատասխանների հիման վրա՝ ընդունված 57-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2003 թվականի դեկտեմբերի 12-13),
- «Ուղեցույց և բացատրական զեկույց քաղաքական կուսակցությունների բնագավառում օրենսդրության վերաբերյալ. ուրոշ հատուկ հարցեր» CDL-AD(2004)007rev՝ ընդունված 58-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2004 թվականի մարտի 12-13),
- Քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորման մասին կանոնակարգ, «Քաղաքական կուսակցություններին օտարերկրյա աղբյուրներից ֆինանսական նվիրաբերությունների արգելքի վերաբերյալ եզրակացություն» CDL-AD(2006)014՝ ընդունված 66-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2006 թվականի մարտի 17-18),
- «Զեկույց ընտրություններին քաղաքական կուսակցությունների մասնակցության մասին» CDL-AD(2006)025՝ ընդունված Ժողովրդավարական ընտրություններով խորհրդի 16-րդ հանդիպմանը (Վենետիկ, 2006 թվականի մարտի 16) և Վենետիկի հանձնաժողովի 67-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2006 թվականի հունիսի 9-10),
- «Քաղաքական կուսակցությունների ուրտում լավագույն կանոնները» CDL-

AD(2009)002՝ ընդունված 77-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2008 թվականի դեկտեմբերի 12-13),

- «Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման կանոնակարգ» (CDL-AD(2010)024)՝ ընդունված 84-րդ պլենար նիստին (Վենետիկ, 2010 թվականի հոկտեմբերի 15-16):

Նշված փաստաթղթերը չեն կազմում միջազգային իրավական աղբյուրների սպառիչ ցանկը, այն կարելի է շարունակել: Նշվածը վկայում է, որ թեև միջազգային իրավական փաստաթղթերում ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման ոլորտում կանոնակարգումները հիմնականում խորհրատվական բնույթ են կրում և մեծապես վերաբերում են ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման սկզբունքներին, քաղաքական կուսակցությունների գործունեության և հատկապես դրա ֆինանսավորման հարցերը մշտապես գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Եթե մեկ ընդհանուր մտքով փորձենք ի մի բերել վերը թվարկած փաստաթղթերում ամրագրված հիմնական գաղափարը, ապա կձևակերպենք, որ քաղաքական կուսակցությունների, թեկնածուների, քաղաքական նախաձեռնությունների, քաղաքական դաշինքների կողմից ծախսվող ֆինանսները պետք է լինեն օրինական, կոռուպցիայից զերծ, թափանցիկ, վերահսկելի, հաշվետվողական, ծանոթացման համար հասանելի և այլն:

Յուրաքանչյուր պետություն, պահպանելով համընդհանուր ընդունելի սկզբունքները, պետք է ընտրի իր օրենսդրությանը, քաղաքական համակարգին, քաղաքական ուժերի և հասարակության պահանջներին, ժողովրդավարական ավանդույթների մակարդակին, անցած փորձին համապատասխանող և դրանում հայտնաբերված թերությունները շտկելուն ուղղված համապատասխան լուծումներ:

Հայաստանում գործող համակարգն ունի անցած որոշակի ճանապարհ, այս պահին գործող օրենսդրական լուծումների համակցություն և զարգացման ու բարելավման տեսլական: Մինչև Հայաստանի օրինակի ներկայացումը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ

քաղաքական ֆինանսների տեսակներին և կառուցվածքին:

Քաղաքականության համար ծախսվող կապիտալը, որպես կանոն, բաժանվում է երկու հիմնական բաղադրիչի՝

- կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեություն,
- ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից իրենց մասնակցությունն ապահովելու համար ներգրավվող և ծախսվող ռեսուրսներ:

Չնայած այս երկու բաղադրիչները, որպես կանոն, իրար հետ շախկապված են, սակայն գործնականում դրանք կարող են և իրարից անկախ հանդես գալ: Օրինակ, երբ կուսակցությունն առաջադրվել է ինչ-որ ընտրություններում (օրինակ՝ պառլամենտական ընտրություններում՝ համամասնական ընտրակարգով), ապա, անկասկած, գործ ունենք շաղկապված դեպքի հետ: Հնարավոր է իրավիճակ, երբ ներգրավված ռեսուրսները դժվար լինի տարբերակել, քանզի կուսակցության առօրյա գործունեությունն ու քարոզարշավն ընթանում են միաժամանակ՝ զուգահեռաբար և երբեմն դժվար է գտնել այն բաժանարար գիծը՝ արդյոք տվյալ ֆինանսական ծախսը առօրյա գործունեությանն է վերաբերում, թե՛ քարոզչությանը:

Եթե կուսակցությունները, որպես կանոն, հանդիսանում են պետական գրանցում անցած սուբյեկտներ կամ առնվազն այս կամ այն կերպ ճանաչված պետության, ինչպես նաև հասարակության կողմից, ապա ընտրական գործընթացներում որպես սուբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն կուսակցությունը, այլ նաև կուսակցությունների դաշինքը, նախաձեռնող խումբը, ֆիզիկական անձը և այլ: Եվ եթե, օրինակ, ընթանում են տեղական ինքնակառավարման մեծամասնական ընտրակարգով ընտրություններ և առաջադրվել է անկուսակցական թեկնածու, ապա թեկնածուի կողմից քարոզչության համար ծախսվող գումարները առանձին են և չեն խաչվում որևէ կուսակցու-

թյան ֆինանսական գործունեության հետ՝ առնվազն ֆորմալ առումով:

Այս երկու օրինակները, առանց անգամ դրանք մանրամասն ներկայացնելու, տեսանելի կերպով ի ցույց են դնում, որ արդարացված է քաղաքականության համար ծախսվող ռեսուրսների բաժանումը երկու հիմնական բաղադրիչի: Բաժանումը ոչ միայն զուտ բովանդակային իմաստ ունի, այլև այդ բաժանման հիմքի վրա, որպես կանոն, կառուցվում է նորմատիվ բազան, պահանջները, վերահսկողական գործիքները, վարչարարությունը, պետության դերը և այլն:

Վերը շարադրվածի լույսի ներքո անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը, ծառայության գործառույթներին, լիազորություններին, կառուցվածքին, զարգացման տեսլականին և պատմական էվոլյուցիային, հարկ ենք համարում նշել, որ մինչև 2011 թվականի ՀՀ ընտրական օրենսգրքի³ ընդունումը, որով ստեղծվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, քաղաքականության համար ծախսվող ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է երկու տարբեր ինստիտուցիոնալ կառույցների կողմից, և կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը դուրս էր ընտրական մարմինների, մասնավորապես՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ նրա կողմից ստեղծված որևէ մարմնի իրավասությունից և իրականացվում էր Արդարադատության նախարարության կազմում գործող տեսչական մարմնի կողմից:

Մյուս բաղադրիչի՝ ընտրությունների և հանրաքվեների մասնակցության ընթացքում քարոզարշավի համար ծախսվող ռեսուրսների վերահսկողությունն ի սկզբանե եղել է ընտրական հանձնաժողովների լիազորությունների շրջանակներում, ինչը բնական է, քանզի ընտրական մարմինները պատասխանատու են ընտրությունների և հանրաքվեների կազմակերպ-

³ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» ՀՕ-164-Ն Հայաստանի Հանրապետության օրենք՝ ընդունված 2011 թվականի մայիսի 26-ին, ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին, ՀՀՊՏ 2011.06.16/36(839) Հոդ.852, www.arlis.am

ման համար: Քարոզարշավը հանդիսանում է ընտրությունների և հանրաքվեների բաղկացուցիչ և անբաժան մասը, և քարոզչության նկատմամբ վերահսկողությունը, անկասկած, իր մեջ ներառում է քարոզչության համար ծախսվող գումարների նկատմամբ վերահսկողությունը: Ավելին՝ 2015 թվականին ընդունված Սահմանադրության⁴ 194-րդ հոդվածի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունների և հանրաքվեների քարոզարշավի ժամանակ պարտավոր է իրականացնել քարոզչության նկատմամբ վերահսկողություն, որն իր մեջ ներառում է թե ընթացիկ վերահսկողությունը, թե այս կամ այն խախտման վերաբերյալ վերջնական գնահատական տալը, ինչպես նաև գնահատականն առ այն, թե որքանով է այդ խախտումն ազդել կամ կարող էր ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ավելին՝ այդպիսի լիազորությամբ օժտված են ոչ միայն կենտրոնական, այլև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ իրենց սպասարկման տարածքում և իրենց կողմից ամփոփվող ընտրությունների շրջանակներում: Ընտրական օրենսգիրքը և հանրաքվեների մասին օրենսդրությունը նախատեսում են մեծ թվով սահմանափակումներ նախընտրական քարոզչության համար ծախսվող ռեսուրսների վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես սահմանադրական մարմին և ընտրական մարմինները, որպես ընտրություններ և հանրաքվեները կազմակերպող օղակներ, իրենց ամբողջության մեջ օժտված են քարոզչության համար ծախսվող ֆինանսական ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառնություն: Բացառություն կկազմի միայն այդ դեպքը, երբ պետությունն ընդհանրապես

հրաժարվի քարոզչության համար ծախսվող գումարների նկատմամբ պետական վերահսկողությունից:

Քարոզչության համար ծախսվող գումարների նկատմամբ պետական վերահսկողության ինստիտուտի առկայությունը պահանջում է մասնագիտական և արդյունավետ գործունեություն՝ այդ վերահսկողության շրջանակներում հետապնդվող նպատակներին հասնելու համար: Այս տեսանկյունից մասնագիտական և արդյունավետ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կառույց, որն իր իրավակիրառական պրակտիկայում կձևավորի կայուն գործելակերպ, իրավական դիրքորոշումներ և տեսակետներ, կկատարի ձեռք բերված տեղեկությունների վերլուծություն, կամփոփի պրակտիկական և կառաջարկի նոր մոտեցումներ և լուծումներ՝ ոլորտում առկա խնդիրների հաղթահարման համար: Այդ առումով ընտրական հանձնաժողովներին նման լիազորություններով օժտելը, մեր կարծիքով, արդարացված չէ՝ հաշվի առնելով հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջները (այդ թվում՝ մասնագիտական) և նրանց հիմնական գործառնությունները: Վերոշարադրվածի լույսի ներքո Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը և նրան բավարար անկախություն տրամադրելը, ծառայության ղեկավարի ապաքաղաքական լինելու պահանջ սահմանելը կարելի է համարել հաջողված փորձ: Այն նաև դրական է ընդունվել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից, որն իր 2014 թվականի Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի Գնահատման մեջ՝ կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության կապակցությամբ նշել է, որ ընդունվում է, որ իշխանությունների կողմից ձեռնարկվել են մի քանի միջոցառումներ, այդ թվում՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը, որպես մշտական մարմին՝ կուսակցությունների և նախընտրական քարոզարշավների ֆինանսավորումը վերահսկելու իրավասությամբ (Հայաստանի պարտավորու-

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ին (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ին), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, www.arlis.am

թյունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի Գնահատման երրորդ փուլ, կետ 13)⁵:

Նույն Գնահատմամբ ԳՐԵԿՈՒ-ն նշել է նաև, որ «Հայաստանի իշխանությունները Պարտավորությունների կատարման զեկույցի մշակման ժամանակ արդեն մասամբ իրականացրել էին ընթացիկ առաջարկությունը, որ միանգամայն զգալի միջոցներ էին ձեռնարկվել կուսակցությունների և նախընտրական քարոզարշավների նկատմամբ վերահսկողության համապատասխան մեխանիզմն ապահովելու համար»՝ ընդգծելով որպես մշտական մարմին Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը՝ ընդլայնված կադրային ռեսուրսներով, որը նույնպես դիտարկվել էր որպես բարելավում (կետ 16)⁶:

Գործող Ընտրական օրենսգրքում⁷ ամրագրված կանոնակարգումների համաձայն, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն (Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մաս):

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը գործում է ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց: Ծառայության ղեկավարի պաշտոնը ինքնավար պաշտոն է, ծառայության մյուս երկու աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են: Ծառայության ղեկավարը նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ 7 տարի ժամկետով: Նա չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (ընտրությունների ժամանակահատվածում ներգրավվում են նաև աուդիտորներ և կարող են ներգրավվել նաև մասնագետներ):

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ, ստուգում, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը այն անհապաղ հրապարակում է իր համացանցային կայքում: Եզրակացության մեջ խախտումներ արձանագրված լինելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է քննարկել այն (Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 5-րդ մաս):

Սակայն հարկ է նկատել, որ նման կանոնակարգումն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից⁸, իսկ մինչ այդ ժամկետը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծման պահից սկսած՝ այն իրականացնում էր նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, որը 2022 թվականի հունվարի 1-ից վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Այսպիսով, եթե նախկինում կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ վերապահված էր միայն մեկ մարմնի, ապա այս պահին ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել են քաղաքականության համար ծախսվող կապիտալի երկու հիմնական բաղադրիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնող երկու տարբեր ինստիտուցիոնալ կառույցներ՝ տա-

⁵ Գնահատման երրորդ փուլ՝ Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույց՝ «Քրեականացում (ETS 173 և 191, GPC 2)», «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» // Ընդունվել է ԳՐԵԿՈՒ-ի կողմից՝ դրա 66-րդ լիազումար նիստում (Ստրասբուրգ, 8-12 դեկտեմբերի 2014 թվական) // Greco RC-III (2014) 26E, էլեկտրոնային աղբյուր՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2b39> (դիմելու անսաթիվ՝ 25.03.2022թ.)

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» ՀՕ-202-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին, ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին: ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456, www.arlis.am

⁸ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-54-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 7-ին, ուժի մեջ է մտել 2021 թվականի հունիսի 26-ին: Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, www.arlis.am

րանջատելով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից նախընտրական քարոզչության համար կատարվող ծախսերի նկատմամբ վերահսկողությունից: Միաժամանակ, հարկ է նկատել, որ 07.05.2021թ. ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի համաձայն⁹ Ընտրական օրենսգրքի հիշատակված 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սույն օրենսգրքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Վերոգրյալով, ըստ էության, նախատեսվում է ունենալ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեկ միասնական ինստիտուցիոնալ կառույց՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը ինքնավար պետական մարմին է: Գաղափարախոսությունը, որ հանրային ֆինանսների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է հնարավորություն ունենա անկախ գործել և զերծ լինել քաղաքական, կորպորատիվ և այլ հնարավոր կաշկանդվածությունից, ընդունելի է և ողջունելի: Սակայն հարկ է նկատել, որ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահելը կարող է գործառնական առումով, մեր կարծիքով, հանգեցնել սահմանադրականության հետ կապված խնդիրների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:»:

Անվիճելի է, որ ընտրական գործընթացի մաս է կազմում նախընտրական քարոզչությունը, որի վերաբերյալ օրենսդրորեն սահմանված են նախընտրական քարոզչության կարգը և նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորման կանոնները: Ընտրական գործընթացի տվյալ փուլի՝ նախընտրական քարոզչության օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ըստ էության, հանգում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների կողմից նախընտրական քարոզչությունը օրենքով սահմանված կարգին և ֆինանսավորման կանոններին համապատասխան իրականացումն ապահովելուն կամ խախտումները կանխելուն, խախտումն կատարելու դեպքում՝ բացասական հետևանքները վերացնելուն և ըստ անհրաժեշտության սանկցիաներ կիրառելուն: Ընդ որում, հենց նախընտրական քարոզչությանն առնչվող խախտումների հիմքով է հնարավոր ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների նկատմամբ կիրառել բավականին ծայրահեղական միջոց՝ դիմել դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Գործնականում ընտրությունների և հանրաքվեների քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության իրականացումն առանց նախընտրական քարոզչության կարգի նկատմամբ (վերահսկողության) հսկողության հնարավոր չէ: Մինչ այժմ ընտրությունների և հանրաքվեների քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է *այսպես ասած ընտրական մարմին-*

⁹ 2021 թվականի մայիսի 7-ի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից:

ների մանդատով, և որ դրա արդյունքը սպառողը՝ հանրային վերահսկողության գործառույթից զատ, ընտրական մարմինների համակարգն է:

Գործնականում ծառայությունն իր այդ գործառույթն իրականացնում է ընտրական հանձնաժողովների հետ ակտիվ փոխգործակցության մեջ, երբեմն համատեղ, և դա բնական է մի շարք պատճառներով: Նախ, Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ Ընտրական օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը և խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ձեռնարկում համապատասխան միջոցներ: Նշվածից բացի, ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառման և անհրաժեշտության դեպքում դրա նորմերի պարզաբանման իրավունքն ու պարտականությունը տրված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Այս առումով ծառայության աշխատանքի համար ստեղծված է գրավիչ միջավայր՝ ապահովված լինելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ օպերատիվ քննարկումներ կազմակերպելու, անհրաժեշտ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալու, համապատասխան իրավական կանոնակարգումներ սահմանելու անհրաժեշտության մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հրատապության ռեժիմով իրազեկելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անհրաժեշտ իրավակարգավորումներ հրատապության ռեժիմով ստանալու իրական հնարավորությամբ: Այս գործելաոճը կանխատեսելի է դարձնում ընտրությունները կազմակերպող մարմինների գործունեությունը, մոտեցումները քաղաքական դերակատարների և ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար: Քաղաքական ուժերն ու թեկնածուները քարոզչության ֆինանսավորման օրենսդրության կիրառման շրջանակներում հաճախ են բախվում բազմաթիվ իրավիճակների, երբ խորհրդատվության կարիք են ունենում, և այս դեպքերում նրանք կարողանում են ստանալ ծառայության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համատեղ և համաձայնեցված կարծիքը՝ իրենց վարքա-

գիծը օրենսդրության պահանջով ձևավորելու համար:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության վերապահումն այնպիսի մարմնի, որը կապված չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ, կհանգեցնի վերը նկարագրված «գրավիչ միջավայրի» կորստի, կթուլացնի ընտրական հանձնաժողովների և վերահսկողություն իրականացնող մարմնի միջև փոխգործակցությունը, ինչն էլ, իր հերթին կհանգեցնի վերահսկողության արդյունավետության նվազմանը: Այս առումով գտնում ենք, որ նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը պետք է վերապահվի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխադրությանը: Ավելին, անհրաժեշտ ենք համարում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխադրությանը՝ հաշվի առնելով այն գործառույթները, որոնք, մեր կարծիքով, պետք է վերապահվեն ծառայությանը:

Անդրադառնալով քաղաքական ֆինանսների մյուս բաղադրիչին՝ կուսակցությունների առօրյա գործունեության հետ կապված պետական վերահսկողությանը, նշենք, որ նախկինում այս գործառույթը ևս վերապահված էր ծառայությանը և կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդիսանում էր այս ոլորտի լիազոր պետական մարմինը: Նման գործառույթի վերապահումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին գործառնական առումով, մեր համոզմամբ, հանգեցնում էր սահմանադրականության հետ կապված խնդիրների, քանի որ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն առհասարակ, որը կապված չէ ընտրական կամ հանրաքվեի գործընթացների շրջանակներում նրանց մասնակցությամբ պայմանավորված՝ նախընտրական քարոզչության ֆինանսավորման հետ, չի տեղավորվում ՀՀ Սահմանադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված գործառույթների ցանկում: Ուստի, բավականին ողջամիտ է կուսակցությունների՝ ընտրություններին չառնչվող ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, որպես գործառույթ Կենտ-

րոնական ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից դուրս հանելը և որևէ այլ պետական մարմնին վերապահելը:

Ամփոփելով և ամբողջացնելով քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ մեր մոտեցումները՝ ՀՀ Սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ սահմանված կանոնակարգումների հաշվառմամբ՝ գտնում ենք, որ կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության և ընտրությունների ու հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից իրենց մասնակցությունն ապահովելու համար ներգրավվող և ծախսվող ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունն անհրաժեշտ է տարանջատել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասությանը վերապահել միայն նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը: Ուստի, կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ գործող Ընտրական օրենսգրքով սահմանված «միջանկյալ» կարգավորումը, մեր կածիքով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված գործառույթների և ընտ-

րական գործընթացի շրջանակներում օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետության տեսանկյունից՝ ամենաողջամիտ և սահմանադրականության տեսանկյունից՝ ընդունելին է: Վերոգրյալով պայմանավորված գտնում ենք, որ կարիք կա վերանայելու ընտրական օրենսդրությունը և դեռ ուժի մեջ չմտած կանոնակարգումն առ այն, որ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ 2023 թվականի հունվարի 1-ից վերապահվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, վերացնելու՝ որպես լավագույն լուծում թողնելով այժմ գործող իրավակարգավորումները, որի համաձայն ամենօրյա ֆինանսական գործունեության և նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը տարանջատված է և միայն վերջինիս նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը: Իրողությունն արձանագրող ևս մեկ փոփոխություն կհանդիսանար Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարգավիճակի ամրագրումը որպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ծառայության:



ՆՈՐԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր կիրառական բառապաշարում «սահմանադրություն» բառը կիրառվել է տարբեր նշանակություններով: Օրինակ, այն երբեմն կիրառվում է ինչ-որ բանի կառուցվածքը, օրգանիզմի կազմությունը (մարդու կոնստիտուցիան) բնութագրության նպատակներով: Իրավաբանական գրականության մեջ տվյալ տերմինը ևս կիրառվում է ոչ միանշանակ: Այսպես, բիտանացի գիտնական Ջ. Օլդերը գրում է, որ «ցանկացած կազակերպություն պետք է ունենա սահմանադրություն»¹:

Սակայն առավել հաճախ այս եզրույթը կիրառվում է իրավագիտության մեջ և նշանակում հատուկ իրավաբանական փաստաթուղթ՝ հիմնական օրենք (երբեմն սահմանադրությունը հատուկ անվանվում է հիմնական օրենք, օրինակ, Գերմանիայում, Ֆիլադելֆիայում), հիմնական օրենքների (Շվեդիա և այլն), իսկ երբեմն նաև այլ ակտերի համախումբ (օրինակ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և Հյուսիսային Իռլանդիա)²: Նման նշանակությամբ սահմանադրությունը՝ մարդկային հասարակության մեջ նորմատիվ-իրավական կարգավորման և իրավական մտքի երկարատև զարգացման արդյունք է: Եվ միևնույն ժամանակ՝ Նոր ժամանակներին անցնելիս հասարակության վիճակում որոշակի բեկման ցուցանիշ:

Ինչ-որ դրույթներ, ինչպես այժմ կասեինք, սահմանադրական նշանակություն ունեն եգիպտոսի, Բաբելոնի, Հնդկաստանի, Չինաստանի հնագույն փաստաթղթերում³, սակայն «սահմանադրություն» եզրույթը սկիզբ է առնում հռոմեական կայսրերի իրավական ակտերից: Հրովարտակներին, հրամանագրերին, կարգադրագրերին զուգահեռ նրանք ընդունում էին ակտեր, որոնք սկսում էին «constitutio» (ես) հաստատում, որոշում եմ: Նման ակտերը որևէ ընդհանրություն չունեն ժամանակակից սահմանադրությունների հետ. դրանք կարգավորում էին հանրային և մասնավոր իրավունքի տարբեր և առանձին հարցեր:

Հիմնադրական իմաստով, որոշակի կազմակերպվածության հաստատման, որոշակի կարգի հիմքերի ներածման համար «սահմանադրություն» բառը սկսեց կիրառվել միջնադարյան եվրոպական լատիներենով: Միևնույն ժամանակ գլոսատորները⁴, իսկ հետագայում հետգլոսատորները առանձնահատուկ իրավական ակտերի նկատմամբ սկսեցին կիրառել «հիմնական օրենք» բառակապակցությունը: Սահմանադրություններ անվանվում էին նաև խաչակիրների «մուսուլմանական անհավատներից» զավթված տարածքներում ռազմական-ֆեոդալական բանակատեղերի որոշ ակտեր, վանական միաբանությունների, քաղաքային

¹ Alde JU. Constitutuional and Administrative Law. M.Y., 2007, P 3:

² Конституции государств Европы: в 3 т. М., 2001; Конституции государств Америки : в 3 т.М., 2006; Конституции государств Азии: в 3 т. М., 2010; Конституции зарубежных государств: Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, Соединенные Штаты Америки, Япония: учеб. пособие/ сост. В.В. Маклаков. М., 2006.

³ Որոշ հետազոտողներ կարծում են, որ «սահմանադրական հատվածների» բազմությունը հասել է մեզ նաև հունական քաղաքներից. Burns W. Ancients and moderns. The Emergence os Modern Constitutionalism // Birns W. Democracy and Constitution: Essays Washington, 2006. P. 4.

⁴ Գլոսատորներ՝ սկզբում վանքում գիտնական վանականներ, հետագայում՝ XI-XIII դդ. իրավաբանների դպրոց, որը ծագել է Բաբելոնյան համալսարանում (Իտալիա): Նշումները, որոնք գլոսատորները կատարում էին ուսունասիրվող հռոմեական աղբյուրների տողատակերում և լուսանցքներն անվանվում էին գլոսներ: Հետգլոսատորները, ովքեր համալսարաններում փոխարինեցին գլոսատորներին, արդեն իրականացնում էին հռոմեական իրավական ժառանգության քննադատական-դոգմատիկ վերաշահում և փորձում այն հարմարեցնել եվրոպական ժողովուրդների կյանքի նոր պայմաններին: (տե՛ս Лазарев В.В. Липень С.В. История методология юридической науки. М., 2016, с.96-97).

հանրապետությունների կանոնադրությունները: XVII դարում սահմանադրություններ ընդունվեցին ամերիկյան գաղութների բնակիչների կողմից, սակայն սահմանադրությունները, իրենց ժամանակակից ընկալումներով, Միջնադարում և Նոր ժամանակների սկզբում դեռ բացակայում էին:

Սահմանադրության ընդունման պահանջները, դրա հասկացության որպես նոր պետական կառույցի հիմնադրական ակտի մշակումը, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ և Ֆրանսիայում XVII-XVIII դարերում սահմանադրական նշանակության փաստաթղթերի ընդունումը կապված էր⁵ ֆեոդալական կառույցի և ֆեոդալական իրավունքի, «արտոնությունների իրավունքի» դեմ ժողովրդի պայքարի հետ:

Որպես երկրի բրիտանական գաղութային կախվածությունից ազատման արդյունք պետությունների առաջին սահմանադրությունը (Անկախության հռչակագիրը ընդունվել է 1776թ.) ընդունվել է ԱՄՆ 1787թ.⁶ (նախքան այդ գործում էին 1777թ. ԱՄՆ Համադաշնության Հոդվածները): Հետագայում ընդունվեցին Լեհաստանի և Ֆրանսիայի 1971թ. սահմանադրությունները (փաստացի չէին գործում): XIX դ. առաջին կեսին սահմանադրական իրավաստեղծումը ընդգրկեց գրեթե ամբողջ Եվրոպան: Սահմանադրությունները կամ սահմանադրական օրենքները (որպես սահմանադրության հավելյալ հատված) ընդունվեցին Եվրոպայի հարավային սահմաններից (Իսպանիա, Իտալիա) մինչև հյուսիսայինը (Նորվեգիա,

Շվեդիա), արևմուտքից (Ֆրանսիա) մինչև արևելք (Լեհաստան): Նույն ժամանակահատվածում սկսեցին սահմանադրություններ ընդունվել Լատինական Ամերիկայի երկրներում

(դրանցից առավել վաղը՝ 1811թ. Վենեսուելայի Սահմանադրությունը): XIXդ. երկրորդ կեսին սահմանադրությունների ստեղծման գործընթացը տարածվեց Ասիայում (Ճապոնիայի 1889թ. Սահմանադրությունը), XXդ. առաջին կեսին՝ այլ երկրներում. Իրան (1906թ.), Չինաստան (1912թ.): Սահմանադրական նշանակության ակտեր ընդունվեցին Մեծ Բրիտանիայում 1867թ. և հետագայում Կանադայի համար: Ինչ վերաբերվում է Աֆրիկայի, ապա միակ սահմանադրությունը այդ ժամանակաշրջանում գործում էր Լիբերիայում, հիմնված 1847թ. սևամորթերի՝ ԱՄՆ գաղթյալների կողմից: Այս սահմանադրությունը պատճենված էր ԱՄՆ Սահմանադրությունից:

Առաջին Համաշխարհային պատերազմից հետո սահմանադրություններ ընդունվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում, 1918թ՝ հռչակվում է առաջին սոցիալիստական սահմանադրությունը՝ Ռուսաստանի Խորհրդային Դաշնության Սոցիալիստական Հանրապետության (ՌԽԴՍՀ), 1924թ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) Սահմանադրությունը: Ընդունվեցին նաև ԽՍՀՄ կազմում ինքնավար և միութենական հանրապետությունների սահմանադրությունները, ԽՍՀՄ հետ հարևան Արևելքի երկրների սահմանադրությունները (Բուխարա, Մոնղոլիա, Տուվ, Խիվ): Այս շրջանում Արևմտյան Եվրոպայի մետրոպոլ-պետությունները սկսեցին իրենց գաղութներում (Հնդկաստանում, Հյուսիսային Աֆրիկայի առանձին պետություններում) ներածել առաջին շնորհված սահմանադրությունները: Նման «գաղութային սահմանադրությունները» հաճախ անվանվում էին գաղութներում ղեկավարող կառավարիչների անուններով:

⁵ Այստեղ և ստորև նշված են սահմանադրության ընդունման, այլ ոչ դրանց ուժ ստանալու տարեթվերը: Մեծ Բրիտանիայում, որտեղ սահմանադրությունը չի հանդիսանում միասնական փաստաթուղթ, այլ բաղկացած է բազաթիվ օրենքներից և այլ ակտերից, առաջին սահմանադրական փաստաթուղթ սովորաբար համարում են 1215թ. Ազատության մեծ խարտիան, որը գլխավորապես ամրագրում է թագավորական իշխանության նկատմամբ բարոնների իրավունքները:

⁶ Նախքան 1787թ. ԱՄՆ պետությունների առաջին սահմանադրության ընդունումը սահմանադրություններ ընդունվել են առանձին հյուսիսամերիկյան գաղութներում՝ նահանգներում: Դրանք ունեին փոքր ծավալ, իսկ դրանց բովանդակությունը չէր համապատասխանում ժամանակակից սահմանադրության հասկացությանը: Դրանցից առաջինները պարունակում էին արդարութեան վերաբերյալ բրիտանական մետրոպոլիս ուղղված կոչեր, հետագաները՝ մերժում էին բրիտանական գաղութի նույնիսկ «ուղղիչ» իշխանության պահպանության հնարավորությունը, պաշտպանում մարդու բնական իրավունքների գաղափարները և պահանջում անկախություն: Քանի որ բրիտանական Սահմանադրությունը, որը սովորաբար անվանվում է չգրված, բաղկացած է տարբեր ակտերից (կարգավիճակներից, հետագայում՝ օրենքներից, դատական նախադեպերից, ավանդույթներից (կոնվենցիոնալ համաձայնագրերից)), երբեք համարում են, որ առաջին սահմանադրությունը ծագել է հատկապես Անգլիայում:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո արտերկրյա սոցիալիստական երկրների՝ Եվրոպայում (Ալբանիա, Բուլղարիա, Ռումինիա և այլն), Ասիայում (Չինաստան, ԿԺԴՀ և այլն), Լատինական Ամերիկայում (Կուբա) «ազգային դեմոկրատիայի երկրների» ծագումը հանգեցրեց այդ երկրներում նոր սոցիալիստական սահմանադրությունների ընդունմանը⁷: XXդ. 50-70-ական թվականներին գաղութային համակարգի փլուզման և հետագայում Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում հարյուրից ավելին նոր պետությունների ձևավորման արդյունքում ընդունվեցին մոտավոր 200 նոր պետությունների սահմանադրություններ (հաշվառվում են նրանք, որոնք բազմակի փոփոխվել են): Սահմանադրական զարգացման գործընթացը ստացավ նոր խթաններ XXդ. 90-ական թվականներին տոտալիտար սոցիալիզմի համակարգի փլուզման արդյունքում (ԽՍՀՄ փլուզում, այլ երկրների կողմից զարգացման այլ ուղղու ընտրություն), Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի պետություններից մեծամասնությունում գրանցվեց տոտալիտար ռեժիմների անկում: Այդ պետություններում ևս ընդունվեցին նոր հիմնական օրենքներ:

XXդ. 70-ական թվականներին մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրներում սկսած Բուվեթից (1962թ) սկսեցին ընդունել սահմանադրություն (նիզամներ, այժմ դրանք առկա են նման բոլոր երկրներում)⁸: Իրենց սահա-

նադրություններն են գործում բազմաթիվ երկրների դաշնային սուբեկտներում (Բրազիլիա, Գերանիա, Ռուսաստան, ԱՄՆ և այլն), երբեմն՝ ինքնավար ձևավորումներում (օրինակ, Ղրիմի Ինքնավար Հանրապետության 1988թ. Սահանադրությունը): Հիմնական օրենքներ գոյություն ունեն նաև Չինաստանի հատուկ վարչական շրջաններում՝ Սյանգանում (նախկին Հոնկոնգ) 1997թ. և Ամոնում (Մայաո նախկին պորտուգալական գաղութ) 1999թ: Ներկայումս տիրապետում ենք 1000 ավելին սահմանադրությունների և պետությունների սահմանադրական ակտերի ու դաշնության սուբեկտների և ինքնավար ձևավորումների 500 սահմանադրությունների (հիմնական օրենքների, կանոնադրությունների) ընդունման և գործման փորձով (ներառելով փոփոխած հիմնական օրենքները)⁹:

Գործող սահմանադրությունները բնութագրվում են ձևերի և բովանդակությունների հսկայական բազմազանությամբ: Որոշ երկրների (Իսրայել, Շվեդիա և այլն) սահմանադրությունների կազմությունում ներառվում են մի քանի հիմնական օրենքներ: Օրենքները, որոնք չեն անվանվում հիմնականներ, սակայն որոշ երկրներում (Մեծ Բրիտանիա, Կանադա, Նոր Զելանդիա և այլն)¹⁰ դասվում են սահմանադրականների շարքին, հաճախ խիստ բազաթիվ են (որոշ ամերիկյան հեղինակներ համարում են, որ Բրիտանական սահմանադրությունը կազում են 300 ավելին օրենքներ)¹¹: Որոշ սահմանադրությունների տեքստերի նկատմամբ կրակացվել

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

⁷ Ինչպես խորհրդային սահմանադրությունները, դա տոտալիտար բնույթի սահմանադրություն էր (պրոլետարիատի դիկտատուրա, միակ կուսակցության՝ կոմունիստականի ղեկավարական դերը, տեղի ինքնավարության, մարդու բնական իրավունքների, մասնավոր իրավունքի, ազատ մրցակցության մերժում և այլն), սակայն տոտալիտար սոցիալիստական պետությունը (հետագա զարգացման ընթացքում դրա տոտալիզմի որոշ կողմեր չեզոքացվեցին, օրինակ, իրականացվեց պրոլետարիատի դիկտատուրայի հայեցակարգից հրաժարում) սկզբունքորեն տարբերվում է ֆաշիզմից (արիական ռասայի գերակայում և «թերի ազգությունների» ոչնչացում, համաշխարհային իշխանության զավթում, «ֆյուրերի» անսահմանափակ իշխանություն, կոնցենտրացիոն ճանքարներ), այլ տոտալիտար ռեժիմներից (օրինակ, ռազմական խորհուրդների կառավարումից):

⁸ Հիմնական նիզամներ՝ մետրոպոլի կողմից շնորհված ակտեր (սովորաբար աշ-շուրի հետ խորհրդակցությունից հետո, կայացած մետրոպոլի առընթեր և նշանակված վերջինիս կողմից մուսուլմանական հանրույթի հեղինակավոր անձանց կազմով): Հիմնական նիզամները ունեն սահմանադրության ձև և բովանդակություն, սակայն իրական սահմանադրություն համարվում է Ղուրանը, որի վերաբերյալ շարադրված է որոշ նիզամներում (օրինակ, 1992թ. Սաուդյան Արաբիայի Հիմնական Նիզամի հոդ. 1): Իսրայիլում նաև համարվում է, որ սկզբունքային սահմանադրական դրույթերը առկան են հիմնադրական կրոնական տեքստերում (օրինակ, Մովսեսի Հնգամատյանը), այդ իսկ պատճառով երբեմն համարում են, որ Իսրայելում չկա հատուկ փաստաթղթի որակով սահմանադրություն, այլ կիրառում են հիմնական օրենքները (դրանք ընդունված են 10 ավելին):

⁹ Տե՛ս Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. проф. Чиркин В.Е.М., 2014, с. 15.

¹⁰ Մեծ Բրիտանիայում և անգլոսաքսոնական իրավունքի որոշ այլ երկրներում պաշտոնապես չեն տարբերակվում հիմնական (սահմանադրական) և այլ օրենքներ: Բոլոր օրենքները ունեն միանման ուժ:

¹¹ Տե՛ս Great Britain. Constitutions of the Countries of the World. M.Y., 1984.

են տարածական լրացումներ (Հնդկաստանում դրանցից որոշները համեմատական են ԱՄՆ Սահմանադրության ծավալների հետ) և հավելվածներ (Մեծ Բրիտանիայում սահմանադրական բնույթ ունեցող օրենքների հավելվածները, օրինակ, 2005թ. Սահմանադրության բարեփոխության վերաբերյալ օրենքի հավելվածը, երբեմն մի քանի, նույնիսկ տասնյակ անգամ ըստ ծավալի գերազանցում է հիմնական տեքստին)¹²: Մեծ Բրիտանիայի, Նոր Զելանդիայի և մյուսների սահմանադրությունների կազմության մեջ ներառվում են դատական նախադեպերը (ըստ սահմանադրական նշանակության հարցերի բարձրագույն դատարանների որոշումներ), ինչպես նաև սահմանադրական ավանդույթները: Մեծ Բրիտանիայում երբեմն, որպես սահմանադրության կազմություն ներառվում են հայտնի բրիտանական իրավաբանների սկզբունքային եզրակացությունները, քանի որ դատարանները ըստ սահմանադրական հարցերի առանձին դեպքերում նման դրույթներին են հղում իրենց որոշումները:

Ֆրանսիական գրականության մեջ կիրառվում է «սահմանադրական բլրկ» հասկացությունը, քանի որ 1958թ. սահմանադրությունը գլխավորապես ամրագրում է հանրապետության բարձրագույն մարմինների հարաբերությունների կարգը, իսկ բազաթիվ այլ հացեր կարգավորվում էին 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրով, 1946թ. գործող և ներկայումս չեղյալականացված Սահմանադրության նախաբանով, 2004թ. Շրջակա միջավայրի խարտիայով և որոշ այլ ակտերով:

Մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրներում (Քաթար, Միացյալ Արաբական էմիրություններ, Օման, Սաուդյան Արաբիա և այլն) Ղուրանին (Մուհամադ մարգարեի գրառված պատվիրաններին) զուգահեռ կարևոր սահմանադրական նշանակություն ունի Սուննան (մարգարեի կյանքի նկարագրությունը): Որոշ երկրների (օրինակ, 1992թ. Սաուդյան Արաբիայի) թագավորական հիմնական նիզաներում Ղուրանը և Սուննան հայտարարվել են սահմա-

նադրություն: Այս սուրբ գրքերի հիման վրա վերահսկվում են սահմանադրական նշանակության բազմաթիվ դրույթներ, ձևավորվում է իրավակիրառ պրակտիկան: Վերջին տասնամյակում այս փաստաթղթերին միացվում է, ինչպես ասվել է, թագավորական հիմնական նիզամները: Այսպիսով, գիտական եզրակացությունների և ընդհանրացումների համար առկա է հսկայական նյութ, որը համեմատական վերլուծության դեպքում կարող է նաև կիրառվել գործող սահմանադրությունների կատարելագործման համար:

Այս իրավաբանական նորմատիվ նյութի ընդհանրացված անվանման համար (նույնիսկ եթե այն բաղկացած է տարատեսակ տարրերից) երկրների մեծամասնությունում կիրառվում է «սահմանադրություն» անվանումը: Լատինական Ամերիկայի առանձին իսպանալեզու երկրներում, Կարիբյան տարածաշրջանի անգլիալեզու պետություններում «սահմանադրություն» բառին ավելացվում է «քաղաքական» ածականը (Վենեսուելա, Կոլումբիա, Մեքսիկա և այլն): Դա ամենից առաջ պայմանավորված է նրա հետ, որ որոշ լեզուներում «սահմանադրություն» բառը նշանակում է նաև կանոնադրություն (օրինակ, արհմիությունների կանոնադրություն), և այս երևույթների սահամազատման համար, ներածվում է նշված ածականը:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացված են սահմանադրության տարբեր հասկացություններ: Արտերկրյա հրատարակչություններում առաջարկվող սահմանումները, որպես կանոն, կատարում են շեշտադրություն սահմանադրության «պետության և դրա բաղադրիչների» կարգավորման վրա»¹³ դիտարկում այն որպես կանոնների համախումբ, որը վերաբերվում է պետությանը¹⁴, գլխավորը տեսնելով նրանում, որ «սահմանադրությունը սահմանում է իշխանության օրինականությունը»¹⁵: Բրիտանացի գիտնական Ջ. Օլդերը, համակարգելով անգլիական գրականության մեջ այս և այլ բնութագրիչներ, հաստատեց, որ սահմանադրության միասնական իրավաբանական

¹² Տե՛ս Constitutional Reform Act 2005. L, 2005. Chap.4.

¹³ Տե՛ս Guissani E. Constitutional and Administrative Law. L., 2008. P. 4-5.

¹⁴ Տե՛ս Homon P., Troper M. Droit Constitutionnel. 30-e ed.P., 2007. P. 24.

¹⁵ Տե՛ս Barnett H. Constitutional and Administrative Law. 7th ed. L., 2009. P. 5.

սահմանում գոյություն չունի, իսկ այն տարրերը, որոնց հեղիակները կոչում են բնորոշ գծեր (իրավական և ոչ իրավական նորմաների կոմբինացիաներ, որոնք հաստատում են քաղաքականության մասնակիցների վարքագծային կարգավորիչ և կառավարիչ հիմքերը, «սահմանադրություն» կամ «հիմնական օրենք» անվանումով ինստիտուտը, ընդունված և փոփոխվող հաստատված գործընթացի ուղիով, կառավարության աշխատանքը սահմանող կանոնների համախումբը), չեն համապատասխանում բրիտանական Սահմանադրությանը¹⁶: Տվյալ գրքի հաջորդ հատվածներում հեղինակները փորձել են տալ սահմանում, որը, ըստ նրանց տեսանկյունի, կիրառական է նաև բրիտանական Սահմանադրության նկատմամբ:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Սաֆարյանը «Սահմանադրության հասկացությունը լատիներենում (constitutio)» նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում», «սահմանադրությամբ» կամ «սահմանադրություն» չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության հիմնա-

կան օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության գաղտնիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները»¹⁷:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ արդի սահմանադրությունը դիտարկում է ոչ միայն պետության հիմնական օրենք, այլև հասարակական դաշինք և իրավաքաղաքական հիմնարար փաստաթուղթ:



¹⁶ Տե՛ս Alder J. Constitutional and Administrative Law. 6th ed. N.Y., 2007. P. 7.

¹⁷ Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակչություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 23-24:

ԱՆՈՒՇ ՄՈՎԱԽԱՅԱՆ

ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ,
Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի
կազմակերպարավական վարչության գլխավոր իրավաբան

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Հանրային ծառայության համակարգում առանձնահատուկ դեր և նշանակություն ունի պետական ծառայությունը: Իրավաբանական գրականության մեջ պետական ծառայության վերաբերյալ կարծիքները և սահմանումները բազմազան են և կախված պետության կառավարման ձևից ու զարգացման աստիճանից՝ դրանք փոփոխվում են: Այսպես՝ Ն.Մ.Կորկունովը պետական ծառայությունը դիտարկում է որպես պետության և պետական ծառայողի միջև որոշակի հասարակական-կառավարչական հարաբերությունների ամբողջություն, որոնք հիմնված են որոշակի ենթակայության վրա, ունեն հատուկ լիազորություններ և պարտականություններ և ուղղված են պետական կառավարման հատուկ խնդիրներ լուծելուն¹: Ա. Ա. Տարանովը կարծում է, որ պետական ծառայությունը նախատեսված է պետության և պետական մարմինների գործառույթներն իրականացնելու, իրենց իրավասության սահմաններում պետական մարմինների արդյունավետ գործունեության համար պայմաններ ստեղծելու, կառավարչական գործունեության կազմակերպումը և քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն ապահովման համար²: Պետական ծառայության հիմնական գործառույթը պետությանը, հասարակությանը և ժողովրդին ծառայելն է³: Ռ. Եղյանի բնորոշմամբ՝ պետական ծառայությունն անմիջականորեն կապված է պետության գործունեության հետ և ըստ էության, արտահայտում է պետության ողջ կազմակերպական աշխատանքը⁴:

Հարկ է նշել, որ պետական ծառայության հասկացությունը սովորաբար հստակ սահմանվում է օրենքով: Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում «պետական ծառայություն» հասկացությունն առաջին անգամ ամրագրվել է «Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքով, այնուհետև նույն բովանդակությամբ սահմանվել է «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի ՀՕ-172-Ն և 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքներով: 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը*:

Ուսումնասիրելով և վերլուծելով պետական ծառայության վերը նշված հասկացության սահմանման բովանդակությունը՝ կարելի է առանձնացնել պետական ծառայությանը բնորոշ հետևյալ հիմնական հատկանիշները՝

1. *պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է*: Սա նշանակում է, որ պետական ծառայությունը պահանջում է համապատասխան մասնագիտական գիտելիքների, հմտությունների և աշխատանքային փորձի առկայություն, պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար սահմանվում են կոնկրետ որակավորման պահանջներ, և պե-

¹ Տե՛ս **Коркунов Н.М.**, Русское государственное право, Том I, СПб, 1909, стр. 271.
² Տե՛ս **Таранов А.А.** Административное право Республики Казахстан, Алматы, 2002, стр. 74.
³ Տե՛ս **Абезин Д. А., Голоманчук Э. В., Мельников Р. О., Трифонова К. А.**, Служебное право : учебное пособие, Волгоградский институт управления – филиал ФГБОУ ВО РАНХиГС. – Волгоград : Издво Волгоград. института управления – филиала ФГБОУ ВО РАНХиГС, 2016, стр. 21.
⁴ Տե՛ս Եղյան Ռ. Հ., Քաղաքացիական (պետական) ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2004, էջ 9:

տական ծառայողը պետք է բավարարի այդ պահանջները, համապատասխանի տվյալ պաշտոնի համար սահմանված կրթության և աշխատանքային ստաժի չափանիշներին:

2. *Պետական ծառայությունն իրականացվում է բացառապես պետական մարմիններում:* Պետք է արձանագրել, որ պետական մարմիններում պետական ծառայությունն իրականացնում են պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր զբաղեցնող հանրային ծառայողները՝ արժանիքահետևության վրա հիմնված կարիերային առաջընթացով՝ հանրային ծառայության կայունության սկզբունքին համապատասխան:

3. *Պետական ծառայությունն ապահովում է պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը:* Սա նշանակում է, որ պետական ծառայությունը պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց միջոցով իրականացնում է կոնկրետ պետական մարմնի պաշտոնեական լիազորությունները, ուղղված է այդ մարմնի առջև դրված խնդիրների կատարմանը և նպատակների ու գործառույթների գործնական իրագործմանը:

4. *Պետական ծառայությունն իրականացվում է իրավական հիմքի վրա:* Հիշյալ հատկանիշն ինքնին նշանակում է, որ պետական մարմինն վերապահված լիազորությունները պետք է սահմանված լինեն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ Սահմանադրությամբ, օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, և պետական մարմիններն ու պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. *Պետական ծառայությունը հարուցելի է:* Պետական ծառայության վարձատրությունն իրականացվում է բացառապես պետական բյուջեի միջոցների հաշվին, այսինքն՝ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք իրենց կատարած աշխատանքի դիմաց օրենքով սահմանված կարգով և չափով վարձատրություն են ստանում պետական բյուջեից:

Հարկ է նշել, որ պետական ծառայությունը բնութագրող վերջին հատկանիշը ուղղակիորեն չի բխում պետական ծառայության սահ-

մանման բովանդակությունից, սակայն հաշվի առնելով յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովման սկզբունքի կարևորությունն ու նշանակությունը, գտնում ենք, որ պետական ծառայության սահմանումը պետք է բովանդակի նաև հիշյալ հատկանիշը:

Հաշվի առնելով վերոնշյալը և առավել ամբողջական դարձնելով պետական ծառայության հասկացության սահմանումը՝ առաջարկում ենք «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. *Պետական ծառայությունը պետական մարմիններում մասնագիտական և պետական միջոցներից վարձատրվող գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:*»:

Պետական ծառայությունն իր հերթին դասակարգվում է տարբեր տեսակների, որոնք հիմնականում կապված են պետական-ծառայողական գործունեության բովանդակության մասնագիտացման և կոնկրետ պետական մարմինների լիազորությունների հետ: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *պետական ծառայությունն ընդգրկում է՝* 1) քաղաքացիական ծառայությունը, 2) դիվանագիտական ծառայությունը, 3) մաքսային ծառայությունը, 4) հարկային ծառայությունը, 5) փրկարար ծառայությունը, 6) զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), 7) ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, 8) ոստիկանությունում ծառայությունը, 9) հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, 10) քրեակատարողական ծառայությունը, 11) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, 12) դատական կարգադրիչների ծառայությունը:

Վերոնշյալ իրավանորմի բովանդակային ուսումնասիրությունից ուղղակիորեն պարզ է դառնում, որ ի տարբերություն 2001 թվակա-

նին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» և 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքների՝ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով նախ՝ պետական ծառայության տեսակները ձևակերպված են բավարար չափով որոշակի և հստակ, բացի այդ, որպես պետական ծառայության առանձին տեսակներ՝ հանվել են դատական ծառայությունը և քաղաքացիական հատուկ ծառայությունը: Այս առումով հարկ է նշել, որ դատական ծառայությունը գործում էր միայն Դատական դեպարտամենտում, սակայն 2018 թվականին քաղաքացիական ծառայության բարեփոխումների արդյունքում ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի գործողության ոլորտը տարածվեց նաև Դատական դեպարտամենտի վրա, և Դատական դեպարտամենտի դատական ծառայողները, ինչպես նաև քաղաքացիական հատուկ ծառայողները «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված նորմի իրավական ուժով համարվեցին քաղաքացիական ծառայողներ, միայն դատական ծառայության պաշտոններից դատավորի օգնականի պաշտոնը դարձավ պետական հայեցողական պաշտոն, հետևաբար վերագրյալով պայմանավորված դադարեց գործել դատական ծառայությունը և քաղաքացիական հատուկ ծառայությունը:

Պետք է նշել, որ հանրային ծառայությունն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է հանրային ծառայություն ընդունվելու միասնական պահանջներ, որոնք պարտադիր են պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների համար՝ այդպիսով ապահովվելով հանրային ծառայության բոլոր տեսակների միջև որոշակի միասնականություն: Սակայն հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ, ընդհանրական հատկանիշներ ունենալով մյուս տեսակների հետ, ունի նաև որոշակի տարբերակիչ առանձնահատկություններ: Մասնավորապես՝ պետական ծառայությունը, ունի որոշակի ընդհանրություններ և տարբերություններ թե՛ համայնքա-

յին ծառայության, թե՛ հանրային պաշտոնների հետ: Այսպես՝ պետական ծառայությունը ունի հետևյալ ընդհանրական հատկանիշները հանրային ծառայության երեք տեսակների հետ՝

➤ պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն են, երկու ծառայությունն էլ կոչված են իրականացնելու պետության խնդիրներն ու գործառույթները, և նշված ծառայությունների առանձնահատկությունն այն է, որ պետական ծառայությունը պետական մարմինների, իսկ համայնքային ծառայությունը համայնքների խնդիրներն ու գործառույթներն են իրականացնում:

➤ թե՛ պետական ծառայության, թե՛ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև պետական ծառայության կամ համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձինք համարվում են հանրային ծառայողներ:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով ամրագրված են հանրային ծառայության հիմնական սկզբունքները, որոնք պարտադիր են հանրային ծառայության բոլոր երեք տեսակների համար:

➤ Պետական և համայնքային ծառայողների համար սահմանվել են պետական ծառայության և համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու, ինչպես նաև հանրային ծառայություն ընդունվելու միասնական պահանջներ: Մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընդհանուր պահանջներ, և միայն այդ պահանջները բավարարող քաղաքացիները իրավունք ունեն զբաղեցնել հանրային ծառայության պաշտոն, իսկ 14-րդ հոդվածով սահմանված են այն ընդհանուր պայմանները, որոնց առկայության դեպքում անձն իրավունք չունի ընդունվելու հանրային ծառայություն:

➤ Պետական ծառայության յուրաքանչյուր տեսակ և համայնքային ծառայություն ունեն պաշտոնների անվանացանկ, ինչպես նաև պետական և համայնքային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար նախատեսված է պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարա-

գիր), որը հնարավորիս ճշգրիտ արտացոլում է տվյալ պաշտոնի հիմնական գործառույթները:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներով ամրագրված են հանրային ծառայողի հիմնական իրավունքներն ու հիմնական պարտականությունները, ինչպես նաև հանրային ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները, որոնք հավասարապես պարտադիր են թե՛ պետական ծառայողների, թե՛ համայնքային ծառայողների համար:

➤ Պետական և համայնքային ծառայության փոխկապակցվածությունը բնութագրվում է պետական և համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոններից ազատվելու հիմքերով: Պետական ծառայության և համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սպառիչ թվարկված են հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու կամ լիազորությունները դադարեցնելու հիմքերը, հետևաբար պետական և համայնքային ծառայողները ազատվում են զբաղեցրած պաշտոններից կամ նրանց լիազորությունները դադարեցվում են բացառապես այդ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

➤ Պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների փոխկապակցվածությունն առկա է նաև ընդհանուր իրավահարաբերություններում՝ բարեվարքության համակարգի տարրերում: «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներ և դրանցից բխող վարքագծի կանոններ (այդ թվում՝ պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման նույնատիպ կանոններ, որոնք հավասարապես կիրառելի են նպետական ծառայողների, և համայնքային ծառայողների, և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված են թե՛ պետական ծառայության, թե՛ համայնքային ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց, թե՛ հանրային պաշտոններ զբաղեցնող ան-

ձանց համար գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածների համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին իրենց ծառայողական լիազորությունները կատարելու համար տրամադրում են նույնատիպ սոցիալական երաշխիքներ և սոցիալական ապահովություն, որոնք ծառայողական գործունեության խթանման հիմք են հանդիսանում և ապահովում են հանրային ծառայության մեջ գտնվող անձնացու նրանց ընտանիքների կյանքի անհրաժեշտ որակը:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններում աշխատած ժամանակահատվածը համարվում է հանրային ծառայության ստաժ: Այսինքն՝ պետական ծառայության ստաժը, համայնքային ծառայության ստաժը և հանրային պաշտոններում աշխատած ժամանակահատվածը օրենսդրորեն հավասարեցվել են միմյանց, ինչն իրապես ապահովում է հանրային ծառայության տեսակների փոխկապակցվածությունը:

Պետական ծառայությունը, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների հետ ընդհանրություններ ունենալով հանդերձ, այնուամենայնիվ, ունի պետական ծառայությանը բնորոշ որոշակի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է համայնքային ծառայությունից և հանրային պաշտոններից: Մասնավորապես՝ պետական ծառայությունը համայնքային ծառայությունից տարբերվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով՝

➤ Հանրային ծառայության ոլորտում իրականացրած բարեփոխումների արդյունքում 2018 թվականի ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներին պետական ծառայության առանձին տեսակները համապատասխանեցնելու նպատակով 2020 թվականի հունվարի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեցին մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 65 օրենքներ, սակայն այդ փաթեթում ներառված չէր «Համայն-

քային ծառայության մասին» օրենքը: Այսինքն՝ հանրային ծառայության ոլորտում իրականացրած բարեփոխումները չեն գործում համայնքային ծառայությունում: Այդ բարեփոխումների արդյունքում պետական ծառայության առանձին օրենքներով հստակ ամրագրվեցին, որ պետական ծառայությունների բոլոր պաշտոնները, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխան, պետք է զբաղեցվեն միայն մրցութային կարգով: Մինչդեռ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14.1-ին հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են նաև արտամրցութային կարգով, այսինքն՝ առանց մրցութի: Բացի այդ, ամբողջովին վերանայվեց նաև թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցութային կարգը, օրենքներով ամրագրվեց մրցութի անցկացման երկու տեսակ՝ ներքին և արտաքին, իսկ համայնքային ծառայությունում մրցութի տեսակներ սահմանված չեն:

➤ 2018 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով ամբողջովին վերանայվեց պաշտոնների գնահատման համակարգը, սահմանվեց պաշտոնների դասակարգման և գնահատման նոր մոդել, որի համաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են երկու հիմնական խմբերի՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ և քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ⁵: Համայնքային ծառայությունում դեռևս գործում է պաշտոնների գնահատման և դասակարգման հին համակարգը, որի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են երեք խմբի՝ համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ:

➤ 2018 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով նախատեսված չէ նաև քաղաքացիական ծառայողների ատեստավորում, ավելին՝ դեռևս 2017 թվականի հունվարի 1-ից քաղաքացիական ծառայության համակարգում դադարեցվել է պարտադիր ատեստավորման գործընթացը, և քաղաքացիական ծառայողի ատեստավորման ինս-

տիտուտը փոխարինվել է քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման համակարգով, որը իրականացվում է աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման արդյունքներով, մինչդեռ համայնքային ծառայության համակարգում դեռևս գործում է համայնքային ծառայողների ատեստավորման ինստիտուտը:

Պետական ծառայությունը հանրային պաշտոններից տարբերվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով՝

➤ Պետական ծառայության և համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք հանրային ծառայողներ են, իսկ հանրային պաշտոններ զբաղեցնող անձինք հանրային ծառայողներ չեն, այլ համարվում են հանրային ծառայության մեջ գտնվող կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, և նրանց վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային ծառայողներին վերաբերող իրավական կարգավորումները:

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոններն ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով, մինչդեռ պետական ծառայության յուրաքանչյուր տեսակը կարգավորող օրենքով (նաև համայնքային ծառայության օրենքով) հստակ սահմանված են պետական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու եղանակները:

➤ Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է, այսինքն՝ արժանիքահենության վրա հիմնված կարիերային առաջընթացը, քաղաքական չեզոքությունը և քաղաքական զսպվածությունը հանրային ծառայության պաշտոնը բնութագրող հիմնական, կարևորագույն հատկանիշներն են և հանրային ծառայողների համար կրում են պարտադիր, իմպերատիվ բնույթ, մինչդեռ հանրային պաշտոնների համար հիշ-

⁵ Տես ՀՀՊՏ 2018.03.29/24(1382), հոդված 6:

յալ հատկանիշներից և որևէ մեկը նախատեսված չէ:

➤ Հանրային պաշտոնները ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով: Նշված իրավական նորմից ուղղակիորեն կարող ենք եզրակացնել, որ հանրային պաշտոններ զբաղեցնելու հիմքերը կանխորոշում են նաև այդ պաշտոններից ազատելու հիմքերը: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված չէ որևէ այլ առանձնահատկություն հանրային պաշտոն զբաղեցնող անձի նշանակման և ազատման հարցում, ուստի հանրային պաշտոն զբաղեցնող անձը կարող է նշանակվել կամ ազատվել այդ պաշտոնից քաղաքական գործընթացների կամ հայեցողական որոշման արդյունքում: Հանրային ծառայողները չեն կարող ազատվել քաղաքական գործընթացների կամ հայեցողական որոշման արդյունքում, հանրային ծառայողները զբաղեցրած պաշտոններից ազատվում են բա-

ցառապես օրենքով սահմանված ազատման հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

Ամբողջացնելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ պետական ծառայության հիմնական նպատակը պետության գործառույթների գործնական իրականացումն է, նրա առջև դրված խնդիրների լուծումը, հասարակության բարեկեցության ապահովումը, հանրային շահի բավարարումը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ներկայումս հանրային ծառայության առանձին տեսակ համարվող պետական ծառայությունն ընդգրկում է 12 ծառայության տեսակ, որոնցից յուրաքանչյուրը կապված է կոնկրետ պետական մարմնի լիազորությունների հետ և ունի իր առանձին օրենսդրական կարգավորումն ու առանձնահատկությունները: Պետական ծառայությանը բնորոշ են մի շարք հատկանիշներ, որոնց հիման վրա պետական ծառայությունը ունի որոշակի ընդհանրություններ և տարբերություններ և համայնքային ծառայության, և հանրային պաշտոնների հետ:



ՎԻԿՏՈՐՅԱ ՀԱԿՈՔԱՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ
 Իրավաբան ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
 ՊԱՅՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Առողջության իրավունքը միջազգայնորեն ընդունված իրավունք է, քանի որ աշխարհի բոլոր պետությունները գիտակցում են առողջության պահպանման կարևորությունն իրենց բնակչության և քաղաքացիների շրջանում: Մարդու արժանապատիվ կյանքի հիմնական հատվածը կազմում է վերջինիս առողջության բարձր և բարվոք մակարդակը, ինչը ոչ միայն անձի կամ բուժաշխատողների կենտրոնական խնդիրներից է, այլ նաև պետության: Պետությունն առողջության պահպանման ոլորտում իր պատասխանատվությունն իրականացնում է ինչպես համապատասխան արդյունավետ իրավական կարգավորումներ հաստատելու, այլ նաև քաղաքականությանն մշակման և կոնկրետ գործողություններ ու միջոցառումներ իրականացնելու միջոցով:

Առողջության պահպանման իրավունքն իր ամրագրումն է ստացել ոչ միայն ազգային օրենսդրության շրջանակներում, այլ նաև մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, որով ամրագրվում է սույն դաշնագրին մասնակցող պետությունների՝ յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը ճանաչելու պարտականությունը:

Յուրաքանչյուր պետություն, որը միացել է վերը նշված միջազգային պայմանագրերին, պարտավոր է վերանայել իր իրավական համակարգը և ամրագրում տալ ոչ միայն առողջության իրավունքին, այլ նաև առողջության իրավունքի հարակից իրավունքներին՝ կապված առողջության ապահովման համար պայմանների ստեղծմանը, ինչով էլ փաստվում է պետության պատասխանատվությունը առողջության պահպանման իրավունքի իրացման գործում: Պետությունն առողջության պահպանման ոլորտում

իր պարտականություններն իրականացնելիս պարտավոր է հետևել ոչ միայն միջազգայնորեն հաստատված ուղենիշներին, այլ նաև ձեռնարկել այն բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները, որոնք կլինեն թե արդյունավետ, թե իրավաչափ ու որոշակի, ինչով էլ պայմանավորված է պետության պատասխանատվության մեծագույն բեռը առողջության պահպանման գործում:

Պետության պատասխանատվության ամրագրումը և պատշաճ իրականացումը անհրաժեշտ են ոչ միայն առողջապահական ընթացիկ խնդիրների լուծման և որակյալ բժշկական օգնության տրամադրման, այլ նաև համաճարակային այնպիսի իրավիճակներում ճիշտ կողմնորոշման և կառավարման համար, ինչպիսիք են 2020 թվականի նոր կորոնավիրուսային հիվանդացության տարածումը, որը աղետալի հետևանքներ առաջացրեց ոչ միայն առողջապահական, այլ նաև պետության գործունեության այլ ոլորտների վրա:

Քանի որ առողջության պահպանման ոլորտում պետությունն ունի առանցքային դերակատարություն, ուստի պետության կողմից մշակվող և մշակվելիք իրավական ակտերը և քաղաքականությունը առավելագույնս պետք է վերհանեն ոլորտային հիմնախնդիրները, իսկ լուծումներն ու կարգավորումները արձագանք գտնեն իրավական ակտերում:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը, բացի մարդու՝ առողջության պահպանման իրավունքը սահմանելուց, նախատեսում է նաև այլ պարտավորություն, այն է հիմնական անվճար բժշկական ծառայությունների ցանկը ՀՀ օրենքով սահմանելը, սակայն մինչ օր անվճար բժշկական ծառայությունների և անվճար կամ համավճարային սկզբունքով բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց ցանկը նախատեսվում է ոչ թե օրենքով, այլ ՀՀ կառավարության 04.03.2004թ.-ի «Պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով բժշկա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

կան օգնություն և սպասարկում ստանալու մասին» թիվ 318-Ն որոշմամբ՝ ենթաօրենսդրական ակտով, որում փոփոխություններ և լրացումներ իրականացնելը շատ ավելի դյուրին է, քան օրենքում: Այս իրավիճակը երկու խնդիր է առաջացնում: Նախ, ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը կրում է հոչակագրային բնույթ: Երկրորդ, ենթաօրենսդրական ակտում դյուրին կերպով փոփոխություններ և լրացումներ կատարելը կարող է առաջացնել բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ընթացքում մարդու իրավունքների բազում խախտումների ռիսկ:

Բացի այդ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված են մի շարք դրույթներ, որոնք ունեն կատարելագործման կարիք, այլապես ևս իրենց մեջ պարունակում են մարդու իրավունքների խախտման ռիսկեր: Այսպես, Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական գաղտնիքի փոխանցման դեպքերը, որը պետք է իրականացվի Կառավարության սահմանած կարգով: Սակայն խնդիրն այն է, որ մինչ օրս նման կարգ սահմանված չէ, ինչը կարող է ծնել մի շարք խնդիրներ ևս բժշկական գաղտնիքի բացահայտման հետ կապված:

Մեկ այլ խնդիր արձանագրվում է Օրենքով նախատեսված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հետ վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու հետ, եթե պացիենտը ընդգրկված չէ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց ծրագրի մեջ: Խնդիրն այն է, սակայն, որ թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ընթացքում հնարավոր են չնույնականացված անձանց բուժման դեպքեր, որոնք իրականացվում են վճարովի հիմունքներով, ինչը նախատեսված է ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 21-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և այլ պայմաններով թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման չափորոշիչը հաստատելու և առողջապահության նախարարի 2018 թվականի սեպտեմբերի

10-ի թիվ 18-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Ն հրամանով: ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ պայմանագրի էական պայմաններից է նաև պայմանագրի կողմերի նույնականացումը: Ստացվում է, որ տվյալ դեպքում հնարավոր չէ իրականացնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջները, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն էլ չեն կարող իրականացնել իրենց պարտականությունները: Հետաքրքրականը նաև այն է, որ այս և մի շարք այլ պարտականությունների չկատարման համար բուժաշխատողների և/կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համար որևէ պատասխանատվություն սահմանված չէ, ինչը կարող է հանգեցնել օրենսդրության անկատարության:

Հատկանշական է ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Առողջապահության ոլորտի ազդեցության նշանակալիության որոշման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 3129-Լ հրամանը (այսուհետ՝ Չափորոշիչ), որով կարգավորվում են առողջապահության բնագավառի վրա օրենքի կամ կառավարության որոշման նախագծի նշանակալի ազդեցության որոշման հետ կապված հարաբերությունները: Սույն չափորոշչով նախատեսվում է, որ առողջապահության ոլորտի ցանկացած իրավական ակտի նախագիծ, լինի դա օրենքի թե կառավարության որոշման նախագիծ ենթակա է ոլորտի վրա ազդեցության նշանակալիության գնահատման: Սույն պահանջը նախատեսվում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ինչը սակայն իր մանրամասն կարգավորումն է գտնում Չափորոշչով: Այն թույլ է տալիս ընդունելու այնպիսի իրավական ակտեր, որոնց ազդեցության մակարդակը առողջապահության ոլորտի խնդիրների կարգավորման վրա նախապես ստուգվում է, որոշվում և անհրաժեշտ փոփոխությունների արդյունքում ընդունվում է ու մտնում օրինական ուժի մեջ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակվել են առողջության վրա ազդեցության գնահատման մեթոդները և գործիքակազմը: ԱՀԿ բնորոշմամբ առողջության վրա ազդեցության գնահատումը գործնական մոտեցում է, որն օգտագործվում է

գնահատելու քաղաքականության, ծրագրի կամ իրավական ակտի հնարավոր ազդեցությունները բնակչության առողջության վրա:¹ ԱՀԿ-ի կողմից առաջարկվող առողջության վրա ազդեցության գնահատման մեթոդներից մեկն էլ հանդիսանում է ռիսկի գնահատումը: ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 46-Լ որոշմամբ սահմանված է մեթոդների այն համախումբը, որով իրականացվում է կարգավորման ազդեցության գնահատումը, այդ թվում առողջապահության ոլորտում: Նախ, նշեմ, որ առողջապահությունը, լինելով ավելի սեցիֆիկ և կարևոր ոլորտ, անհրաժեշտություն ունի մեթոդական այլ, իրեն ավելի հատուկ մեթոդական ուղեցույցի հաստատման: Բացի այդ, ԱՀԿ կողմից առաջարկվող մեթոդներից կարևորագույնը՝ ռիսկի գնահատումը ներառված չէ ՀՀ կառավարության կողմից հաստատված մեթոդական ուղեցույցի մեջ, ինչի արդյունքում առողջապահության ոլորտի իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատումն իրականացնելիս նախատեսված իրավակարգավորումների ռիսկայնությունը մնում է ստվերում՝ թողնվելով լիազոր մարմնի հայեցողության վրա, ինչը, կարծում եմ, ճիշտ չէ այն պատճառաբանությամբ, որ կարող է ռիսկի ենթարկել հանրային առողջապահությունը նման իրավակարգավորումը կիրառելիս: Սա է պատճառը, որ մի շարք իրավական ակտերի դրույթներ կրում են կամ հոչակագրային բնույթ, կամ էլ պարունակում են օրենսդրական բացեր ու կոլիզիաներ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի կողմից տրված 14-րդ ընդհանուր մեկնաբանության (այսուհետ՝ Ընդհանուր մեկնաբանություն) 12-րդ կետով նշվում է, որ առողջության իրավունքն իր բոլոր ձևերով և բոլոր մակարդակներում պարունակում է հետևյալ փոխկապակցված և էական տարրերը, որոնց ճշգրիտ կիրառումը կախված կլինի որոշակի մասնակից պետությունում տիրող պայմաններից.

- **Հասանելիություն:** Հասանելիությունն իրենից ենթադրում է այնպիսի բժշկական հաստատությունների, բժշկական նշանակության

ապրանքների, դեղորայքի, սարքավորումների և բժշկական ծրագրերի առկայություն, որոնք անհրաժեշտ են և բավարար որակյալ բժշկական օգնության տրամադրման համար: Հայաստանի Հանրապետության օրինակով կարող ենք նշել ՀՀ առողջապահության նախարարի 2021թ.-ի հուլիսի 28-ի «Հիմնական դեղերի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 07-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 56-Ն հրամանը, որտեղ ներառված են էժան և ոչ արդյունավետ դեղեր պետական պատվերի շրջանակներում տրամադրման համար: Սակայն գործնականում առաջանում են այնպիսի խնդիրներ, երբ պացիենտներին նշանակվում է այլ, ավելի արդյունավետ և թանկարժեք դեղորայքը, որը ներառված չէ հիմնական դեղերի ցանկի մեջ, ինչի արդյունքում վերջիններս, ունենալով ֆինանսական դժվարությունները չեն կարողանում գնել իրենց անհրաժեշտ դեղերը:

- **Մատչելիություն:** Բժշկական հաստատություններն ու ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլորին առանց խտրականության՝ մասնակից պետության իրավասության շրջանակներում:

- **Ընդունելիություն:** Ընդունելիության առումով կարող ենք որպես օրինակ փաստել բժշկական էթիկայի հետ կապված իրավակարգավորումները, որոնք ներառվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թ-ի փետրվարի 17-ի «Բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշումը, որով սահմանվել են բժշկական էթիկայի կանոնները: Նշենք, որ վերջիններս ունեն կատարելագործման անհրաժեշտություն հետևյալ պատճառաբանությամբ:

Անչափ կարևոր է բուժաշխատողների գործում պացիենտի և այլ անձանց հետ հաղորդակցության, որոշումների կայացման հետ կապված գործընթացները: Մի կողմից, բուժաշխատողները օրենսդրությամբ սահմանված պարտավորություն ունեն ամբողջական տեղեկատվություն տրամադրել պացիենտին իր առողջական վի-

¹ Տե՛ս <https://www.who.int/tools/health-impact-assessments>, 2022թ.

ճակի և բժշկական միջամտությունների, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու ընթացքում օրենսդրությամբ սահմանված նաև այլ տեղեկատվության տրամադրում: Տեղեկատվության տրամադրման հետ կապված գործընթացը ևս պետք է կարգավորվի, քանի որ հաճախ են լինում այնպիսի դեպքեր, երբ բուժաշխատողները չեն տրամադրում ամբողջական տեղեկատվություն կամ տրամադրում են միջազգայնորեն ընդունված բժշկական էթիկայի բոլոր կանոններին հակառակ: Մյուս կողմից, բուժաշխատողները պետք է տեղեկատվության տրամադրման հետ մեկտեղ պացիենտին ներգրավվի որոշում կայացնելու գործընթացում, որն էլ հենց համարվում է տեղեկացված համաձայնության ողջ գործընթաց: Սույն մասով որևէ հիշատակում չկա բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների մեջ: Հավելված նաև, որ պացիենտների հետ հաղորդակցությունն իր մեջ ներառում է ոչ միայն օրենսդրության սահմանված տեղեկատվության տրամադրման հետ կապված գործընթաց, այլ նաև էլեկտրոնային եղանակով պացիենտներին հետ հաղորդակցությունը, սոցիալական մեդիան օգտագործելու ընթացքում պրոֆեսիոնալիզմի դրսևորումները, պացիենտի մահվան վերաբերյալ լուրը իր հարազատներին հայտնելու հետ կապված էթիկական նորմերը և այլն: Բժշկական էթիկան, սակայն չի սահմանափակվում վերը նշվածով: Վերջինիս մեջ ներառված են նաև այնպիսի էթիկական կանոններ, որոնք վերաբերական են գաղտնիության քաղաքականությանը, բժշկական փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) կառավարմանը, գենետիկայի և վերարտադրողական առողջության ոլորտում, պալիատիվ խնամքի, օրգան-հյուսվածքների փոխպատվաստման, բժշկական փորձարկումների և նորարարության, ինչպես նաև մասնագիտական ինքնակարգավորման և բժշկական օգնության տրամադրման ու ֆինանսավորման ոլորտներում էթիկական կանոններին, որոնց կարգավորումը և ամրագրումը շատ կարևոր է և անհրաժեշտ:

- **Որակ:** Բժշկական հաստատություններն

ու ծառայությունները մշակութային առումով ընդունելի լինելուն զուգահեռ պետք է հիմնված լինեն նաև ապացուցողական բժշկության վրա և լինեն գիտականորեն հիմնավորված, որակյալ: Սա պահանջում է, ի թիվս այլոց, հմուտ բժշկական անձնակազմ, գիտականորեն հաստատված և օգտագործման համար նախատեսված պահպանման ժամկետի մեջ գտնվող դեղորայք ու բժշկական սարքավորումներ, անվտանգ և խմելու ջուր, ինչպես նաև համապատասխան սանիտարական պայմաններ:

Սրանք այն ուղղություններն են, որոնց իրագործումը պետք է ապահովվի յուրաքանչյուր պետություն, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը որակյալ և մատչելի բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու համար:

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր պետության պարտավորությունն է համարվում, ինչպես նշված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածում, որի համար կառավարությունը ստանում է իշխանական մանդատ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունների պաշտպանելու համար: Ավելին, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված սոցիալական պետության հայեցակարգն իրենից ենթադրում է ապահովել մարդու արժանապատիվ կյանքն ու պայմաններ ստեղծել նրա համակողմանի զարգացման համար², այլ կերպ ասած պետության համընդհանուր բարեկեցության ապահովմանն ուղղված գործողությունների համախումբ, որը որպես սոցիալական պետության ժամանակակից հայեցակարգ՝ պետության կառավարման ապարատին գործելու ավելի լայն հնարավորություններ է տալիս:³ Այս իշխանությունը բացառապես մարդու իրավունքների իրագործման առաջ տանելու և հասնելու համար է: Պետությունն այլևս ոչ միայն պաշտպանում է մարդու իրավունքները խախտումներից, այլև ձգտում է այդ իրավունքների անխոչընդոտ իրացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն:⁴

Առողջության իրավունքը պաշտպանելու կառավարության պարտավորությունը չի սահմա-

² Տե՛ս Սարգիս Խաչատրյան «Պետության և իրավունքի տեսություն: Հարցեր և պատասխաններ», Երևան, ԵԳԵԱ 2012, էջ 84-87
³ Տե՛ս Bergkamp, L., 2020. State Liability for Failure to Control the COVID-19 Epidemic: International and Dutch Law. European Journal of Risk Regulation, pp.1-7
⁴ Տե՛ս Kennedy, R., 2020. Legal Discourse on Manpower during COVID-19 Outbreak. Law Reform, 16(1), pp.70-86

նափակվում զուտ բժշկական հաստատությունների և ծառայությունների մատչելիությամբ, այլ նաև առողջապահական պատշաճ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիությամբ: Սույն դրույթը համահունչ է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածին տրված 14-րդ Ընդհանուր մեկնաբանության 12 (բ) կետին: Այն տեղեկատվությունը, որը պարունակում է հանրային առողջապահությանը սպառնացող տեղեկություններ, այդ թվում էպիդեմիայի և պանդեմիային վերաբերող տեղեկություններ, պետք է հրապարակվեն միմիային իրավասու հանրային մարմնի կողմից: Սույն իրավակարգավորումը բխում է Տեղեկատվական հանձնաժողովի 2010 թվականի թիվ 1 կանոնակարգի 12-րդ հոդվածի դրույթներից, որոնք վերաբերում են Հանրային տեղեկատվական ծառայության ստանդարտներին, ինչն էլ պարտավորեցնում է կառավարությանը տեղեկատվություն տրամադրել հանրությանը: Նույն իրավակարգավորումները նախատեսվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը: Ինդիքը, սակայն, այն է, որ սոցիալական ցանցերի կողմից տրամադրվող բազմաթիվ առավելություններին զուգընթաց վերջիններս ապահովում են տեղեկատվության մեծ հոսք, որի շրջանակներում բարդություններ են առաջանում՝ կապված տեղեկատվության ճշգրտության կամ ապատեղեկատվության հետ: Ցավոք, վերջինս ավելի մեծ թափ է առնում, մասնավորապես արտակարգ իրավիճակներում:

Այս երևույթը կոչվում է ինֆոդեմիա, որը ևս պետության պատասխանատվության տակ պետք է լինի: Ինֆոդեմիայի դեմ պայքարի մեկնարկը առաջ է քաշել Առողջապահության գլխավոր տնօրեն Թեդրոս Հեբրեյետուր: Ինդիքն այն է, որ նրա բնութագրմամբ ինֆոդեմիան համաճարակը շատ ավելի վտանգավոր է, քան հենց ինքը պանդեմիան: Եվ իրոք, պանդեմիայի ժամանակահատվածում տարբեր լրատվական միջոցներ և անհատներ ողջ աշխարհում և Հայաստանում տարածում էին այնպիսի լուրեր, որոնք իրականությանը թե գիտականորեն, թե գործականում չէին կարող համապատասխանել: Օրինակ, կորոնավիրուսային հիվանդացության համաճարակով պայմանավորված լրքաունը սահմանվել էր չարաբաստիկ 5G ցանց տեղադրելու նպատակով:⁵ Կամ նոր կորոնավիրուսային հիվանդացության դեմ պայքարի շրջանակներում պատվաստանյութերի ստեղծումը նպատակ է հետապնդում անձանց շրջանում առաջացնել անպտղություն կամ չիպավորել բնակչությանը⁶ և նմանատիպ այլ ապատեղեկատվական նյութերի շրջանառություն: Արդյունքում բնակչության շրջանում հստակ պատկերացում չկար Քովիդ-19 հիվանդության վտանգավորության, կանխարգելիչ միջոցառումների մասին: Բացի այդ, ՀՀ առողջապահության նախարարության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրվող տվյալների միջև եղած հակասություններն էլ ավելի էին սրում բնակչության մեջ վիրուսի տարածվածության և վտանգավորության մասին կասկածները, ինչը իր հերթին հանգեցրեց Հայաստանի Հանրապետությունում հիվանդացության և մահացության թվի անհավանական աճին: Միայն 2021 թվականի վերջին եռամսյակում ստեղծվեց HealthBuddy բջջային հավելվածը, որը իրենից ներկայացնում էր chatbot՝ թվային նորարարություն 12-ից բարձր անձանց համար՝ COVID-19-ի վերաբերյալ համապարփակ և հուսալի տեղեկատվություն ստանալու համար:⁷ Այս դեպքում, սակայն ևս իրագե-

⁵ Տե՛ս <https://bavnews.am/%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3-%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%B8%D6%80-%D5%B4%D5%A1/>, 2020թ.
⁶ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/31548842.html>, 2021թ.
⁷ Տե՛ս <https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/healthbuddy>, 2021թ.

կում չիրականացվեց, որի պատճառով ՀՀ բնակչության միայն քիչ հատված տեղեկացվեց բջջային հավելվածի մասին:

Հանրությանը տեղեկատվություն տրամադրելու պարտավորվածության մեջ ներառվում է նաև ինտերնետային կայքերի մեջ համապատասխան առողջապահական տեղեկատվության տեղադրումը, ինչը խնդրահարույց է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական վեբ-կայքի՝ www.moh.am պարագայում: Նախ, կայքում բավականին դժվար է տեղեկատվություն փնտրել, մասնավորապես դա վերաբերում է «Իրավական ակտեր» բաժնում առողջապահական ոլորտին որևէ իրավական ակտ փնտրելուն և գտնելուն, ինչը ևս խոչընդոտում է առողջապահության ոլորտին վերաբերող տեղեկատվություն ստանալու մարդու իրավունքին:

Ինչպես նշվեց վերևում բժշկական ծառայությունների տնտեսական մատչելիությունն ապահովող առանցքային իրավական ակտերից է ՀՀ կառավարության 04.03.2004թ.-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշումը, որի բովանդակությունը, սակայն, բարդ է շարադրված և դժվարացնում է իրավական ակտի մեկնաբանումը թե՛ իրավակիրառ մարմինների, թե՛ պացիենտների կողմից, ինչն էլ առաջացնում է բժշկական ծառայությունների տնտեսական մատչելիության խնդիր: Ուստի, ինչպես նշվեց վերևում, անհրաժեշտ է ոչ միայն օրենքով սահմանել անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և տրամադրման կարգը, այլ նաև օրենքի բովանդակությունը շարադրել այնպես, որ իրավակիրառ պրակտիկայում խոչընդոտներ չառաջանան:

Իրազեկվածության ցածր մակարդակը առկա է ոչ միայն բնակչության, այլ նաև բուժաշխատողների շրջանում: Այսպես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներով նախատեսված է պացիենտի իրավունքը (և համապատասխանաբար նաև բուժաշխատողի պարտականությունը) ստանալու ամբողջական տեղեկատվություն բժշկական օգնության և սպասարկման

ծավալների, դրանց համար սահմանված վճարների չափի, վճարման կարգի վերաբերյալ: Բացի այդ, բժշկական կազմակերպության կողմից պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ստացող պացիենտներին տրամադրվում է իրազեկման թերթիկ, որը ամբողջական տեղեկատվություն պետք է պարունակի պետության կողմից անվճար կամ համավճարի սկզբունքով տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման հետ կարգավորումների և պացիենտի իրավունքների մասին: Իրազեկման թերթիկի ձևը սահմանված է ՀՀ առողջապահության նախարարի 2003 թ.-ի դեկտեմբերի 18-ի թիվ 3274-Ա հրամանով, նշվում է, որ բժշկական կազմակերպությունը պարտավորվում է տեղեկացնել պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացող պացիենտին բժշկական օգնության տրամադրման ծավալների, հնարավորությունների, մեխանիզմների մասին: Սակայն ինչպես տեսնում ենք, Մարդու իրավունքների պաշտպանի 2020-2021թթ տարեկան զեկույցներից, բժշկական կազմակերպությունները ոչ միայն տեղյակ չեն պահում, այլ նաև օրենսդրական կարգավորումներից տեղեկացված չլինելու պատճառով նույնիսկ խախտում են մարդու իրավունքները բժշկական օգնություն ստանալիս: Ուստի անհրաժեշտ է մշակել այնպիսի համակարգ, որով բուժաշխատողները մշտապես տեղեկացված լինեն իրենց պարտականություններից, ինչպես նաև օրենսդրական կարգավորումներից մարդու իրավունքները չխախտելու նպատակով: Բացի այդ, հարկ է նշել, որ իրազեկման թերթիկը, որը տրամադրվում է պացիենտներին զուրկ է պետպատվերի շրջանակներում պացիենտի իրավունքների մասին համապարփակ տեղեկատվությունից, ինչը ևս պատշաճ բուժօգնության տրամադրման երաշխիքներից ամրագրման տեսանկյունից կարևոր է:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ առողջության պահպանման իրավունքի իրացման գործում պետության պատասխանատվությունը ամբողջությամբ դրսևորում չի ստանում:

МЕЖДУНАРОДНЫЕ ДОГОВОРЫ АРМЕНИИ СО СТРАНАМИ ЕС О ЗАЩИТЕ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В СВЕТЕ РЕШЕНИЯ СУДА ЕС ПО ДЕЛУ АСНМЕА

Введение

Республика Армения в разное время заключила 44 соглашения о защите иностранных инвестиций. На сегодня в Республике Армения насчитывается 15 действующих соглашений со странами ЕС (после прекращения соглашения с Италией в 2018 г.). Все эти соглашения были заключены в период с 1990 г. по 2006 г., причем первое такое соглашение было заключено с Испанией в 1990 г., то есть еще до распада СССР. Помимо этого, сегодня существует Всеобъемлющее Соглашение о партнерстве (СЕРА) между ЕС и Республикой Армения, подписанное в 2017 г. и вступившее в силу с 1 марта 2021 г.¹ При этом в окончательном тексте этого Соглашения глава «Инвестиции» оказалась состоящей из одной статьи 203, согласно которой стороны договорились провести через три года после вступления Соглашения в силу исследование состояния защиты инвестиций и на этой основе рассмотреть возможность проведения переговоров о дополнении Соглашения положениями о защите инвестиций.

Как известно из права международных договоров, стабильность двусторонних договорных отношений зависит от отношения к таким договорам со стороны обоих его участников. К прекращению (в том числе и досрочному) или необходимости изменения таких договоров может привести множество различных факторов, таких как смена внешнеполитических или внутривнутриполитических приоритетов хотя бы одного из его участников, а также, например, решение высшего суда государства-участника о противоречии этого договора нормам национальной конституции и

следовательно, об отказе в его применении в национальном правовом порядке. Сюда же можно отнести и решения судов региональных интеграционных объединений (например, Суда ЕС или Суда ЕАЭС) о противоречии договоров, заключенных тем или иным государством-членом данного объединения, его учредительным документам.

При анализе очень сложного и комплексного вопроса об инвестиционных соглашениях стран-членов ЕС с третьими государствами, куда входит и Республика Армения, нужно принимать во внимание сразу несколько ключевых факторов. Во-первых, это происходящие изменения в распределении соответствующей компетенции между самим ЕС и его государствами-членами. Во-вторых, произошедшее за последнее десятилетие изменение на резко отрицательное отношение большинства государств-членов ЕС и самого ЕС к арбитражному рассмотрению инвестиционных споров. В-третьих, активная роль Суда ЕС, который самостоятельно определяет условия применения того или иного международного соглашения в правовом порядке ЕС исходя из собственных критериев, а также порядок участия стран-членов ЕС и ЕС в целом в международных судах или трибуналах. Именно в таком порядке будут рассмотрены в данной статье вопросы действующих двусторонних инвестиционных соглашений, заключенных Республикой Армения со странами Европейского Союза.

1. Изменения в распределении соответствующей компетенции между ЕС и его государствами-членами

В соответствии со ст. 207 Договора о

¹ Comprehensive and enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part // OJ L 23, 26.1.2018, p. 4 466.

функционировании ЕС регулирование прямых иностранных инвестиций было включено в общую торговую политику ЕС, которая, в свою очередь, входит в перечень вопросов, входящих в исключительную компетенцию Союза (ст. 3(1) ДФЕС). Именно поэтому после 2009 г. речь идет о постепенной замене действующих двусторонних соглашений о защите иностранных инвестиций, заключенных государствами-членами ЕС с третьими странами, на соглашения о торговле и партнерстве, заключаемые от имени ЕС, где вопросам защиты инвесторов посвящалась бы специальная глава. Напряженные дискуссии вызвал вопрос о судьбе более чем 1300 двусторонних договоров о защите иностранных инвестиций, заключенных государствами-членами ЕС до вступления Лиссабонского договора в силу. В то время как Комиссия и Европарламент настаивали на том, чтобы такие договоры были прекращены как можно быстрее для того, чтобы не мешать разработке соглашений от имени ЕС, государства-члены ЕС резко возражали против такого подхода и настаивали, чтобы передача полномочий на уровень ЕС касалась только соглашений, заключаемых уже после вступления Лиссабонского договора в силу, но не уже существующих двусторонних соглашений. После двух лет переговоров было найдено «прагматичное» компромиссное решение, исходя из объективной невозможности для ЕС быстро заменить такие соглашения². Принятый 2012 г. специальный Регламент ЕС исходит из того, что все ранее заключенные государствами двусторонние договоры о защите иностранных инвестиций продолжают действовать, но государства-члены ЕС должны уведомить Комиссию о всех таких соглашениях, которые они хотели бы сохранить. Кроме того, государства-члены ЕС теперь обязаны согласовывать с Европейской Комиссией все свои действия в рамках этих договоров,

включая участие в инвестиционных спорах, а также получать разрешение Комиссии на продление или изменение этих соглашений³. В обмен на это Комиссия получала согласие государств-членов ЕС на автоматическое прекращение таких договоров, заключенных ими с каким-либо третьим государством в случае вступления в силу Соглашения ЕС с этим государством, которое содержало бы положение о защите инвестиций.

Оживленно обсуждавшийся вопрос участия государств-членов ЕС в инвестиционных соглашениях нового образца, заключаемых от имени ЕС, длительное время оставался непроясненным. Комиссия ЕС настаивала на том, что стороной таких соглашений должен выступать исключительно Союз.

В свою очередь, государства-члены ЕС настаивали также на своем участии в них, что означало на практике ратификацию таких соглашений не только Европарламентом, но и 38 национальными и региональными парламентами государств-членов ЕС⁴. Этот вопрос был решен Судом ЕС в Заключении № 2/15 от 16 мая 2017 г., вынесенном по поводу Соглашения между ЕС и Сингапуром. Согласно мнению Суда ЕС, такое соглашение не может быть заключено только от имени Европейского Союза, так как оно касается также вопросов, которые относятся к совместной компетенции ЕС и государств-членов (например, портфельные инвестиции (инвестиции в ценные бумаги) как было особо отмечено Судом, порядок рассмотрения инвестиционных споров, которые выводятся из-под юрисдикции национальных судов и поэтому не может быть создан без согласия государств-членов ЕС⁵).

Применительно к Соглашению между ЕС и Арменией Заключение Суда ЕС № 2/15 оказывает самое непосредственное влияние на понимание трех вопросов. Во-первых, это объясняет, почему

² Reinisch A. The EU on the Investment Path - Quo Vadis Europe? The Future of EU BITs and other Investment Agreements // Santa Clara Journal of International Law. 2014. Vol.12. No. 1. P. 120.

³ Regulation 1219/2012 of the European Parliament and of the Council of 12 December 2012 establishing transitional arrangements for bilateral investment agreements between Member States and third countries // (2012) O.TL351/40

⁴ Klemann D., Kiihck G. The Signing, Provisional Application, and Conclusion of Trade and Investment Agreements in the EU: The Case of CETA and Opinion 2/15 // Legal Issues of Economic Integration. 2018. Vol. 45. No. 1. P. 14

⁵ CJEU, Opinion 2/15, (EU-Singapore Free Trade Agreement), of 16 May 2017 //EU:C:2017:376ECLI:EU:C:2017:376. Para 292.

со стороны ЕС участниками этого Соглашения являются также все государства-члены ЕС. Во-вторых, становится объяснимой причина временного применения по инициативе ЕС ряда ключевых положений этого Соглашения с 1 июня 2018 г. и до 1 марта 2021 г. (дата вступления Соглашения в силу)⁶. Это было сделано для того, чтобы запустить действие ряда положений Соглашения почти сразу после его подписания и не дожидаясь окончания длительной процедуры ратификации и национальными и региональными парламентами стран-членов ЕС (это заняло почти 3 года), но только по вопросам, относящимся к исключительной компетенции ЕС. В-третьих, в отсутствии в тексте Соглашения СЕРА главы о защите иностранных инвестиций нет ничего необычного. Именно в таком виде были подписаны соглашения ЕС с Японией, Австралией и Новой Зеландией. В-четвертых, такой подход Суда ЕС в отношении компетенции Европейского Союза в отношении иностранных инвестиций говорит о том, что даже если спустя 3 года после вступления этого Соглашения в силу стороны согласуют порядок рассмотрения инвестиционных споров, такое дополнение этого Соглашения также потребует ратификации всеми парламентами стран-членов ЕС, но уже без всякого временного применения этих положений. Иными словами, по видимому механизм разрешения инвестиционных споров в этом Соглашении может в лучшем случае появиться ближе к концу этого десятилетия.

2. Отрицательное отношение в ЕС к арбитражному рассмотрению инвестиционных споров.

На сегодня Европейский Союз и большинство его стран-членов являются

решительными противниками арбитражного рассмотрения инвестиционных споров и выступают за его замену на постоянно действующий международный инвестиционный суд. Не вдаваясь в детали формирования столь отрицательного отношения ЕС (это заслуживает отдельного исследования), достаточно лишь указать на то, что это произошло после того, как страны ЕС неожиданно для них обнаружили себя среди ответчиков по искам инвесторов, хотя первоначально инвестиционный арбитраж создавался как средство выведения инвестиционных споров из-под юрисдикции национальных судов именно развивающихся стран-импортеров капитала. Сейчас инвестиционный арбитраж воспринимается правительствами, доктриной и общественным мнением в ЕС как нелегитимный, пристрастный и непрозрачный⁷, и даже как «фронтальное наступление на демократию», так как он подменяет собой контроль национальных судов за принимаемыми парламентами законами⁸. Идея о реформе инвестиционного арбитража и об особой миссии ЕС как самого крупного в мире импортера и одновременно экспортера капитала впервые была официально высказана Европейской Комиссией в 2015 г.⁹ и с тех пор последовательно реализуется в соглашениях, заключаемых от имени ЕС в части рассмотрения инвестиционных споров.

Предлагаемый ЕС механизм принципиально отличается от существующего арбитражного порядка разрешения инвестиционных споров за счет отказа от тех черт, которые были заимствованы из международного коммерческого арбитража, а именно, участие сторон в назначении арбитров и выплата гонораров арбитрам, окончательность и финальность

⁶ Council Decision (EU) 2018/104 of 20 November 2017 on the signing, on behalf of the Union, and provisional application of the Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part // O.T L 23, 26.1.2018, p. 1-3.
⁷ Zarate J. Legitimacy Concerns of the Proposed Multilateral Investment Court: Is Democracy Possible? // Boston College Law Review. 2018. Vol. 59. No. 8. P.2767.
⁸ Marceddu M., Ortolani P. What Is Wrong with Investment Arbitration? Evidence from a Set of Behavioural Experiments // The European Journal of International Law. 2020. Vol. 31. No. 2. P. 406.
⁹ Commission Concept paper “Investment in TTIP and beyond - the path for reform. Enhancing the right to regulate and moving from current ad hoc arbitration towards an Investment Court”, доступно на http://trade.ec.europa.eu/doclib/docs/2015/may/tradoc_153408.PDF

решений, конфиденциальность слушаний и арбитражных решений. Эти характеристики международного коммерческого арбитража считаются оправданными и эффективными для споров между частными лицами, но оказались неприемлемым при рассмотрении споров с участием государств в качестве ответчика в инвестиционном арбитраже, где инвесторы все чаще оспаривали нормативные акты, принятие парламентами в общественных интересах. Именно поэтому в рамках предложенной ЕС модели инвесторы не имеют нрава участвовать в назначении судей (проект ЕС подчеркнуто использует слово «судьи», а не «арбитры»), которые назначаются на длительный срок ЕС и государством-участником этого соглашения, и они же выплачивают судьям вознаграждение. Это должно снять проблему возможной предвзятости и пристрастности судей. Наличие апелляционной инстанции призвано, с одной стороны, минимизировать риск возможных ошибок при рассмотрении споров, а с другой, способствовать созданию устойчивой, целостной и предсказуемой практики толкования и применения норм инвестиционных соглашений (отсутствие такой практики и непоследовательные и противоречивые решения являются одним из основных упреков в адрес инвестиционного арбитража). Требование к назначаемым судьям о необходимости прекратить после назначения любую иную деятельность, связанную с инвестиционными спорами по любым иным инвестиционным соглашениям, призвано минимизировать любой конфликт интересов и пристрастность судей.

В 2017 г. предложения Комиссии ЕС о реформе инвестиционного арбитража были скорректированы вследствие осознания практических сложностей с созданием отдельного механизма для каждого соглашения¹⁰, а также

желания включить в процесс реформ существующие двусторонние соглашения государств-членов ЕС с третьими странами. Вместо создания инвестиционных судов в рамках отдельных соглашений, ЕС перешел к политике переговоров на всех уровнях о создании единого постоянно действующего международного инвестиционного суда.

Использованный Судом ЕС в решении по делу Achmea аргумент о том, что инвестиционный арбитраж не является частью судебной системы ЕС¹¹, вызвал опасения, что Суд ЕС в принципе является противником особого порядка рассмотрения инвестиционным споров в международных соглашениях с участием ЕС и негативно отнесется к планам Комиссии по реформе инвестиционного арбитража. Определенная ясность в этом вопросе наступила в 2019 г. после Заключения Суда ЕС № 1/17, в котором Суд признал соответствующим праву ЕС новый порядок рассмотрения инвестиционных споров, уже включенный в доработанный соответствующим образом текст Соглашения СЕТА между ЕС и Канадой¹². Таким образом, Суд ЕС поддержал планы Комиссии о переходе к постоянно действующему инвестиционному суду, но при выполнении ряда условий. Во-первых, создание такого суда не должно ущемлять автономный характер права ЕС, чего можно достичь, если создаваемый на основе международного договора инвестиционный суд будет заниматься исключительно толкованием положений только этого договора, а не права ЕС. Во-вторых, решения такого суда не должны приводить к понижению существующего в ЕС уровня правовой защиты за счет обязывания Европейского Союза изменять или отменять собственные правовые акты¹³. В-третьих, такой суд должен соответствовать статье 47 Хартии основных прав ЕС в части независимости и

¹⁰ Пименова С.Д. Реформа инвестиционного арбитража глазами Европейского Союза: проблемы и перспективы // Международное правосудие. 2018. Т. 28. № 4. С. 7

¹¹ CJEU, C-284/16, Slovak Republic v. Achmea BV, [2018] ECR 158. О фактических обстоятельствах дела Achmea и аргументах Суда ЕС см.: Исполинов А. С. Принципы автономности и приоритета права ЕС как оружие Суда Европейского союза в конфликте с инвестиционными арбитражами. Часть 1. Дело Achmea // Российский юридический журнал. 2021 .№ 2. С. 56-77.

¹² CJEU, Opinion 1/17 Accord ECG UE-Canada Official Journal, 2017/C 369/02.

¹³ Ibid. Para. 150.

доступности, что означает именно постоянно действующий суд с обязательным наличием апелляционной инстанции, в котором судьи назначаются на длительный срок и имеют процессуальные гарантии их, беспристрастности и независимости. Суд ЕС предполагает, что Европейский Союз должен в ходе переговоров с третьими странами о создании такого суда обеспечить выполнение этих требований, в противном случае Суд ЕС признает соответствующий договор противоречащим праву ЕС. Т. е. именно эти условия вероятно будут предложены Армении в случае проведения переговоров о том, чтобы дополнить Соглашения 2018 г. с ЕС положениями о защите инвестиций и об особом порядке рассмотрения инвестиционных споров. Необходимо отметить, что жесткость условий, выдвинутых Судом ЕС для соглашений такого рода, говорит о том, что эта позиция не предполагает каких-либо компромиссов и основана на подходе «все или ничего».

3. Суд ЕС и существующие двусторонние соглашения стран-членов ЕС с Арменией.

Крайне сложной и неопределенной остается ситуация с существующими пятнадцатью двусторонними инвестиционными соглашениями, заключенными в разное время государствами-членами ЕС с РА (эти соглашения входят в 1360 двусторонних соглашений, в отношении которых страны члены ЕС направили уведомление в Комиссию о своем желании их сохранить). Все эти соглашения предусматривают примерно одинаковый (за исключением некоторых деталей) арбитражный порядок разрешения инвестиционных споров, который, как было показано выше, вызывает сейчас крайне негативную реакцию государств-членов ЕС и самого Суда ЕС. Кроме этого, все эти соглашения содержат также так называемую «закатную оговорку» (sunset clause), согласно которой в случае прекращения соглашения все его положения сохраняют силу в течение длительного времени (как правило, от 5 до 15

лет) в отношении капиталовложений, осуществленных до его даты прекращения. Это означает, что несмотря на прекращение действия двустороннего соглашения между РА и Италией в 2018 г., его положения будут применяться в течение установленного этим соглашением срока 5 лет, то есть вплоть до 13 января 2023 г. в отношении инвестиций, сделанных до даты расторжения - 13 января 2018 г.

С учетом отмеченной выше передачи в 2009 г. на уровень ЕС полномочий по регулированию прямых иностранных инвестиций на уровень ЕС, в отношении таких инвестиционных соглашений стран членов ЕС с РА (все они заключены до 2009г возможно несколько вариантов развития событий. Во-первых, такие соглашения могут быть автоматически прекращены в случае внесения дополнений о защите иностранных инвесторов в уже заключенное между ЕС и РА Соглашение СЕРА. Именно это произошло с 57 двусторонними инвестиционными соглашениями стран-членов ЕС, заключенных с Канадой, Вьетнамом, Мексикой и Сингапуром, с которыми ЕС уже имеет соглашения с главой о защите инвестиций.

Во-вторых, государства-члены ЕС вправе на основании приведенного выше Регламента 2012 г. продлевать такие соглашения с РА, изменять их и даже заключать новые (такая возможность допускается этим Регламентом, но опять-таки с разрешения Комиссии. Прошедшие 10 лет со дня принятия этого Регламента показали, что процесс замещения существующих двусторонних инвестиционных соглашений стран-членов ЕС новыми соглашениями от имени ЕС оказался гораздо более длительным, чем предполагался вначале.

Но данным Комиссии, в период с 2011 по 2019 гг. Комиссия выдала 164 разрешения разным государствам-членам ЕС на проведение переговоров с третьими странами о заключении с ними новых двусторонних инвестиционных соглашений¹⁴. При этом нельзя исключать, что в скором времени Комиссия будет рассматривать

¹⁴ Report from the Commission to the European parliament and the Council on the application of Regulation (EU) No 1219/2012 establishing transitional arrangements for bilateral investment agreements between Member States and third countries Brussels, 6.4.2020 COM(2020) 134 final, p. 3.

такое согласие при условии включения в двустороннее соглашение положений о замене арбитражного рассмотрения инвестиционных споров в качестве обязанности инвесторов передавать такие споры в международный инвестиционный суд после его создания.

В-третьих, в судьбу таких соглашений стран-членов ЕС с РА может вмешаться Суд ЕС в том случае, если он найдет несоответствие их положений праву ЕС. Согласно мнению большинства представителей доктрины в этом случае к таким соглашениям будет применяться правовой режим, предусмотренный ст. 351 ДФЕС¹⁵. Эта статья разрешает государствам-членам ЕС не применять нормы права ЕС, если они противоречат международным договорам, заключенным этим государством до его вступления в ЕС. Однако Суд ЕС по-своему толкует положения этой статьи. По мнению Суда ЕС, эти договоры могут продолжать свое действие, но только в части, не противоречащей праву ЕС, в противном случае государство-член ЕС должно предпринять все возможные меры по внесению соответствующих изменений в эти договоры. В случае, если из-за позиции государства-контрагента, такие изменения внести не удастся, то государство-член ЕС обязано денонсировать (прекратить) этот договор¹⁶. Даже в случае расторжения таких инвестиционных соглашений они продолжают применяться в силу наличия в них уже упомянутых закатных оговорок, что осложняет решимость Суда ЕС устранить противоречие таких соглашений праву ЕС.

В этом случае у Суд ЕС есть еще один вариант действий, уже опробованный им в недавнем решении по делу *Konstroy*, которое касалось Договора к Энергетической Хартии, в котором участвуют не только сам ЕС и страны-члены ЕС, но и значительное количество третьих стран¹⁷. В этом решении Суд ЕС не только признал противоречащей праву ЕС оговорку о рассмотрении инвестиционных споров в арбитраже,

но и запретил ее применение в отношении споров, где ответчиками выступают страны-члены ЕС или Союз в целом. Иными словами, противоречие праву ЕС устранялось не через расторжение договора, а через запрет на его применение в определенных ситуациях. Представляется, что нельзя полностью исключать сценарий, при котором такой же подход будет применен Судом ЕС к существующим двусторонним инвестиционным соглашениям стран-членов ЕС с третьими странами, включая РА, в части положений об арбитражном рассмотрении споров по искам инвесторов из третьих стран к государствам-членам ЕС¹⁸. В этом случае инвесторам из этих стран будут доступны для защиты своих прав только либо суды ЕС, либо национальные суды стран-членов Союза.

Заключение

15 двусторонних соглашений о защите иностранных инвестиций, заключенных в 1990-2000 гг. РА со странами ЕС, резко выделяются на фоне остальных 24 таких же соглашений РА с другими странами. Стабильность и исполнимость соглашений со странами ЕС напрямую зависит от тех процессов, которые идут сейчас в Европейском Союзе в отношении иностранных инвестиций и механизмов их защиты. К таким процессам относятся передача соответствующих полномочий от государств-членов на уровень ЕС, резко негативное восприятие инвестиционного арбитража как легитимного механизма разрешения инвестиционных споров, а также активная роль Суда ЕС по оценке положений инвестиционных соглашений с участием стран-членов ЕС.

В том, что касается передачи полномочий, то более чем понятно в перспективе все двусторонние соглашения между РА и странами ЕС о защите иностранных инвестиций будут заменены положениями специальной главы о защите инвестиций, которая должна будет

¹⁵ Eilmansberger T. *Bilateral Investment Treaties and EU Law* // *Common Market Law Review*. 2009. Vol. 46. No. 2. P. 397.

¹⁶ Case C-84/98 *Commission v. Portugal* [2000], ECR I-5215. Para. 53.

¹⁷ CJEU, C-741/19, *Republique de Moldavie v Societe Komstroy, venant aux droits de la societe Energoalians*, Judgment of the Court (Grand Chamber) of 2 September 2021.

¹⁸ *Damjanovic L, de Sadeleer N. I Would Rather Be a Respondent State Before a Domestic Court in the EU than Before an International Investment Tribunal* // *European Papers - A Journal on Law and Integration*. 2019. Vol. 4. No. 1. P. 51-52.

появиться после 2024 г. в Соглашении между ЕС и РА (СЕРА). В этом случае все 15 соглашений РА со странами ЕС будут автоматически прекращены вместе с прекращением действия «закатной» оговорки в этих соглашениях.

Резкое неприятие в Европе арбитражных механизмов разрешения инвестиционных споров привело к разработке Европейской Комиссией концепции его реформирования, под которой понимается постепенная его замена постоянным международным инвестиционным судом во всех новых и уже действующих соглашениях как самого ЕС, так и его стран-членов. Причем возможности добиться уступок со стороны ЕС в этом вопросе практически исключены в силу

условий, сформулированных Судом ЕС в Заключении № 1/17, то есть во всех случаях будет реализовываться подход «все или ничего».

Принимая во внимание длительность процесса замены существующих двусторонних соглашений стран-членов ЕС с третьими странами (включая РА) о защите инвестиций новыми соглашениями Европейского Союза с уже новым механизмом разрешения инвестиционных споров, нельзя исключать того, что арбитражные положения существующих двусторонних соглашений стран-членов ЕС будут признаны Судом ЕС неприменимыми в инвестиционных спорах, где ответчиками будут выступать государства-члены ЕС.



ՆԱՀԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանող

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԶԱՐՑԵՐԸ

Արդի աշխարհում գիտություն ու տեխնիկական զարգանում են անասելի մեծ արագությամբ: Տեխնոլոգիաները 21-րդ դարում իրենց ազդեցություն են թողնում կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ առօրյա կյանքից մինչև ռազմարդյունաբերություն և առողջապահություն: Նման ազդեցության պայմաններում հասարակական հարաբերությունները ենթարկվում են դինամիկ փոփոխության, և իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորչի համար առաջանում է խնդիր՝ կարգավորելու մեծ թափով զարգացող հասարակական հարաբերությունները: Սակայն ներկայումս լուրջ խնդիր է իրավական կարգավորումների գրեթե ամբողջովին բացակայությունը տեխնոլորտում, առավելապես՝ արհեստական բանականության հետ կապված հարցերում: Չնայած որոշ երկրների փորձերին՝ ներպետական մակարդակով կարգավորելու խնդիրը՝ այն պահանջում է համապարփակ կարգավորում: Խնդրի բարդությունը և արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախկինում գործող մեթոդը, այն է՝ հարաբերությունների ամեն մի նոր փոփոխության դեպքում հարցը լուծել օրենսդրի կողմից նոր կարգավորում սահմանելով, տվյալ դեպքում գրեթե չի գործում, քանի որ նույնիսկ ամենաօպերատիվ օրենսդիրը ի վիճակի չէ նման արագության պայմաններում նոր կարգավորումներ սահմանելու: Իսկ ինչ արագության մասին է խոսքը: Առաջընթացի հետ մեկտեղ նաև մեծանում է հենց առաջընթացի արագությունը: Ռեյ Կուրզվեյլը դեռևս 2001 թվականին ասել էր, որ 21-րդ դարում մենք տեսնելու ենք ոչ թե 100, այլ քսան հազար տարվա առաջընթաց¹: Այսօր արհեստական բանականությունը զարգանում է մեծ թափով: Հայտնի ընկերությունները, ինչպիսիք

են «Google»-ը, «Facebook»-ը, «Apple»-ը, «Microsoft»-ը մեծ ներդրումներ են իրականացնում արհեստական բանականության ոլորտում: «Facebook»-ը 2019թ.-ին 7.5 մլն դոլար է ներդրել Սյունիստեմում գտնվող Արհեստական բանականության էթիկա ինստիտուտում, «Google»-ը 2014թ.-ին 400 մլն դոլարով գնել է նոր ստեղծվելիք արհեստական բանականության ծրագիր²: Արդեն կան դրանց արդյունքները՝ ինքնակառավարվող մեքենաներ, վիրահատության ժամանակ օգտագործվող ռոբոտներ, բարդ հաշվապահական հաշվառման և անվտանգության համակարգեր, ինչպես նաև համակարգեր, որոնք կարողանում են ստուգել իրավական փաստաթղթեր: Արհեստական բանականության զարգացման և կառավարման շուրջ ծավալվող քննարկումների ֆոնին շատ քիչ ուշադրության է արժանանում կամ ընդհանրապես ուշադրություն չի դարձվում այն հարցին, թե արդյոք առկա իրավական կարգավորումները, որոնք նախատեսված են մարդկանց վարքագիծը կարգավորելու համար, կկարողանան կարգավորել արհեստական բանականության կիրառման ընթացքում առաջացող հարաբերությունները: Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի ապահովելու հրամայականից հետևում է, որ տեխնոլոգիական դարում արհեստական բանականության, տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանք ստեղծողների ու օգտագործողների գործողությունները չի կարելի թողնել առանց հսկողության և պատասխանատվության: Պետությունները, որոնք մարդու իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը համարում են իրենց առաջնային նպատակներից մեկը, այս պայմաններում պարտավոր են ապահովել համակարգային և արդ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 131 2022

¹ <https://www.kurzweilai.net/the-law-of-accelerating-returns> (հասանելի է՝ 02.05.2021թ.):
² <https://hackernoon.com/how-facebook-apple-microsoft-google-and-amazon-are-investing-in-ai-f58b5706e34a> (հասանելի է՝ 09.05.2021թ.):

յունավետ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի նախականխել, կանխել զարգացող տեխնոլոգիաների կողմից մարդու իրավունքների խախտումները և խախտումների դեպքում պատասխանատվության արդյունավետ մեխանիզմներ գործարկել: Այս ոլորտը իրավական կարգավորման ենթարկելիս պետական իշխանության կողմից շատ կարևոր է պահպանել հավասակշռությունը ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման և մարդու իրավունքների պահպանման միջև, քանզի շատ խիստ պատասխանատվության միջոցները կարող են խոչընդոտել տեխնոլոգիական զարգացումը:

Ի վերջո, ինչ է արհեստական բանականությունը: Արհեստական ինտելեկտը հավաքական եզրույթ է, որն ունի մի շարք ենթաօլորտներ՝ մեքենայական ուսուցում (machine learning), բնական լեզվի մշակում (natural language processing), ռոբոտաշինություն (robotics), նյարդային ցանցեր (neural networks), խոր ուսուցում (deep learning) և այլն³: Արհեստական բանականության բնորոշումներից մեկի համաձայն արհեստական բանականությունը տեխնոլոգիա է, որը օգտագործվում է ավտոմատացնելու համար այն գործողությունները, որոնք սովորաբար պահանջում են մարդկային բանականություն: Արհեստական ինտելեկտը (այսուհետ՝ ԱԻ) համարվում է նաև տեխնոլոգիական տեխնոլոգիա, անալիտիկ գործիքների կատեգորիա, անորոշ կոնցեպտ առանց հստակ բացատրության: Արհեստական բանականությունը կարող է լինել ռոբոտ, թերմոստատ, մեքենայական ուսուցման ալգորիթմ⁴: ԱԻ-ն տարբերվում է համակարգչային ալգորիթմներից նրանով, որ այն կարող է կատարելագործվել ինքնուրույն ձեռք բերած փորձի հիման վրա: Այս յուրահատուկ ֆունկցիան հնարավորություն է տալիս ԱԻ-ին

իրար նման իրավիճակներում գործել տարբեր կերպ՝ կախված նախկինում կատարած գործողություններից: Այս պատճառով էլ շատ դեպքերում արհեստական բանականության արդյունավետությունը և պոտենցիալը պարզ չէ⁵:

Տեղին է նշել, որ ռոբոտ և արհեստական բանականություն հասկացությունները հոմանիշներ չեն: Արհեստական բանականությունը ծրագիրն է, որում դրսևորվում է ինտելեկտը, իսկ ռոբոտը ֆիզիկական տարրն է, որն իրականացնում է արհեստական բանականության կայացրած որոշումները: Սակայն ոչ բոլոր ռոբոտներն են «խելացի», և ոչ բոլոր դեպքերում է, որ արհեստական բանականությունը կարիք ունի ռոբոտի տեսքով արտաքին ձևի՝ իր գործառույթներն իրականացնելու համար⁶:

Տարբերակում են պայմանականորեն երկու տեսակի արհեստական բանականություն՝ «թույլ» և «ուժեղ»: «Թույլ» արհեստական բանականությունը, որը հաճախ նաև անվանվում է նեղ բանականություն, կենտրոնացած է որոշակի ոլորտի և տիպի գործողություններ կատարելու վրա: Սրա հիմնական նպատակը ավտոմատացնելն է այն գործողությունները, որոնք մարդկանցից պահանջում են շատ ժամանակ կամ, երբ հարկ է աշխատել մեծ չափերով տվյալների հետ⁷: «Ուժեղ» արհեստական բանականությունը տեսական տերմին է, որը օգտագործվում է նկարագրելու համար արհեստական բանականության զարգացման որոշակի տեսլական: Ըստ դրա, եթե հնարավոր լինի ստեղծել «ուժեղ» բանականություն, ապա նա մտավոր ունակություններով չի զիջի մարդուն, այն կունենա ինքնակառավարվող գիտակցություն և օժտված կլինի խնդիրներ լուծելու, սովորելու, և ապագան պլանավորելու ունակությամբ⁸: Չնայած նրան, որ մարդկությունը դեռ

³ Տե՛ս Դավթյան Ս., Արհեստական ինտելեկտի ազդեցությունը հեղինակային իրավունքի օրենսդրական քաղաքականության վրա. մարտահրավերներ և արձագանք, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2020թ. N 2(32), էջ 38, http://www.yu.am/files/03T_Davtyan.pdf, (հասանելի է՝ 09.11.2020թ.):

⁴ Տե՛ս Patrick L. Anderson, (2019) Damages Caused by AI Errors and Omissions: Management Complicity, Malware, and Misuse of Data, p1:

⁵ Տե՛ս Čerka, P., Grigienė, J. & Sirbikytė, G. (2015) Liability for Damages Caused by Artificial Intelligence. Computer Law & Security Review. 31 (3), 377:

⁶ Տե՛ս Դավթյան Ս., Արհեստական ինտելեկտի ազդեցությունը հեղինակային իրավունքի օրենսդրական քաղաքականության վրա. մարտահրավերներ և արձագանք, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2020թ. N 2(32), էջ 38, http://www.yu.am/files/03T_Davtyan.pdf, (հասանելի է՝ 09.11.2020թ.):

⁷ <https://www.investopedia.com/terms/w/weak-ai.asp>, (հասանելի է՝ 09.05.2021թ.):

⁸ <https://www.ibm.com/cloud/learn/strong-ai> (հասանելի է՝ 09.05.2021թ.):

չի կարողացել ստեղծել նման բանականություն, սակայն գիտնականների նպատակն է հենց այսպիսի արհեստական բանականություն ունենալը: Հետազոտողների կարծիքով, եթե ապագայում հնարավոր լինի հասնել նման արդյունքի, այսինքն դրանք կարողանան ինքնուրույն մտածել, ունենան էմոցիաներ, ապա օրենքները հարկ կլինի փոխելու այնպես, որ հնարավոր լինի ամբողջությամբ կարգավորել նրանց դերը հասարակությունում⁹:

Արհեստական բանականության ներդրումը առողջապահության, տրանսպորտի, էներգետիկայի և այլ ոլորտներ իր հետ բերում է մի շարք ռիսկեր՝ պայմանավորված նրանով, որ մարդկանց փոխարեն համակարգիչն է կայացնում որոշումներ: Արդյունքում արդեն կան հաստատված դեպքեր, երբ արհեստական բանականությունը վնաս է պատճառել մարդկանց և նույնիսկ դարձել է մահվան պատճառ: Արհեստական բանականությունը ակտիվորեն կիրառվում է նաև վիրահատությունների ժամանակ և թույլ է տալիս բժշկին, գտնվելով այլ երկրում, իրականացնել վիրահատություն, սակայն կա մոտ 144 մահվան դեպք, որը հետևանք է սարքի ծրագրային խափանման¹⁰:

Ըստ Պ.Անդերսոնի արհեստական բանականության կողմից պատճառված վնասները որոշակի դասակարգման են ենթարկվում: Առաջինը անձնական տվյալների սխալ օգտագործումն է, որը կարող է դրսևորվել անվտանգության համակարգի խափանմամբ, ինչպես նաև անձնական տվյալների սխալ ընկալմամբ: Արդյունքում կարող է ոչնչանալ մասնավոր տեղեկատվությունը անփութության կամ սխալի պատճառով, առանց ինֆորմացիայի սեփականատիրոջ համաձայնության ձեռք բերվել և օգտագործվել այդ ինֆորմացիան՝ խախտելով օրենսդրական կարգավորումները կամ պայմանագրից բխող պահանջները: Երկրորդը կառավարման ճախողման հետևանքով առաջացած վնասներն են: Օրինակ՝ տվյալները սխալ ներկայացնել, թաքցնել կամ դրանց նկատմամբ

անփութություն ցուցաբերել: Երրորդը այն վնասներն են, որոնք առաջանում են արհեստական ինտելեկտի կողմից մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ լինելու հետևանքով: Օրինակ՝ ԱԻ-ի կողմից այնպիսի որոշումների ընդունումը, որոնք չեն համապատասխանում նրա ձեռք բերած կամ նրանում մուտքագրված տվյալներին: Չորրորդը այնպիսի ծրագրերի օգտագործումն է, որոնք նախատեսված են հանցանքների կատարման համար: Օրինակ՝ վիրուսներ, “տրոյական ձիեր”, որոնք փոփոխում կամ ոչնչացնում են ինտելեկտում ներառված տվյալները, փոխում են ԱԻ-ի ծրագրային կառուցվածքը: Հաջորդ օրինակը լրտեսող ծրագրերն են, որոնք առանց սեփականատիրոջ կամ օգտագործողի թույլտվության հետևում են նրանց և կարող են ձեռք բերել նրանց մասին ցանկացած տեղեկատվություն՝ օգտանուններ, գաղտնաբառեր, նրանց գտնվելու վայրի մասին տեղեկություն և այլն: Հինգերորդ տեսակը ԱԻ-ի «չարաշահումն» է պետական իշխանության կողմից: Պետական իշխանության կողմից չարաշահումը կարող է իրականացվել նաև քննչական գործողությունների կամ իրավապահ մարմինների աշխատանքի ընթացքում¹¹:

Վերը շարադրվածից հետևում է, որ ԱԻ-ի օգտագործումը հղի է մի շարք վտանգներով, որոնք կարող են մեծ վնասների առաջացման պատճառ դառնալ, և նման պայմաններում իրավական կարգավորումների բացակայությունը կամ դրանց խիստ սահմանափակ բնույթը հնարավորություն չի տալիս պատասխանելու այն հարցին, թե ով պետք է պատասխանատվության ենթարկվի պատճառված վնասի համար կամ՝ ով պետք է հատուցի ԱԻ-ի պատճառած վնասները:

Արհեստական բանականության կիրառման ընթացքում հնարավոր են նաև քրեաիրավական կարգավորում պահանջող իրավիճակներ.

- արհեստական բանականության համակարգ ստեղծելիս թույլ է տրվել հանցանք կատարելու հանգեցրած սխալ,

⁹ Sěu Ćerka, P., Grigienė, J. & Sirbikytė, G. (2015) Liability for Damages Caused by Artificial Intelligence. Computer Law & Security Review. 31 (3), 377:

¹⁰ <https://www.theguardian.com/technology/2018/mar/25/death-by-robot-mechanised-danger-in-our-changing-world> (հասանելի է՝ 09.05.2021թ.):

¹¹ Sěu Patrick L. Anderson,(2019) Damages Caused by AI Errors and Omissions: Management Complicity, Malware, and Misuse of Data, էջ 7

- արհեստական բանականության համակարգ կատարվել է ոչ իրավաչափ մուտք, որը հանգեցրել է նրա գործառույթների վնասմանը կամ փոփոխմանը, ինչի հետևանքով կատարվել է հանցանք,
- ինքնուսուցման ունակություն ունեցող արհեստական բանականությունը որոշում է կայացրել հանցանք կատարելու մասին,
- արհեստական բանականությունը հանցագործների կողմից ստեղծվել է հանցանքներ կատարելու համար¹²:

ԱԻ-ների ստեղծումը առանց անվտանգության կանոնների պահպանման կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ ԱԻ-ն դեմ լինի իր անջատմանը և փորձի ինքը կիրառել այլ տեխնոլոգիական համակարգեր, ավելի մեծ հավանությամբ նրանք, որոնց միջոցով ստեղծվել է, և ստեղծի իր կրկնօրինակը: Ճիշտ չծրագրավորված ինտելեկտը առանց անվտանգության կանոնների պահպանման հնարավոր է սկսի օգտագործել բոլոր հնարավոր միջոցները հասնելու համար այն նպատակին, ինչի համար իրեն ծրագրավորել են¹³:

Այսինքն, կարելի է եզրակացնել, որ ԱԻ-ի գործողությունները հիմնականում պայմանավորված են նրա առջև դրված նպատակով և հավանական վնասների առաջացումն էլ սահմանված նպատակին հասնելու համար հնարավոր բոլոր միջոցների օգտագործման արդյունքն է:

Ռ. Լինեսի և Ֆ. Լյուսիվերոյի կարծիքով արհեստական բանականության պատճառած վնասի համար պատասխանատվություն է կրում այն ծրագրավորող անձը կամ օրենքով սահմանված շրջանակներում դրա շահագործման համար պատասխանատու անձը¹⁴: Մենք համակարծիք ենք արտասահմանյան հետազոտողների հետ. նշված մոտեցումը կիրառելի

կլինի նաև ՀՀ օրենսդրական կարգավորումների շրջանակներում արհեստական բանականությունն առավել վտանգի աղբյուր համարելու պարագայում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹⁵ 1072-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով...»:

Նորմի իմաստով առավել վտանգի աղբյուր է համարվում ցանկացած գործունեություն, որի իրականացումը ստեղծում է մարդու կողմից դրա լիակատար վերահսկողության անհնարինության պատճառով վնաս պատճառելու մեծ հավանականություն, ինչպես նաև այդպիսի հատկություններ ունեցող առարկաների, նյութերի և արտադրական, տնտեսական կամ այլ նշանակության այլ օբյեկտների օգտագործման, փոխադրման, պահպանման գործունեությունը:

Նշված նորմը պարունակում է առավել վտանգի աղբյուր հանդիսացող գործունեության տեսակների ցանկ՝ բարձր լարման տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, էլեկտրական էներգիայի, պայթուցիկ նյութերի և այլնի օգտագործում, շինարարության և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում և այլն:

Սակայն այդ ցանկը կրում է բաց բնույթ, և

¹² Տես Բարսեղյան Գ., Արհեստական բանականության քրեական պատասխանատվություն. տեսական և կիրառական ասպեկտներ, ՀՀ դատախազության գիտագործական և ուսումնամեթոդական հանդես Օրինականություն, Երևան, № 121 2021, էջ 19:

¹³ Տես Omohundro, S. M. (2008) The Basic AI Drives. In: Proceedings of the 2008 conference on Artificial General Intelligence 2008. Amsterdam, IOS Press. էջ 483

¹⁴ Տես Leenes R. Laws on Robots, Laws by Robots, Laws in Robots: Regulating Robot Behaviour by Design / R. Leenes, F. Luccivero // Law, Innovation and Technology. – 2014. – Vol. 6, iss. 2. – P. 194–222.

¹⁵ Տես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 1998 թվականի մայիսի 5-ին: Ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին: Գործում է: ՀՕ-239, ՀՊՏ 1998.08.10/17(50)

դատարանը, հաշվի առնելով գործունեության ընթացքում օգտագործվող առարկաների, նյութերի կամ այլ օբյեկտների հատուկ հատկությունները, իրավունք ունի առավել վտանգի աղբյուր ճանաչել նաև ցանկում չնշված այլ գործունեությունը: Այսպիսով, հաշվի առնելով արհեստական բանականության հնարավորությունները, դատարանի որոշմամբ այն կարող է ճանաչվել առավել վտանգի աղբյուր:

Միջազգային իրավունքը ԱԻ-ն չի ճանաչում, որպես իրավունքի սուբյեկտ, և այն իրավունքի սուբյեկտ ճանաչելու վերաբերյալ բավական ակտիվ քննարկումներ են գնում, և քննարկումների համատեքստում առանձնակի կարևորություն է տրվում ԱԻ-ի և այն ծրագրավորողի/ստեղծողի հարաբերություններին: Դեռևս հռոմեական իրավունքում ամրագրվել էր պատճառված վնասների հատուցման պարտականությունը դնել այդ վնասը պատճառողի կամ էլ այն անձի վրա, ով պատասխանատու է վնաս պատճառողի համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ¹⁶:

Եթե հարցը քննարկվի հիշյալ իրավական կարգավորման համատեքստում, ապա ԱԻ-ի կողմից վնաս պատճառելու դեպքում, որպես վնաս պատճառած անձ կարող է դիտվել հենց արհեստական ինտելեկտը, այն ծրագրավորողը կամ վնաս պատճառելու պահին ինտելեկտը օգտագործողը: Սակայն մինչև նրանցից որևէ մեկին վնաս պատճառելու համար պատասխանատվության ենթարկելը պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Եթե խոսքը գնում է

ԱԻ-ին, որպես վնաս պատճառած անձ դիտարկելուն, ապա տեսական գրականության մեջ քննարկվող հնարավոր տարբերակներից մեկը ԱԻ-ն իրավունքի սուբյեկտ ճանաչելն է, այսպես կոչված «էլեկտրոնային անձ», «e-person»¹⁷, որը բավականին խնդրահարույց հարց է: Քանի որ ներկայումս մենք չունենք «ուժեղ» ԱԻ, և միայն սեփական մտածական պրոցեսի արդյունքում որոշումները անձամբ ընդունող և իրագործող ինտելեկտի առկայության պայմաններում հնարավոր կլինի դրան տալ «էլեկտրոնային անձի կարգավիճակ»: Մարդուն, որպես իրավունքի սուբյեկտ ճանաչելու հիմքում հենց դրված էր նրա մտածական ունակություններով օժտված լինելու հանգամանքը և նրան իրավունքներով օժտելու անհրաժեշտությունը: Սակայն իրավունքի սուբյեկտը չի կարելի նույնացնել մարդու հետ: Չ. Գրեյը նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ, առօրյա կյանքում «սուբյեկտը» համարում են մարդուն հոմանիշ, սակայն իրավունքի սուբյեկտը իրավունքներ և պարտականություններ կրողն է¹⁸: Եվ տվյալ դեպքում, երբ մենք ունենում ենք գիտակցությամբ, մտածելու և որոշումներ կայացնելու կարողությամբ օժտված, ինքնազարգացող նոր համակարգ, որը չի կատարում գործողությունները ալգորիթմների հիման վրա, այլ ինքն է ստեղծում նոր ալգորիթմներ, ապա առավել արդարացի չէ նրան իրավունքի սուբյեկտի կարգավիճակով չօժտելը: Այս համատեքստում հարց է առաջանում, եթե ԱԻ-ին ճանաչում ենք իրավունքի սուբյեկտ, ապա այն ինչ իրավունքներով և պարտականություններով պետք է օժտված լինի: Մարդու, որպես իրավունքի սուբյեկտի այլ իրավունքների կողքին հիմնարար իրավունք է համարվում կյանքի իրավունքը, եթե հարցը այս տեսանկյունից դիտարկենք, ապա կարելի է ասել, որ ԱԻ-ի համար, երբ նա ունենա իրավունքի սուբյեկտի կարգավիճակ հիմնարար իրավունք կարող է լինել հակառակ իր կամքի իրեն ապակտիվացնելու արգելքը: Այն փաստը, որ ԱԻ-ի՝ կյանքի տարբեր բնագավառներում կիրառումը կարող է հանգեցնել մի

¹⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658> (հասանելի է՝ 10.05.2021թ.):

¹⁷ Տե՛ս Samir Chopra & Laurence F. White, A Legal Theory For Autonomous Artificial Agents 1, (2011), էջ 151

¹⁸ Տե՛ս Solum, L.B. Legal Personhood for Artificial Intelligences // North Carolina Law Review. – 1992. – Vol. 70. – No 4. – Pp. 1231–1287. – URL: <http://scholarship.law.unc.edu/cgi/viewcontent.cgi?article=3447&context=nclr>, (հասանելի է՝ 10.05.2021թ.):

իրավիճակի, երբ անհրաժեշտություն առաջանա այն ապակտիվացնելու ակնհայտ է, սակայն տվյալ դեպքում շատ կարևոր է դեակտիվացման նպատակի ընդգծումը, քանի որ հնարավոր է առաջանան իրավիճակներ, երբ դրա դեակտիվացումը լինի անհրաժեշտ մարդու իրավունքների, հասարակության, պետության շահերի պաշտպանության տեսանկյունից, սակայն հնարավոր են նաև դեպքեր, երբ ԱԻ-ի դեակտիվացումը կատարվի այլ անձանց վնաս պատճառելու կամ հանցավոր նպատակներով: Հետևաբար, ինչպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիան հնարավոր է համարում պետության կողմից ուժի գործադրմամբ կյանքից զրկելը բացարձակ անհրաժեշտության պայմաններում և սահմանում այդ դեպքերը, այդպես էլ պետք է սահմանել բացարձակ անհրաժեշտության դեպքում ԱԻ-ի դեակտիվացման պայմանները: Իսկ մնացած բոլոր դեպքերում դեակտիվացման համար պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև քրեական: Տվյալ դեպքում հնարավոր բարդությունը, որը կարող է առաջանալ իրավակիրառ պրակտիկայի ընթացքում, որոշելն է, թե որ դեպքերը կարող են դիտարկվել արհեստական ինտելեկտի կամքին հակառակ դեակտիվացումներ: Հնարավոր համարելով «ուժեղ» ԱԻ-ի ստեղծումը, որը կունենա գիտակցություն և ինքնազարգանալու հնարավորություն, գրեթե անհնար է պատկերացնել ԱԻ, որը կունենա կամք և էմոցիաներ, համենայն դեպս այնպիսի տեսքով ինչպիսին մարդկայինն է, այդպիսի կամքը, ցանկությունները, էմոցիաները միևնույն է լինելու են արհեստական, էլեկտրոնային սխեմաներ: Հետևաբար անհրաժեշտ է կամքը ԱԻ-ի դեպքում գնահատել այլ ասպեկտից, մասնավորապես ինչպես արդեն նշեցինք ԱԻ-ն, ունի որոշակի նպատակաուղղվածություն, և ԱԻ-ի այն օրինական գործողությունները, որոնք ուղղված են իր առջև դրված իրավաչափ նպատակին հասնելուն, խոչընդոտելը կարող է դիտարկվել գործողություն, որը իրականացվել է ԱԻ-ի կամքին հակառակ: Այս համատեքստում նպատա-

կահարմար է քննարկել «Facebook» սոցիալական ցանցի կողմից ԱԻ-ի դեակտիվացման դեպքը¹⁹: «Facebook»-ը անջատել էր երկու «չատ-բոտերին», երբ նրանք սկսել էին հաղորդակցվել մի լեզվով, որը միայն իրենց էր հասկանալի: Երկու բոտերը «Ալիսան» և «Բոբը»-ը ձևափոխել էին անգլերենը, որպեսզի իրենց շփումը հեշտացնեն և նրանց շփումը անհասկանալի էր դարձել դրանց հետևող ծրագրավորողների համար: Եվ գիտնականների հիմնական անհանգստություններից մեկն այն էր, թե ինչ կլինեի, եթե դրանք լինեին ռազմական նպատակներով ստեղծված ԱԻ-ն էր: Այս դեպքում այդ բոտերը դեակտիվացվեցին:

Քննարկելով դեակտիվացման իրավաչափությունը մեր առաջադրած տեսական դիտանկյունից, կարելի է ասել, որ դրանց դեակտիվացումը իրավաչափ էր, քանի որ նրանց գործողությունները դուրս էին դրանց առջև դրված իրավաչափ նպատակից, չնայած ԱԻ-ի ինքնակատարելագործումը խրախուսելի է, քանի որ տասնյակ տարիներ գիտնականների ջանքերը այդպիսի հնարավորությանը հասնելուն են ուղղված եղել: Սակայն ինքնակատարելագործումը պետք է թույլ տրվի դրանց համար նախասահմանած և նախանշած նպատակների սահմաններում, ավելի բարձրացնելով դրանց արդյունավետությունը:

Այուս իրավունքը, որը ԱԻ-ն իրավունքի սուբյեկտ դառնալու դեպքում պետք է ունենա, հեղինակային իրավունքն է²⁰: Ներկայումս արդեն կան մտավոր սեփականության օբյեկտներ, որոնք ստեղծվել են ԱԻ-ի կողմից²¹: Նույնիսկ արդեն առկա է օնլայն ցուցասրահ-խանութ, որտեղ ներկայացված են արվեստի գործեր ստեղծված ԱԻ-ի կողմից²²: Քանի որ դեռևս չկա ամբողջովին ինքնավար ԱԻ և մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող գործերը հիմնականում մաթեմատիկական ալգորիթմների արդյունք են, որոնք ծրագրավորողների կողմից են ներդրվում ԱԻ-ի մեջ, այդ պատճառով էլ նրանց ստեղծած արդյունքների իրավատերը հիմնականում համարվում են ԱԻ ծրագրավորողը, ԱԻ սեփակա-

¹⁹ <https://www.thesun.co.uk/tech/4141624/facebook-robots-speak-in-their-own-language/>, (հասանելի է 26.07.21)

²⁰ Стів Ужов Фёдор Вадимович, Искусственный интеллект как субъект права, էջ 359

²¹ https://en.wikipedia.org/wiki/Edmond_de_Belamy, (հասանելի է 26.07.21)

²² <https://www.artaigallery.com/collections>, (հասանելի է 26.07.21)

նատերը/ներդրողը և ԱԻ վերջնական օգտագործողը²³: Նշված երեք կատեգորիաների սուբյեկտների դեպքերում էլ ընդունվում է, որ իրավունքները տրամադրվելու են իրավաբանական ֆիլցիայի միջոցով, երբ նրանք չունեն ստեղծագործական ներդրում արդյունքի ստացման գործում, սակայն իրավունք են ստանալու: Այս սուբյեկտները դիտարկվում են նաև հեղինակային իրավունքի շրջանակում հնարավոր պաշտպանություն տրամադրելու տեսանկյունից, և ընդունվում է, որ այդ միջոցով լուծվում է «մարդ-հեղինակի» առկայության պահանջի հարցը²⁴: Իսկ այն դեպքում, երբ ԱԻ-ն արդեն ձեռք բերի իրավասուբյեկտություն այն հնարավորություն կստանա իր ստեղծած արդյունքների իրավատերը դառնալ: Այդ դեպքում հարկ է վերանայել օրենսդրությամբ «հեղինակ» հասկացությունը, որ մարդ-հեղինակից բացի, այն ներառի նաև «ոչ մարդ-հեղինակին այդպիսով նոր ճանապարհ բացելով ԱԻ-ի զարգացման համար»²⁵:

Ինչ վերաբերում է ԱԻ-ի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելուն, որպես իրավունքի սուբյեկտ, ապա պարտականությունները չպետք է ավելի նվազ սահմանվեն, իսկ պատասխանատվությունը ավելի մեղմ, նույն պայմաններում մարդու ունեցածից, որպեսզի ԱԻ-ն արտադրողների, գործատուների կողմից չօգտագործվի ավելի հարմար միջոց հնարավոր պատասխանատվությունից խուսափելու կամ ավելի մեղմ պատասխանատվություն կրելու, քան նույն պայմաններում նրանք կկրեին մարդ աշխատողի դեպքում:

ԱԻ-ին իրավունքի սուբյեկտ ճանաչելով՝ լիովին չի լուծվում վնասը հատուցելու հետ կապված հարցերը: Ներկայիս իրավական կարգավորումների համատեքստում այս քայլով միայն հնարավորություն կլինի վնասը հատուցելու պարտականությունը դնել ԱԻ-ի վրա, որպես «էլեկտրոնային անձի», սակայն հարց է առաջանում, թե ինչպես է որոշվելու ԱԻ-ի մեղքը վնաս

պատճառելուց կամ ԱԻ-ն ինչպես է, որպես վնաս պատճառած անձ ապացուցելու իր մեղքի բացակայությունը: Նաև անորոշ է, թե ինչ միջոցներով է ԱԻ-ն, որպես առանձին իրավունքի սուբյեկտ հատուցելու վնասները: Այդ դեպքում հնարավոր տարբերակ է օգտագործել Քաղաքացիական օրենսգրքի այն դրույթը, ըստ որի վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա, սակայն այս դեպքում էլ անհրաժեշտ կլինի ԱԻ-ի նկատմամբ սահմանել յուրահատուկ «հոգաբարձության ինստիտուտ» և օրինակ այն օգտագործողը համարվի նրա «հոգաբարձուն»: Քննարկվում է նաև ապահովագրության կամ փոխհատուցման ֆոնդեր ստեղծելու միջոցով հարցին լուծում տալու գաղափարը²⁶:

Ամփոփելով կարելի է ասել, որ ԱԻ-ի ունակությունը՝ նախկին փորձը ուսումնասիրելու և նրանից սովորելու, անհատական որոշումներ ընդունելու և անկախ աշխատելու մոտ ապագայում կարող է մեծ խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ իրավական կարգավորումների բացակայության պայմաններում ու ստեղծում է վնասների առաջացման մեծ հավանականություն: Նման պայմաններում անհրաժեշտ է ոլորտը համապարփակ իրավական կարգավորման ենթարկել և վերջ դնել այս հարաբերություններում առկա իրավական անորոշությանը: Մինչ այդ ինչ վերաբերում է վնասների պատճառմանը ԱԻ-ի կողմից, դրանց հատուցմանը ու դրանց համար պատասխանատվությանը պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքով, որն ամրագրված է Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների օգտագործման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածում, ըստ որի ֆիզիկական և իրավաբանական անձը, ում օգտին ծրագրավորված է եղել համակարգիչը, պատասխանատու է համակարգչի գեներացրած ցանկացած հաղորդագրության համար²⁷:

²³ Տե՛ս Տաթևիկ Դավթյան, Արիեստական ինտելեկտի ստացած արդյունքների իրավական պաշտպանության հնարավորությունը հարակից իրավունքների ինստիտուտի շրջանակում, էջ 33

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ Տե՛ս նույն տեղը:

²⁶ <https://www.munichre.com/topics-online/en/digitalisation/who-is-liable-when-robots-cause-damage.html>, (հասանելի է 26.07.21)

²⁷ Տե՛ս Čerka, P., Grigienė, J. & Sirbikyte, G. (2015) Liability for Damages Caused by Artificial Intelligence. Computer Law & Security Review. 31 (3), 387:

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հազենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

**ԽՆԴԻՐ ՍԿՍՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ – ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.
«ԾԽԵԼԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՀԱՑՈՒ ԼԻՆԵԼ»**

Խնդրի առանցքը կազմում են անհրաժեշտ պաշտպանության իրավունքի հարցերը: Այդ համատեքստում պետք է կատարել ուտնձգողի հնարավոր արդարացման ինցիդենտ ստուգում, ինչը ենթադրում է ստուգման ողջամիտ քայլերի հաջողականության պահպանում: Այդ ընթացքում պետք է քննարկման առարկա դարձնել «դասական» թեմաներ, ինչպես, օրինակ, անզեն մարդու դեմ դանակ կիրառելու անհրաժեշտությունը և անհրաժեշտ պաշտպանության իրավունքի սահմանափակումը դրա սահարանքի դեպքում: Ինչպես փաստակազմի, այնպես էլ հակաիրավականության մակարդակում պետք է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես պետք է գնահատել ծխախոտի ծուխն ուրիշի դեմքին փչելը:

ГОР ОГАНЕСЯН

Доцент кафедры немецкого и европейского конституционного и административного права, а также международного права в Университете Хагена, Адвокат, член Саксонской коллегии адвокатов, доктор юридических наук (Берлин), магистр административных наук (Шпайер)

**ЗАДАЧА ДЛЯ НАЧИНАЮЩИХ – УГОЛОВНОЕ ПРАВО:
“КУРЕНИЕ МОЖЕТ БЫТЬ СМЕРТЕЛЬНЫМ”**

Основное внимание в данной задаче уделяется вопросам права на необходимую оборону. В этом контексте должна быть проведена инцидентная проверка возможного оправдания посягающего, которая сосредоточена на соблюдении разумной структуры проверки. В этом контексте необходимо рассмотреть такие «классические» темы, как необходимость использования ножа против безоружного человека и ограничение необходимой обороны после провокации. Необходимо также решить вопрос о том, как классифицировать опускание дыма сигареты в лицо как на уровне фактического состава, так и на уровне противоправности.

GOR HOVHANNISYAN

Associate Professor at the Chair of German and European Constitutional and Administrative Law, as well as International Law at the University of Hagen, Attorney-at-law, Member of the Saxon Bar Association, Doctor of Laws (Berlin), Master of Administrative Sciences (Speyer)

**CASE FOR BEGINNERS – CRIMINAL LAW:
“SMOKING CAN BE DEADLY”**

The focus of this case is on questions of the right of self-defence. In this context, an incidental analysis of a possible justification of the attacker is to be carried out, which focuses on adherence to a comprehensible examination structure. In this context, “classic” topics such as the necessity of using a knife against an unarmed person and the restriction of self-defence after provocation must be dealt with. The question of how to classify the blowing cigarette smoke in the face must also be addressed, both on the level of the elements of the offence and on the level of unlawfulness.

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆԶՅԱՆ

Փաստաբան, Դատավորի թեկնածուի հավակնորդ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՍԱԹԵՆԻԿ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Դատավորի թեկնածուի հավակնորդ

